





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ
ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ

1400 ԷՆ 1900

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՐԴԱՐԵԱԼ ԵՒ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԱԼ

ԳՐԵՑ

Յ. Գ. Մ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Զարմազմբյար Յակոբեան Խան

1910

ԳԻՆ 10 ՂՐՆ.



ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 20

9(291,99) (929(47,925)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ

A 46808

1400 ԷՆ 1900

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՐԴԱՐԵԱԼ ԵՒ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԱԼ

«Ոչ եմէ՛ դո՛ւ զարմատն ի վեր ունիս,
այլ արմա՛տն զքեզ:»
Պօղոս, առ Հռոմայեցիս, ԺԱ. 18:

Գ Ր Ե Ց
Յ. Գ. Մ.



Ե. ՊՈՒԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱՆԵՆՑ
1909

Եօրր սարի կ' որ գործիս համանօսութիւնն հրատարակած ենք պատուական Միփարեանց Վեհեփիկի Ս. Ղազարի փակիին սփարանէն, եւ հինգ սարի կայ՝ յուր առած ենք այդ առաջին համանօս սպագրութեանն ապտոռնիս :

Քեզիսկէ մեզի համար արտուոյի գործ մըն էր աւ եւ կարօս՝ շատ կողմերով ամուշ աշխատութեանց, ասկայն նկատելով ժամանակակիցներու վերաբերումով եւ գործնական ու բարոյական շինութեանց տեսակետով՝ ՀԻՆ ՕՐԵՐու մեծութեանց վրայ պատուական այսպիսի Չեռնարկի մը իրական ու աննիշտական օգուտները, մանաւանդ ֆագրաբերուած առաջին փորձին ջերմ ընդունելութենէն՝ ձեռնարկեցինք վերսին խնայգրել ու աւելի ընդայնեայ ասմաննի մը մեջ անփոփել զայն, աւելի՛ խնամով մը դասաւորելով յեզուն եւ շարադրութիւնն ալ, եւ աւելցունելով ի Կ. Պոլիս Հայոց փսղնոց գոյութեան վրայ մասնագրական խոր վկայութիւններ (*), Մեղիփներու Ռուսահայ մեծասուններու եւ Պարսկաստանի հայ ետաներու վրայ ալ զրոյի մը, ինչպէս Անիէն զաղորդաց եւ Էնիստանի ու Իրանսիքիսիայի Հայոց վրայ տեղեկութիւններ: Այնպէս որ ներկայ սպագրութիւնն եղաւ առաջինին կրկնապատկիէն աւելի՝ ինչպէս անոր վրայ քաջիւնած մակերակրկիս աշխատութիւնը, որուն

(*) Հարիւրէ աւելի արեւալ ու ձեռագիր գիրք ու տետրայք այժմ անցնուցած էւ նոյնչափ ալ իրազե տնտեսաւորութիւններ հարցաւորած ենք այս պատրաստութեան համար:

արժեքը գիտնալու եւ այս կարգի նախաձեռնարկ գործե-
րու մէջ ֆրսնողները: Շնորհաւորելի՛ է առ այս նաեւ մեր
պատ. հրատարակիչ Պաշկեց գրաստանն ալ՝ որ գիտցաւ ար-
ժեցունել մեր այս գործը:


Հնարաւոր խնուրքիւն ոճի, վաւերական վիպարութեանց
նաւար խղճամտութիւն, անաչառ ու չկոտր դասասպաններ
եւ արտաբուլղիս ազատական խորհրդածութիւններ՝ շատ մեր
բաւականին՝ յուսանք պիտի կրնան սալ արժանի կարեւո-
րութիւն մը, յաչս յառաջդիմասուր մեծասանց, հին տնտես-
րու, պատմասուր եւ ուսումնասուր ժամանակակցաց, մեր
Զեռնարկիին՝ այս նոր սպարարութեանն ալ:

Աւելի՛ն՝ ժամանակի՛ն (*) ու նորագոյն աւելի՛ մաս-
նագիտաց:

Յ. Գ. Մ.

Սկիւտար, Կ. Պոլիսի

1909, 1/14 Մարտի



(*) Կը խնդրուի Թուրքիայ եւ արտասահման մեծասուններու
եւ ազնուականներու որդիներէն ու պարագաներէն՝ որ բարեհա-
ձին յղել մեզի իրենց պատուական նախահարց վրայ գրաւոր վա-
ւերական տեղեկութիւններ՝ ի պէտք յաչորդ հրատարակութեանց եւ
ի շուք իրենց ազնուական եւ ազնուագործ անունին, բայց մի՛շտ
ճիշդ ու վաւերական համատոտութեամբ, որպէս զի առիթ ըն-
ծայած չըլլանք բարբառանքի եւ խճրճանքի, որ դժբաղդարար
երկրորդ բարձ մը դառնալու վրայ եւ մեր մէջ: ձշմարտութիւնն՝
ազնուագո՛յն ազնուականութիւնն է:

(Գրել շեղանակին ճուսցեկին ի Կ. Պոլիս Զամմաճըլար, Գ. Պա-
շկեց գրաստան):

ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐԸ

Ա.

ԽԵՆՔՈՎ, կամ կորովով կամ հարստութեամբ և կամ ազդեցութեամբ մեծ կամ մեծատուն Հայերն՝ առ հասարակ կոչուած ու ճանչցուած են Թուրքիոյ մէջ՝ Ամիրայ, Մեծաւոր, Չեղկայի, Հօճայ, ⁽¹⁾ Տկովիքաւոր, Մահեստի, Աղայ և չին. Պարսկաստանի ու Հնդկաստանի մէջ՝ Հօճայ, Աղայ, Չասե, Խակ, Տակուսկր և Ռուսիայի մէջ՝ Իշխան, Տոնապետ, Աղայ, Մեղիք, Պարոն, և չին անուններով: Իսկ վերջին ժամանակներ Թուրքիայի մէջ ընդհանրացած է էփենիս՝ յունամբն անունը:

Այս անուններուն մէջ մեծադոյն համարուած են Ամիրայ, Իշխան, Մեղիք ու Խան գրուատանունները:

Ամիրայ.—Պարունակող բառ մը իբրև միւս բոլոր գրուատանուններուն (titre) կամ անոնց մէկ քանիին, որ կամիրտիէ տոնակցին հին մեծութեանց պարտաբազազափարբ: Ամիրայ կը թելադրէ մանաւանդ անձանօթ վազընջուց աւազութեան մը (dignité) գաղափարն ալ բաւական տաստօղից ամէն մեծութեանց պէս՝ որ ունին անձանօթ սկիզբ մը, սկիզբ մը՝ հին թերևս նահապետական դարերու հափ ու մթին սյլ իրական իրենց անփաստ սյլ պատմական հեղինակութեանն համեմատ:

⁽¹⁾ Հօճայ՝ գլխաւորապէս բանգետ ու խորհրդական Ինսցունով:

Պատմապէս ու բանասիրապէս այ՛ իբրև ծագեալ արարական միր, էմիր, Միրիմիրան բառերէն՝ շատ նո՛ր կը թուի⁽¹⁾ ու կը նշանակէ՝ գէթ բառ ձայնականին՝ հրամասար, հրանապէս, եթէ սակայն այդ սեմական ժողովուրդին նախնականին աւանդութեամբ՝ ժառանգութեամբ չըլլայ յաջորդաբար Պաղեստինի ու Միջագետքի Տանուտէրներէն ու նշանակէ, բառ այնմ, նախապէս կամ նախապէս՝ գրեթէ համազօր նախնի Հռոմայեցիներուն և արդի Անգղիացիներուն Պասրիկ ու Լորս կոչումներուն՝ քիչ մը սեղմելով այս բառերուն քաղաքական լայնութիւնն և ՚ի փոխարէն լայնելով անոնց տանուտիրական առումը:

Ամիրայ բառը չէ յիշուած մասննապէս հայերուն մէջ՝ Մագիստրոսէն, Արծրունիէն, Ուռհայեցիէն առաջ⁽²⁾ օրինակի համար՝ Ազգ արար սաննայն մտաւոր ամի-

(1) Թուրքահայերուն մէջ՝ 1750 եւ սուսին և, որ կը շեշտուի այս մակդիրն աւելի պաշտօնապէս առհասարակ: Անկէ առաջ յիշատակագրուած կը տեսնենք՝ հին Թուրքահայերուն մէջ աւելի գործածուած Զօճա, Զեշկայի, Տեօվիքաւոր, Մահեստի, նոյն էլ լին պատմականները, որ կընծայուէին ժամանակին բանիբուն կամ բանասէր կամ հարուստ և կամ բարեբար անձնաւորութեանց, հարուստներն ու մեծամեծներն Հնդկաստանի մէջ կը կոչուէին բարու որ հոմանիշ է պարսկ կամ ամիրայ տիտղոսներուն:

(2) Գը յիշուի նաև 13րդ դարին վերջերը պատմական «Այր մեծագգի» մը Ամիրայ անուն Առփայ գիւղէն, բարեբար ու մեծասոհմիկ մարդ: Տես Ստեփաննոսի Միւնեաց Եպիսկոպոսի պատմութիւնը, այնպէս ՚ի Մոսկվա 1861 (էջ 358): Աւելի հին տեսնենք՝ Ամիրայ տիտղոսին հաւասարագոր բառեր երկն՝ իշխանաց իշխան, հրամանատար, մարզպան, ոստիկան, կուրապաղաս, պատրիկ, Մագիստրոս, տոխ կամ տուկ, կոմս, հիւպատոս, Վիս, Սեփասոս, որ ֆաղասներու և ամբողջ գաւառներու կիշիւէին: Իրենց գլխաւոր կայաններն էին հին տեսնենք՝ Դուրի ու Նախիչեւան, որ դրամ ևս կը կոչուէին: Այս դրամներուն ամենէն հինը կոչուած է 717-718 թուականներուն ըստ Զրեհն դրամագէտին:

բայցն) . «ո՛վ մականունդ ամիրայական սերի յԱզրաճամէ»
Մագիստր . է , որով կրրճանք բսել թէ Նեղինական այդ
գաղափարէն շատ ետքը մտած է մեր մէջ ամիրայ ա-
նունը : Տե՛ս նաև բառն Ամիրայ՝ Հայերէնի փոխառեալ
բառերու ուսումնասիրութեան մէջ Է . Հիւպըմանի (էջ . 54)
տպագր . Վիեննա 1894 :

Իսկ Մէլլիք կոչուին՝ աւելի՛ չին է ծագումով և իր
նշանակութիւնը ծանօթ է սեմադիտաց , մանաւանդ եր-
բայագիտաց , վասն զի բուն երբայական բառ է ու ամի-
րայէն աւելի բարձր նշանակութիւն ունի : Միւս կցորդ
կոչուիներն— Հօճա , Աղայ , Տէօլլէթու որ ևլին յայտնի
են , ինչպէս իրենց մականալ նշանակութիւնները :

••

Ունեցած ենք մե՛նք ալ Ամիրաներ , և անոնց ա-
նունները լծորդուած են՝ մանաւանդ թուրքաճպիրուն՝
պատմութեան Նեա 1550 էն առջին մինչև 1866 կամ
1870 , մինչ մնաւ Ամիրաներուն իրրև (1) վերջինն ու
մեծահարսն ալ — Կարապետ Ամիրան Պալեան , արքունի
մեծ ճարտարապետն իայ , խաչօրն :

Ըստ այսմ՝ ՚ի չղոյէ ժամանակակից ամիրայի արդի

(1) Վասն զի Կարապետ ամիրայի ևսբր՝ 1869ին վախճանած է
ամիրայապետ Տասեան Յովհաննէս Կէշը , վառօղակէ արժուի ու
բարեւար Ս . Փրկիչի Հիւանդանոցին և մասեակազրական ու դրպ-
րոցական շատ մեծարկութեանց : Յովհաննէս Կէշ Տասեանի մա-
սեակազրական մեծագն և յիշատակարաններն են՝ Է . Յովսէփ Գա-
րըճեան Միխրաբեան վարդապետին երկհասար ընդարձակ Տիեզե-
րական Պատմութեան ջպագրութիւնն (ի Վիեննա 1849) , որուն վեր-
ջին հասարը դեռ լոյս չէ տեսած մեծ դժբաղդութեամբ և ըն-
դարձակ աշխարհացոյցները՝ լոյս տեսած Վենեսիկի Ս . Ղազարու
Միխրաբեանց վանիկն : Յովհաննէս Կէշ Տասեան մերք կոչուած
է Ազգապետ ևս :

սերունդը չէ՛ տեսած ու չօչափած ամիրայ մը, չունի ամիրայութեան վրայ կայուն՝ այսինքն՝ զերի առնուած գաղափար մը, ժողովածու գրաբառ պատմութենէ (1) մը զատ, որ ամիրաներու էութեան ու երանգին վրայ ոչինչ կրա՛յ իրև պատմիչ քննասէր :

Ամիրաներուն դիրքն ու անունները կը պատկերին նոր սերունդին երևակայութեանը մէջ, ազդեցութեամբ անհաւաստի զրոյցներու և ծայրայեղ կուսակցական պատմութեանց, համերական հին արտրածներուն կամ Արաբական զիշերներու արուայիկ պարիկներուն խօլ դիմերովը, այնչա՛փ սիրած ենք Ֆրանսական հետեակ երևակայութեանց անիր վէպերն ու այնչա՛փ անհոգ մնացած ենք մերձաւոր ու իրական անցեալին ու ժամանակակից կրցորդ պատմութեանց : Ամիրաներուն և սոս Կասարակ հայ մեծատուններուն վէպը՝ Զօլա՛ն իսկ չգիտէր ու չէր կրնար տալ մեզի ինչպէս որ սրժան է :

Այս անհոգութեան նշանակելի պարագան՝ մրայն Ռուսահայ մեծկակ գրիչ մը դիտել տուած է, ու՛ իր կարգին՝ մասնական պատմութիւն մը գրած և հրատարակած է իրեն ծանօթ Պարսկաստանի և Մուսսատանի հայ մեծատուններուն վրայ :

Ու ես՝ այդ իրական անցեալ կենցաղներէն կը համարձակիմ փորձել այսօր՝ ներկլի ու տուեալ հորիզոնիս մէջ՝ բանալ ցուցադրել փոքրիկ սրահ մը, վայրիս ժամանակիս ու պարագաներու թոյլատրածին չափ սրահակ մը, զոր ուրիշ լայնագոյն պատահներով թերևս կարենամ ալ ընդարձակել ու վերածել մանրանկար ցուցադրութեան մը «հարցասիրելով մեր հայրերը, որ և պիտի պատմեն ու մեր ձերերը, որ պիտի ըսեն» : (2)

*,

(1) Պատմութիւն Աւեսիս Կարժայեսի Պերպերեան, 1772—1860:

(2) Արկր. Օրինացն Մովսէսի ԼԲ. 7—8:

Արդի սերունդին բարերազդներէն համարուելու եւ՛ որ տեսած եւ՛ խոր ազայութեանս մէկ հատիկ ջոջ ամբարաց մը, ու այսպէս՝ պիտի կրնամ տալ աղօտ պատկեր մը զազափար մը իր ու թերեւս՝ իրմով՝ միւս ամիրաներուն և մեծատուններուն ալ կենդանագիրներուն վրայ։ Նոյն յիշեալ Կարապետ ամիրայ Պալեանն էր այն իմ տեսածս։

Հազի՛ւ հինգ-վեց տարեկան կոյի՛ նրբ լսելով իրմէն շատ ակնածողներուն շշմջիւնը՝ թէ Կարապետ Ամիրան կամ աղան (սո՛սկ, աւանց յատուկ անունի, աղա՛ն) (կուգայ կոր), վազեցի հասայ Գուղկունճուղ-Իճատայէի զատի վերին գլուխը, ուրկէ պիտի անցնէր՝ ներսէս Աշտարակեցի կաթողիկոսին բարձր թելազրութեամբն և Սէթեան Յովհաննէս վարդապետին ու Տէրոյնեց Յովհաննէս Պրուսացի պատուելիին աստուածաբանական ոչ այնքան բարձր սուաջնորդութեամբը՝ Շահնազարեան Կարապետ Էջմրածնի վարդապետը զատող և զատապարտող ամիրան (1) համարձակ ճէզայիրեան Մկրտիչ ամիրային համեստուկ ստիք բարեպաշտ, վարպետ մարդը։

Ինք ձիաւոր էր այն երեկոյ, ու ձին՝ պարզօրէն համեստեւած՝ կրնթամար միջակ արագութեամբ զատ ՚ի վերն ՚ի վեր. ետեւէն կը հետք հետեւակ իր անբաժան ծառան կամ հեծուղը՝ Գասպար. քանի մը անցորդ հայեր ալ բարեի կեցան հոն անցողարար։ Խալիս ամիրան իր ձիուն վրայ ուղղաբերձ հեծած՝ վաթսուն և հինգնոց մը կը թուէր. Գրիգոր Էֆէնտի Գարակէօզեանի ձիաւոր գրնացքին բուռական նման ձուլուածով ու սարուածքով մը, բայց աւելի՛ երկայնահասակ, աւելի՛ տարեց, աւելի՛ յայլթ, ու աւելի՛ և աւելի՛ հանգուշն։ Ունէր լայնա-

(1) Տե՛ս այս դատասանին նկարագրութիւնը մեր Յովհ. Տէրոյնեցի Վարթիկն մեզ, ՀԻՆ, ՍԲԵՐ։

չուրթն վեպի մը ներքև կհատլի զսպաւած ճակատ մը ան-
էիւնաւոր, թանձր լուրջ և բաշակաց յօնքեր, ճերմակ ու
յորդկէկ պիսեր, նոյն դոյնով և թուլցած այտեր, բե-
րանն ալ՝ բաւական խոշոր կլոր գլուխը բովանդակ՝ որուն
երևեցուցիչ մտաին վրայ ձևփուած էր ճոխ և դո՛ և ծա-
ծուկ խինդ մը, ճարտարպետօրէն յեցած հաստուն վի-
զի մը վրայ՝ կը ճօճեցունէր ասիական ու բիւզանդական
խառնուածոց ազնուականութիւն մը, հրաման մը: Շրք-
թունքը կհասարաց ու աչքն համարձակահայեաց՝ ունէին
դիրք մը ամէնապատրաստ յանկարծ բսելու և ակնարկե-
լու վեհարար յինչ է ան, ծօ՛ (1), որուն՝ գէմի աղերսա-
ւորը պէտք էր պատասխանել խոնարհութեամբ և բսել
անմիջապէս յինչ: Ամիրան հազամ էր այն օրն (ու թերևս
մ'իշտ ալ կը հագնէր) զուգուշերալը բալթոյ մը պարզ, և՛
առանց արդուկի՝ նոյնպէս պարզուկ օձիքով ու միժողոյն
փողկատով չրջապատած էր իր մազառուն փողը: ձևաքն
ալ ունէր բարակ շիղ մը երերուն, որ կը ծառայէր իրրև
խարաղան: Այս ձևերն էին՝ որ ևտքերը, գրեթէ նոյնու-
թեամբ, օրինակուեցան իրենն ատորադրեալներէն ճարպիկ ու
խորագէտ յաջորդողէ մը(2), որ գիղեց իրր իրեն չափ հարբա-
տութիւն այլ չ' ունեցաւ իրենչափ անուն և տղղեցութիւն:

Ամիրան բարեւոյներուն հետ՝ ևս ալ կանսմական առ-
ուղողով մը երկու երեք վայրկեան կեցոյ ու գիտեցի
մեծարեալ ձիաւորը, որուն հետ մեր ընամարքն ալ ունէր
ինամեական կցորդութիւններ և որուն վրայ կը պատմուէին
մեր սուներ կարգ մը ներքին բաներ, ու կը պատմուէին
կը աւեւն ու կարձագանդեն մինչև ցարգ: Այ՛ո՛,

(1) Ծօ՛, կոչականը մինչև 1880 սովորական էր թուրքա-
նայերուն մէջ առ ստորագրեալս ուղղեալ՝ ոչ այնքան ազնուարար,
չստ սուրմ յունական զօ՛ (կենդանի իմն) կոչուսկն անանցում:

(2) Գրիգոր ներսիսեան:

տեսայ ու դիտեցի Կարապետ ամիրան՝ ո՛չ Անաքարսիսի մը ո՛չ ալ Պլուտարքոսի մը աչքով, այլ մանուկ համար-
ձակութեամբ՝ մինչ թագիս դպրոցէն ու Արապ զատէի⁽¹⁾
բլուրէն անդին չէր անցներ մտայի՛ն ալ մարմնակա՛ն ալ
տեսութեանցս հորիզոնը. դիտեցի սցղպէս, և՛ տղայ՝
բսի իւրովի — Ամիրան աս է եղէր — ինչպէս զիս ընթեր-
ցող աղաքն ալ թերևս ըսեն հիմայ :

Տարի մը չէր անցած՝ երբ ըսուեցաւ թէ Կարապետ
ամիրան յանկարծամա՛հ եղեր է : Եւ որովհետեւ լուսան-
կար չէր հանած՝ քաշեցին իր պատկերը՝ Պէշիքթաշի տանը
մէջ՝ իր անշնչացած մարմնին վրայէն : Այս հակիրճ նկա-
րագիրէն աւելին տեսնել փափագողը՝ կրրնայ դիտել այդ
մեծագիր պատկերն ամիրայական Փափագեան Գէորգ
էֆէնաի տունն ՚ի Սկիւտար Թափհանէլի օղլու, կամ
անկէ օրինակուածը հիւանդանոցի ընդունելութեան սը-
րահը :

..

Այսպէ՛ս, վաւերական ամիրաներուն իրբև վերջինն
եղաւ ճարտարապետ Կարապետ Ամիրան Պալեան, որդի
Գրիգոր Ամիրայի Պալեան և որդեկորոյս հայրը վաղամե-
սիկ Նիկողայոս աղայի Պալեան՝ հայր և որդիք (Նիկո-
ղայոս, Յակոբ, Սարգիս) ճարտարապետողք Զրադանի ու
Տոլմապահձէի գլխավան պալատներուն և ամէնն ալ

(1) Ինքեցիկ անստոնս ու պատհալար բլուր մը Սկիւսարի
վրայ, ուրիկ կը դիտուին՝ զքօռեցիկ սիրունութեամբ՝ Վոսփորի
գլուխին երկրէ տեսարանները : Այս բլուրին ստորոս արունքն է
(ըստ մանաւա՛նց Պողիբոսի) որ ի հնումն Կով կամ Յով ևւ նոր
աշեններ Լօֆիւզ Լիմանը կոչուեցաւ, ևւ ուրիկ տեղի ունեցաւ
առասպելեայ ժամանակներում Յովի կամ Կովի անցնն ու եղաւ
պատճառ ամբողջ Թրակեան նեղուցին Վոսփորոս անուանակո-
րեանը : Վոսփորոս՝ կը բարգմանուի յունականէն արջառի
անց :

սերունդ 18րդ դարին սկիզբները Պոլիս եկող Պալեան ճարտարապետի մը :

Ամիրաներուն իբրև վերջինն՝ ինք կարապետ խալ-
փան . իսկ առաջինը , իսկ անոնց սկիզբը , ծագումը :
Կորդեան հանգոյց , կրեստի՝ առեղծուած . ծագումը՝
մո՛ւթ է շա՛տ մութ , նահապետներէն ալ մութ , այնպէս
որ քանի՛ տղայանանք հոս և որչա՛փ ալ ծերանանք՝ չենք
կրնար գիտնալ ու ըսել կարգ մը բաներ նիւթ հայթայ-
թելու համեմատական ամիրայաբանութեան ալ , ինչպէս
տասնիններորդ դարու վերջին մօտակէր ամէն բանին՝ նոյն
իսկ Բացարձակի՛ն անգամ համեմատականն ստեղծել ,
երեւակայել , քննել ու բանաքննել և քննափետել անգամ :

Սակայն ես՝ ա՛լ ձերացո՛յ , պատմական պատրաս-
տութեանց համար , յիշատակարան նայելէն , ձերունիներն
հարցասիրելէն , ու ձեռք բերած արդիւնքս չփոխարիներ
առ այժմ յոգնութեանս գէթ հարիւրին տասն իսկ : Հո՛ս
չողխացած հո՛ն կարծրացած վիմատառեալ այդ քրտինք-
ներէս ինչ որ կրնամ քամել ու համառօտել՝ կը սերմա-
նեմ ա՛նտ պատմական ատեանը , սա միայն խնդրելով որ ,
ըստ աւանդական ծոյլ սովորութեան , ինք բանաբաղողն
ալ ձանչնայ գէթ ու խոտտովանի անոնց յարզն ու հանա-
ծոյ աշխատութեանցս արժէքն՝ ըստ որակին ու վաստա-
կին քան ըստ քանակին ու դաստակին . հապերախառնայ
ընկերչակօրէն , կարգ մը աննիլ բանաւթաձառներու պէս ,
որոնք սիրեցի՛ ես քան զեղբա՛յր , որոնցմէ խաբուեցա՛յ
ու անպատուեցա՛յ դարձեալ ես քան զկոյր : Օրուա՛ն
մարդիկ !

Բ.

Պատմական այս ընձեռուածին (manuel) սկզբնական դժուարութեանցը մէջ՝ մեր գլխաւոր տգրիւրներն եղած են, վաւերական զրոյցներու մը հետ, հինօրեայ կոթողներ, խաչքարեր, եկեղեցական պատկերներ ու արձանագրութիւններ և այն յիշատակարանները, որ կը գտնուին 18րդ 19րդ դարերուն Պոլիս տպուած գիրքերուն վերջերք Գործիւ մէջ, մասնաբար ակնարկելով հանդերձ Ռուսաստանի Պարսկաստանի ու Հնդկաստանի հայ մեծատուններուն, կը յիշատակենք գլխաւորապէս ու աշխարհակցապէս Թուրքիայի մեծերն ու ամբրաները: Պէտք է գիտնալ նաև ուշիմ պատմասիրաց՝ որ բերանացի աւանդական զրոյցներ քննած ատեն՝ չուզեցինք՝ անձնաբ տոճի սերունդին իր նախորդներուն վրայ պատմած ամէն բաները վաւերական վէպեր սեպել, ոչ ալ բանի տեղ դնել հակառակ վկայութիւնները՝ խրաչելով միտպէս առձմային մրտահաճութիւններէն կամ տակարհուածութիւններէն ու նախանձի հակազրոյցներէն:

Իժազգարար այդ զրոյցները, կոթողները, խաչքարերն ու յիշատակարաններն ալ՝ լոկ անուններէ տիտղոսներէ ու շարք մը մահիսէսիսական պարսզաներէ զատ՝ կարևոր բաներ մը չէին յիշատակեր: Պոլիսի տպագրութեան սկիզբն ալ 1567 թուականէն անդին չանցնելով՝ հարիւր տարուան պակաս մը կը մնար Թուրքահայերուն համար, զոր ըստ արժանւոյն չկրրցան լեցունել ու անդութիւնն և ձեռագիր տետրակներ:

Յիշատակարաններուն անտեսածը լեցուցինք բազմանուտ բանդէտներու և գրազէտներու հատորաւոր գոր-

ձերէն ու ժամանակակից արձանագրութիւններէ՝ քննուկ
խակելու մօտ դժուարութեամբ, այդ հարիւր տարուան
թերոյթն ալ՝ փորձեցինք պարտրկել կենցաղագէտ ձերու-
նինհրու մէկ քանի ձեռագիրներու և պատմական հետե-
ւան գնացքի մը խելամառութեանց միջոցով, որ ահա-
ւասիկ : —

Չգիտենք հաւաստեօք՝ թէ 1453ի Կ. Պոլիսի ասումին
ականատես Արքայապետին յիշատակած «Աստ-
ուածատուր Սաթըլմըլինն, և Սիմէոն բարի Փաշին և պա-
պայի որդի Այվասն (ու) պարոն Գէորգ Եշխմ հաճին⁽¹⁾»,
ընդամէնը չորս հատիկ տաղաչափեալ անկիրացիներ,
նաև պրուտացիներ իրենց տունն ու տեղը ձգելով Կ. Պոլիս
չեկած, Երևելի տունն էին՝ աշխարհակալին կամ իր գաղ-
թեցուցիչ պաշտօնեաներուն ու շաղրութիւնը գրուելու աս-
տիճան : Այլ հաւանական է :

Նաև շատ հաւանական է՝ որ նոր Սասնայուլի ճոխու-
թիւններով շնորհներով ու փառքերով՝ իրենք ու իրենց
գաղթակից այլընձեռամբի⁽²⁾ հայերը մեծատուն ըսուե-
լու աստիճան Երևելի եղան ու հարստացան ալ քիչ ատե-
նի մէջ :

Ասանցմէ շատ աստջ՝ մինչև 6-7րդ դարերուն կը
հասցունէ պատմութիւնն Հայերու գոյութիւնն ի Կ. Պո-

(1) «Եւ ոչ վիայն Թուրքաց ազգին,
Այլ զԲրիտանեայսն ի մէջ բերին,
Ի Բաննուր Լոկսեմբերին
Չորս Հայ ՚ի յԱնկիրոյ բերին,
Ասուածատուր Սաթըլ Միշին,
Եւ Ափեհոն բարի Փաշին,
Եւ պապայի որդի Այվասն,
Եւ պարոն Գորգն Եշխմ հաճին :»


—Չեռագիր Արքայապետի վարդապետի, տղ 260—268:

(2) Կ. Պոլիսի ճին և պաշտօնական բաժանումին կոչումն է :

լիս, և բաւական թիւով, 2-3000ի չափ՝ արձեւատար, դորձակատար, զինուորական⁽¹⁾ և կրօնաւստ'ր ալ (Չրպըք-լըյի Ակումբաներուն միջնադպրոցին վանքին, Սկիւտար Չամլըճափ և ուրիշ վանքերու մէջ)⁽²⁾, յորս կան նաև

(1) Histoire d'Attila et de ses successeurs, par Amédée Thierry (Vol. II, V.me édition, page 96-97) Տասնեւեներորդ դար Գրիգոր Վկայաւորի օրերէն, որ ինք ալ եկաւ Կ. Պոլիս, Կիլիկիայի կողմերէն շատ Հայեր կերթեւեկէին Արեւելիք նոր Հասըր: 11րդ դարին եւս Լեւոնթիմուրի հրոսող արշաւանքին ժամանակ բազմաթիւ Հայեր գաղթեցին Կ. Պոլիս, Վանքէն, Սեբասիայէն, Կարինէն, Թոֆասէն ու Ակնէն (Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ Մեջիսեղ Մուրաշեան վարդապետի, էջ 489): Ուրբերորդ դարին ալ Պաւլիկեանք, որոնց մէջ կային նաև շատ Հայեր, ընդ երկար կորողելէ ետք իրենց դիմակալութիւնն հանդէպ Կ. Պոլիսի հալածող յոյն կայսերաց Արզէոս յերան, Սեբասիայի, Կարինի ու Տիվրիկի կողմերը՝ Կոստանդին Կոպրուիմոսի ձեռնով վերջապէս բերուեցան ու հաստատուեցան Կ. Պոլիս ու Թրակեան միւս խոյսները, ուրկէ իրենց վարդապետութիւնն անցաւ Եւրոպա (սե'ս Կեղրեմոս և Տարեգիր Թեոփանեսի): Եւ ստանք միշտ գաղտնի յարաբերութեան մէջ էին իրենց հայաբնակ գաւառներու եղբարց հետ: Աստի հաստատուեցան նաև 11րդ դարին Եմոս (Պալման) յերանց հովիտներուն և Փիլիպպիի մէջ, ուր վայելեցին աւելի՛ բոյստութիւններ ու եղան միջնորդ հին Մանիքեցոց աղանդին Եւրոպայի մէջ արածուելուն. (Gibbonի Decline and fall ch. LIV): Հին Կ. Պոլիսի ու Եւրոպական Թուրքիայի Հայոց մեծ մասն հաւանական է՝ որ այդ ժամանակներէն գաղթած ըլլայ:

(2) Հաւանական կը բուր նաև մեզի բէ, գէք 11րդ դարէն ետք, մանաւանդ Լուսինաց Կ. Պոլիսին տիրելու ժամանակները, կային մեկ քանի եկեղեցիներ ալ նոյն մայրաքաղաքին մէջ Հայոց սեպհական, նկատելով մանաւանդ աշխարհի յորս կողմերէն Կ. Պոլիս երթեւեկող այլեւայլ ազգաց հետ Հայերո՛ւն ալ իրքեւ վաճառական իրքեւ զինուորական Կ. Պոլիս յաճախելն ու հոն հաստատուիլը: Եւ Հայերն առանց եկեղեցի յիստորացանելու չն'ն ճեղաւորուիլ ոչ ուրեք: Նիկիոսաց Կ. Պոլիսի մասնակցութեան պատճառից



կարեօր անճնաւորութիւններ, գիտուններ, վաճառականներ սեղանաւորներ ու հողատէրներ, որ կրտսէէն Գոմս կամ եփհնիսի, բաւեր մեծատուն և ասիրաց նշանակող ըստ յոյն ճաշակի(1) : Ինչպէս կայի՛ն նաև երեւելի հայեր իրենց բնավայրէն դուրս բիւզանդեան շատ երկիրներու մէջ՝ գրաղելով պաշտօնէութեամբ ու մեծ առևտուրներով (2) :

(Առ Gibbonի Vol. 4. page 196) կը պատմեն դեպք մը՝ որ բաւական լուսեղ ճառագայթ կարճակէ այս հաւանականութեան ալ վրայ : Կ. Գոլխի լատինական նուաճումի փորձերուն միջոցին՝ արեւմտեան բանակէն ֆանի մը հետաքրքիրներ այցելութեան մը կը մտնեն մայրաքաղաքին պարիսպէն ներս, ու՝ երկրորդ բլուրին և առաջին բլուրին միջև բաղի մը մէջ՝ տեսնելով մըզկիթ մը կամ սինաուն մը, ներս կանցնին ու շատ կը գայքակողին հոն հիասքելով՝ որ այդ աղօթարանին մէջ կը պաշտօնի մի միակ Աստուած մը առանց Ռդուոյն Ասուծոյ և Երրորդութեան յիշատակի : Լեզուի ու սուրի կոխ մըն է կը ծագի հոն իրենց ու սեմական կարգացողներուն միջև, որ կը դիմեն անձնապաշտպանութեան : Արեւմտեան հետաքրքիրներու մտնանդութիւնն հրճողութեամբ մը վախճան կուտայ այս կոխին, և ուր օր ուր գիշեր լափշիզող կրակը նաւահանգիստէն միջև Գոպոնեսիս կայրէ կը լսփի ֆաղաքին արեւելեան կողմը : Արդ, հաւանութենէ կը հզօր հաւաստեօք կրնանք մտաբերել՝ որ այդ մզկիթին կամ սինաունին հաւասար իրաւունքով զոնէ մէկ հայ եկեղեցի մըն ալ կար այն տեսն Ռուս աշխարհաքաղաքին մէջ, և անշուշտ այրեցաւ անհետացաւ այդ մեծ հրդեհէն, կամ այդ եկեղեցին բերեւտ էր Թոփ-գարուի կողմերը գտնուած հին Ս. Սարգիսը : Դարձեալ այս դեպքէն իջեալ Գալստիոնի եղբայրն Ներսիս 20000ի լսփ Հայերով կրպակուր է Կ. Գոլխ, Ելլեսպոնի ներսերէն յօգնութիւն իր եղբօր նշանակման. Gibbon անց էջ 221) : Այս Հայերն ո՞ւր կաղօթէին և լիայի՞ն անոնց մէջ մեծաւորներ ու մեծատուններ :

(1) Մասթոնու Ռոհայեցի գլխաւորապէս (էջ 353 այ. Երուսաղէմի) կը շեշտ կուտ մականունը. դուքս կը կոչուէին նաև 10րդ դարին Անտիոքի Բիզանդեան կառավարիչները :

(2) Հեւայ անապարհորդ ուարթի մը՝ Բենիամին Թիւսկի՝ 12րդ

Ասոնց մէջ գլխաւոր տեղ կը բռնէ Կիպրոս կղզիին գաղթականութիւնը, որ կը սկսի իններորդ դարէն և որուն մէջ պակաս չէին ըլլար նշանաւոր անձնաւորութիւններ — պարոն Լեւոն Համացի, Տիկին Սուլթան, Յովհաննէս Տիբերիացի, Թորոս Կոստանց, Մայրապետն քոյր Յիսի (1308), մայրապետ ազնուական Մարիամ (1310) ևյն⁽¹⁾ :

*, *

Պոլիսի վերջին առումէն 60ի չափ տարի առաջ է Ղալադիա եկեղեցի շինող ձենուլացի Կոնս վաճառականը, որուն համապատիւ հայ կոմսեր կային կամ Խրրիմէն անոր հետ գաղթեցին առեարական ու սեղանաւորական այդ Յայնկոյսը⁽²⁾, որ գաղթական (Կորուս) գաղութէն մինչև մեր օրերն՝ նին հեթանոսութեան ու քրիստոնէութեան վաճառաչան քաղաքիկ մը դարձած է բաղմամարդ ու բազմադարձ և ուր կը բնակէին բնազանդական ճոխ պատրիկները⁽³⁾ : Անոնք ալ՝ ժամանակակից մեծատուններուն նման՝ ունէին իրենց հետեւորդ Հայերն ու փոքրիկ կազմակերպութիւն մը տանուտիրական, բայց պատմութիւնք

դարին այցելով Կ. Պոլիս կը նկարագրէ զայն ամբաւ սխալաշուժով իրել «դշխոյ փղափայ, ուր արուի արի կը հաւաքուին Ռուս պետութեան թոյր հարկերը, և անոր քարճարերձ աշարակներն ու մթերանցները լեցուն էին մեծաքանակ ծիրանիով և ոսկիով : Հոն բազմաթիւ էին վաճառականներ Պարսկաստանէն, Եգիպտոսէն, Ռուսիայէն, Հունգարիայէն, Իսպիանիայէն ու Սլաւիայէն, ծովէն ցամաքէն հոն գալով», և այս վաճառականներուն մէջ, մանաւանդ Պարսկաստանի, Ռուսիայի, Եգիպտոսի վաճառականներուն մէջ, կային անշուշտ հայ քանգարներ ալ :

(1) Տե՛ս Կիպրոս Կղզի (էջ 49—60) :

(2) Բերս, որ Ղալաթիայի տեղանիշ անունն էր, կը նշանակէ յունարէն յայնկոյս :

(3) «Histoire d'Attila.» A. Thierry (Vol. II page 88) :

մանրաբար ու վաւերաբար չեն արձանագրած ասոնք կամ չեն հասած մեր ձեռքը: Յայտնի գիտենք միայն՝ որ այդ Յայնկոյսին վաճառական Հայերուն համար Կաֆայի Հայերը չինեցին երկրորդ անգամ Ս. Լուսաւորիչ եկեղեցին՝ խոնարհ կոթիկ սճով մը (1):

(1) 1436ին՝ ըստ վիճագրեալ արձանագրութեանն: Կը թուի դարձեալ թէ աւելի առաջները, Պոլիսի կողմը, թերեւս Թօփ գարուի հին Ս. Սարգիս եկեղեցիին տեղը, կար հիմնաւորց հայ եկեղեցի մը: Տասնեւհինգ ու տասնևվեցերորդ դարերէն պսակալ, իսաւրացի վաճառականներու, արուեստագէտներու եւ մեծ գրագէտներու աշղեցութիւնն հանուր Եւրոպայի, մանաւանդ Անգղիայի ու Եւրոպական Թուրքիայի եւ Կ. Պոլիսի վրայ նշանակելի եղած է: Այդ դարերուն Հենրիկոս Ը. եւ կարծեալ Ռոշուէյ Անգղիայի մէջ հզօրացաւ պաշտպան կեցած եւ իսաւրական զեղարուեստից, ու մանաւանդ վերջինը թերեւ տուած է շատ իսաւրացի արուեստագէտներ, շեղադարձելու համար Hampton Court Palace: Ենորհիւ իսաւրական զեղասուր ճարտարապետաց՝ կոթական հին ոճը տեղի կուտար նոյն ասեճը վերածնութեան ոճին. իսաւրացի բժիշկներ մուտ գործեցին Թիւսոտ թագաւորաց եւ արժուականներու սպարաւեր: Իսաւրացի սեղանաւորներ, երգահաններ, սուլտանաւարակներ, պարապետներ եւ սյարսիգպաններ կը մարզէին բրիտանիկ ազնուականութիւնը, որ իրեն կրթութեան շուրջին կը համարէր իսաւրական լեզուին ուսումն ալ: Եւրոպաց բողոքականութեան վերջնական յաղթանակն ու Մաքսիականութեան խստակրօնութիւններն հազիւ կրցան վտարել Անգղիայէն իսաւրական այս հզօր ներգործութիւնը: Այսպէս կը գրէ Nuova Antologia իսաւրական հանդէսին 1906 Հոկտ.ի թիւը (տես ի Review of Reviews, 1906 նոյնթիւ թիւը, էջ 527): Այդ ու աւելի՛ հին ժամանակէն՝ իսաւրացաց ազղեցութիւնն ի Կ. Պոլիս ալ մեծ եղած է, մանաւանդ ի Դաւադիա, ուր կը գործէին ձեւնովացիք եւ վերերը, արդի Բերան, ուր կը բնակէին ժիր եւ ճիւղ Վենետիկցիք. եւ այդ պատճառներով իսաւրական լեզուն Կ. Պոլիսի Բրիտանականութեան, Շրեաներուն եւ Հայերուն ալ մէջ եղած էր հրապարակի գործնական լեզուն, եւ մեր հին հայ մեծատններն ու մեծ գրագէտները սաչ կը խօսէին բուսանական քարաքար, սմանի սաչ կը գրէին ալ: Այդ օրերէն կկամ հասած եւ առեւտուրի լեզուին մէջ ցարդ ընթացիկ կոկիկ կրթիկ բառերն իսաւրական:

Ուստի՝ գալով Կ. Պոլիսի վերջին առումին ժամանակները՝ կը գտնենք որ հին տուներուն հասուկարիք շարունակութիւններէն զատ 'ի հինն փոքր Ասիա, որոնց մեծ մասը կոչուեցան իշխանաւոր, տօլիկարաւոր և միւս փոքր մասերը՝ Տեր, Պէլ, Հօնայ, Աղայ, մերթ նաև Պարուն, աշխարհակալ Սուլթան Մեհմէտ Բ-ի պաշտպանութեան արժանացող Կ. Պոլիսի Յովակիմ առաջին պատրիարքին հետ (1) 1461ին Կ. Պոլիս եկող՝ պրուսացի, գաղատացի, ամասիացի, արարկիրցի և սպա գործմանցի (2), թոքաթցի սամաթիարնակ(3) հարիւր հարիւր-

(1) Գրուածքներուն մէջ կայ զրոյց մը, ըստ որում Կ. Պոլիսի այս առաջին Պատրիարքը, որ Գրուսայի եպիսկոպոս էր առաջ, շատ սուր վիճակէ մը եկեղեցական դառնալով եպիսկոպոսացած էր...

(2) Իւրաճանի աւելի՛ հին Հայերուն թաշակրաց մասուցած դիւրութիւններն ու ժողովուրդներն ալ՝ անշուշտ շնորհելուած էին Լատինաց կողմէն նոյն Հայոց գլխաւորներուն տեղ ու դիրք մը Կ. Պոլիսի մէջ, երբ Լատին Պարունայ (վեներեկեցի, ձեւովացի եւայլն) կը տիրէին Կ. Պոլիսի 12րդ դարէն սկսեալ:

Իւրճեալ Լատինաց Կ. Պոլիսէն վնասուելէն ետք, յունական իշխանութիւնը փոխափականութեամբ մը թազմացուց Կ. Պոլիսն աւելն կարգի ժողովուրդներով, մանաւանդ արեւելիական գաւառներէն (Gibbon Decline and fall. Vol. 4, page 235):

13—14րդ դարերուն Զմիւռնայի մէջ կը յիշուին, վաճառական Ծրակիաց հետ, վաճառական թազմաթիւ Հայեր ալ (Gibbon, անդ էջ 278):

(3) Լ. Դուկաս Ինժինեան, աշխարհագր. եւրոպիա (հատ. Ե. էջ 131): Սամաթիայի եկեղեցիին շուրջի թաղն հայարնակ միւշեւ 1805 թուականը կըսուէր 'Իւրաճան մահալլէսի: Իսկ օսմանեան մեծանուն պաշտպարի Յ. Լամմեր՝ կը պատմէ Գոսսանդիկուպոլիսի 15րդ դարու գաղթականութիւններն այսպէս, — Մահմէտ Բ-ի նեղուած գաղթականութեան եղանակը շատ սարեւ էր հին գաղթականութիւններէն. իր աշխարհակալութիւններն ի հիւսիս եւ յարեւելս Ասիայի ի հարկէ պիտի շնչունէին նոր ժողովուրդներով իր նոր մայրաքաղաքը. Գոնստի, Կապադոկիայի, Սեր-

քսան առն Հայերէն երեկիները՝ չնոր՛իւ նորաշուք պատրիարքութեան ու պետական վստահեցնողութեանց ստացան, իբր անմիջապէս, եկ ու տեղական ինչ Հայերուն վրայ և անոնց նշանաւոր ջոջերուն հետ խել մը առատ նախապատուութիւններ ու հեղինակութիւն մը՝ արուեստական տո՛մային ու եկեղեցապատական գործերու մէջ :

Եւ ասո՛նք թուի թէ էին Կ. Պոլիսի մեծատուններուն ծանօթ սկիզբը, որ արագ արագ գրաւեցին Կաթողիկոսութեանը արհեստաւոր ժողովուրդէն բարձր ու մեծապատիւ դիրք մը՝ թեարկութեամբ մանաւանդ օսմանեան աւագանիէն սմանց : Պոլիսի առումէն մինչև 1600⁽¹⁾ օսմանեան կայսրութիւնն հասած էր իր ամէնաբարձր պայծառութեան՝ այնպէս որ 17րդ դարին սկիզբն՝ էր նաև դազախիւնիւն ընդարձակ բարգաւաճումի և սկզբնակէան ամէն մարդկային հաստածի վիճակեալ նուագումին, ըստ Օսմ. պատմագրաց, որով անշուշտ ցոյն վայր Կ. Պոլիս հասաատուած Հայերն այ ունեցած բլլալու ևն գերազոյն մեծութեան աստիճան մը և հարուստ բարեբազմութիւն մը : Ի՞նչ օգուտ որ յիշատակարանք քարկոթողք և արձանադիրք չեն մնացած մեզի այն ժամանակներէն, և չենք կրնար յիշել անուններն այդ ժամանակամիջոցի հայ մեծատուններուն :

Վիսյի ու Պեղոսյնեայի ներսերէն Լազեր, Գարամանցիներ, Իլի-
րիացիներ եւ Յոյներ ձգուեցան նոր պետութեան կենդրոնները, եւ
գրաւեալ տասներկու մայրաքաղաքներու մեծահարուստ բնակիչնե-
րը վիճակեցան նորէն բազմացունելու Սուրբանիկի քաղաքը : Ասոնց-
մէ միայն Գարամանցիք միւսիւրման կին. միւսները՝ բոլորն ալ
այլաժեռ փրստանեաներ՝ իրենց կրօնքը պաշտելու քոչարուեցան.
Յ. Համմէր Գլ. ԺԶ. :

(1) Ինչպէս դիտել կուսայ նաեւ Յովսէփ օր Համմէր Օսմանեան Պատմութեան Ա. Հատրիկ մէջ (կէ 85) ակնարկելով Գարուն-
վիցի հաշտութեան (ժրանս. բարգմանութիւն 1835թ.) :

Այս սկզբնական ամբրաներուն վրայ՝ եկան հետզհետէ աւելցան՝ Փոքր Ասիայի միւս քաղաքներէն, մինչև իսկ Երևանէն, Աղուշիսէն, Ջուղայէն, Դաւրթէն (1) ու Սպահանէն, մեծ և հարուստ տուներ՝ երբևի՜ն ալ հաստատելով իրենց ճիւղերէն փոքր Ասիայի մէջ փոքր ամիրայութիւններ մը Չորպաճի, Մահաբաի ևյն անուններով։ Եւ ասոնք ալ՝ վերիններուն նման՝ յարելով օսմանեան մեծ անձնաւորութեանց ժամանակին բանուկ և անցուկ միջոցներովը՝ գլուխ կեցան պետական գործերու (ճարտարպետութեան, պատկերճանութեան, սկերչութեան ու սեղանաւորութեան) Աղայ, Հօճայ Պալի անուններով՝ իրր հաւատարիմներ աւելութեան, և՛ իրրև դարձեալ այնպիսիներ՝ պետ կարգեցան ու կոթողեցան տաճայի՛ն ալ գործերու՝ հօճայ (2) միւսթէվէլի կամ շէլէպի անուններով։ Ամիրայութեան ծագումն այսպէս կը զաննենք Կ. Պոլիսի և փոքր Ասիայի ու Կիպրոսի մէջ։

Այս մեծատունները շուտ համակերպեցան՝ պետական ու մայրաքաղաքական շիւտմներով՝ տեղական տիրող տա-

(1) Պարսկաստանէն Թուրքիա՝ մահաւանդ Կ. Պոլիս՝ գաղթականութեանց սկիզբը կը բուի Դաւրթի առումէն (1585), զոր տաղաչափած է համառօսի Սիւհուն Ապարանցին (վիսաւանութիւն էջ 158—162 սպարեալ ի Վաղարշապատ, ի սպարանի Ա. Կարոզ, էջմիածնի 1870)։ Այդ ժամանակին կը բուի նաև մեր համեւս նախահաւերէն երկու եղբարց Պարսկաստանէն ի Թուրքիա գաղթումն՝ ինչպէս իիշ շատ հասու եղանք վերջերս Մարաշէն, Եդիսիայէն, Պրուսայէն եւ Կիւրիսէն մեր մականունով իշուած ազգայիններէն՝ շնորհիւ մահաւանդ Յովհ. Կգ. Դազանձ՝ անի։

(2) Տեսած ենք ամիրաներու տուած պետական փառաւոր պարտներ՝ դիւանական շախնոյ հսկայ՝ գրչութեամբ մը, մէդրէ աւելի մեծութեամբ եւ մինչև 27 ուկու տողոնց։ 1586 թն՝ Կ. Պոլիսի մէջ միւսլիմանք անուց կիև թիւով, գրուած է, Բիսսունեաներէն, նոյն իսկ երեսներէն՝ անգամ (Տե՛ս 18րդ դարին վերջերք սոյնած *Abregé de l'histoire Ottomane* tome I pages 16—21)։

բաղին թէ՛ բարբոլ թէ՛ լեզուով թէ՛ հանդերձանքով . միայն կրօնական աւանդութեանց ու արեւելեան եկեղեցիին վարդապետութեանց պինդ փարելով՝ կրքցան պահել հին բայց տարտամ տխր մը : Իրենց լեզուն՝ որ իրենց բնավայրի գաւառաբարբառէն ու միջակ գրաբառէ մը խառնուած բան մըն էր՝ հետզհետէ թուրքախառն ձև մը առաւ , որով կերպացաւ ճոխ այլ խառնուածոյ ուամկերէն մը տափակ , որուն մէկ նւոյշը պահուած է Հ . Ղուկաս Խնճիճեան Մխիթարեանին գարապատումներուն մէջ . սակէ առնելով հատուած մը՝ յիշած ենք գործիս Զ . զըլուխին վերջը :

Ասոնցմէ պատմութիւնը կը յիշէ նախ՝ վերն ակնարկուած գաղթականներուն վրայ՝ 1600էն 1630 երեկի խալֆա Աստուածատուն ի Կ . Պոլիս Տիֆրիկցի , Պոլսոյն կոչուած , որ սիրելին ու եղբոր պէս էր ժամանակին օսմանեան վէճերին . հանճարեղ ու քաղցրաբարոյ անձ մը , որ բարեկամն էր նաև Բ . Իրան մեծամեծներուն և Գրիգոր Պարոն—Տէր Երուսաղէմի բարերար Պատրիարքին , ու անոնց միջոցով զլուխ կը հանէր հանրային կարեօր գործեր . ինք էր՝ որ մեծ դժուարութիւններէ ու ներքին հակառակութիւններէ ետք՝ յաջողեցաւ շինել , յիշեալ պատրիարքին հետ , Պալատի Ս . Հրեշտակապետ և կեղեցին ⁽¹⁾ : Նոյն միջոցներն (1621 յունուարի 17ին) է պատահած նաև Վոսիորոսն ի շար՝ տարեգիրներուն մէջ շտեմնուած՝ ամէնասատարկ ցուրտ և ձմեռ մը , որ ստուցուցած է Նեղուցը և՛ Դանուբի պէս՝ Ղազարիպէն Ակնատար քաղելով գայեր եկեր են ⁽²⁾ :

(1) Ժամանակագրական պատմութիւն Երուսաղէմի սպ . յերուսաղէմ 1890, հաս . Ա . կշ 308):

(2) Դարապատմ և Ամսրանց Բիզանդեան (կշ 35) կը յիշեն զայս : Ասիկ իր 70 տարի առաջ է պատահած հանել այն հեղեղանման փոքորկայոյց ճեղատարափը որ ճեղց 24 ժամ և շատ հշակաւոր շէնք ու կառոյց գերեց գերփեց : Տես Համեհր Պատմ . Թամսեան :

Կա՛ր 1644-49ին Տիարպէքիրցի Մաղաքիս Չէլէպի մը, որ սիրելին էր մեծ Եպարքոս Մէլէք Ահմէտ փաշային ու կատարեց՝ այս հանգամանքով՝ յիշատակութեան արժանի գործեր, զոր և կը գովէ Երեմիա Չէլէպին ⁽¹⁾ :

Պատմութիւնը կը յիշէ նաև նախնական մեծատուն Իսքէնաէր Չէլէպին, որ բարեկամ ալ էր Կղեմէս Պալանոս բժիշկ կրօնաւոր մատենագիրին և հիւրընկալեց զայն ժամանակին կրօնական հակառակութեանց ատեն: Այս Իսքէնաէրի Չեղիպի մակդիրը կենթադրէ արդէն իր վրայ բաւական փրանկութիւն՝ ժամանակին բացորոշ ու բացորոշող բառովը: Կը յիշուի նաև Պալաթի եկեղեցին շինողներուն և թեարկողներուն մէջ խարբերոյցի Ռըատակէս (Արիստակէս) վարդապետ մըն ալ ⁽²⁾ Գրիգոր Գաւանազցի վարդապետին հետ, որ ունի ընդարձակ ձեռագիր ժամանակագրութիւն մը 1536-1640ի ներքին անցքերուն վրայ (ի թանգարանին Ս. Յակոբեանց Երուսաղէմի: 1628ին էր որ ձեռնարկուեցաւ շինել Պալաթի այս Ս. Հրեշտակապետ եկեղեցին՝ ջանքով ժամանակին երեւելիներուն, այդ թուականէն առաջ նոյն թաղի Հայերը կը յաճախէին Գարակէօմրիկի Ս. Նիկողայոս եկեղեցին, որ առաջ վանք էր և կը կոչուէր Մանուէլի մենաստան ⁽³⁾ : Թուի թէ այս միջոցներուն մզկիթի փոխուեցաւ ու կոչուեցաւ Քեփիլի Ասլիյի այդ համբարացիկ եկեղեցին, որ կը գտնուի Էարնէ-Գարուշի ու Թէքիր-Մարայի միջև՝ Գարակէօմրիկի մօտ: Կէսն Հայոց ու կէսը Քէֆէցի Լաաի-

(1) Ձեռագիր Երեմիա Չեղիպի ի թանգարանին Ս. Յակոբեանց յերուսաղէմ:

(2) Երեմիա Չեղիպի առ Հ. Ղուկաս Ինճիճեանի, Աշխարհագրութիւն Եւրոպիա. Հաս. Ե. հշջ 129—130, նաև ծանօթութեանը մեջ:

(3) Մանիկիերոս (Չաւէեան Պատմ. Հայոց Բ. հշ 441):

նաց ու Գովինիկեան կրօնաւորաց կը պատկանէր . չուրջի թաղն ալ՝ բնակութիւն նորեկ Հայերու՝ կը կոչուէր Բաղախացոց թաղ, զոր Գրիգոր Պարոն-Տէր Երուսաղէմի պատրիարքը շէնցուց շատ տուներով և շինուածներով, և նոն հուց տեղաւորած Լաախներէն աւելի շատցուց Հայերուն բնակարանները, որով թաղն ու եկեղեցին մեծ մասով Հայոցն եղան . բայց 2-300 դրչ. ի պարզեի մը դան-ցառութեանն համար՝ եկեղեցին գրաւեցաւ և փոխուեցաւ մզկիթի (1635-40) : Այս միջոցներուն կը յիշուին նաև Ուլա՝ Պուղտանի պէյերուն կարգն՝ երկու հայազգի պէյեր ալ՝ մին Գասպար, որ նստու Պուղտանի մէջ և իր կինն էր որ շինեց Եաչի մէջ հայոց Ս . Աստուածածին եկեղեցին, միւսն Առոն, այսինքն Ահարոն, որ ապա հոռոմացաւ և շինեց մայրաքաղաքէն կէս ժամ հեռու Յունաց այն վանքն՝ որ կը կոչուի իր անունով Առոն-վոսա :

Զարմանալի երևոյթ՝ Հայերն ինն ասունները մինչև Չինաստանի մէջ ունեցած են եկեղեցի . թաթարներու սիրապետութեան ժամանակ 14րդ դարին՝ Գանթոն ծովեղերեայ քաղաքին մէջ մեծատուն հայ տիկին մը շինել տուաւ մեծ ու զեղեցիկ եկեղեցի մը, զոր Բէքինի Յովհաննէս արքեպիսկոպոս Ֆրանչիսկեանը՝ վերոյիշեալ տիկնոջ կամքովն՝ բրաւ կախկոպտականիսա եկեղեցի, ուր կը պաշտօնավարէին Կղեմէս Ե . Պապին զրկած երեք եպիսկոպոսներն յաջորդաբար : Բայց 1369էն ետքը Չիներն անկախ հրատարակուելով՝ նորէն վանեցին իրենց երկիրէն բոլոր քրիստոնեաներն ու ամացացուցին եկեղեցիները : Մետասաներորդ դարէն՝ կը յիշուի մեծ հայ գաղթականութիւն մըն ալ յԻրապիա, որմէ ըլլալ կը թուի Ուտինէ քաղաքին մէջ ցարդ նշանաւոր կոմսութիւնը, Գարձեալ նոյն գաղթականութենէն կը թուի Բիզա քաղաքին մէջ

մեծանուն Միրանդեայ ծագումը, որ եղաւ հայրը Կարգուսեանց մենաստանին հիմնադիրին: Բաղէնացի մօտ Քրլաստէի մէկ թաղը դարերէ հետէ կը կոչուի Առւմէն, նոյնպէս Փլորենտիայի մէջ Էռմիլի անունով հայ կրօնաւորներու յիշատակը կուգայ շատ հինէն:

Հորանտայի մէջ ալ Հայք նշանաւոր եղած են՝ 16րդ դարէն սկսելով՝ թէ՛ վաճառականութեան թէ՛ խնայական ու կրօնական ազատամտութեան կողմէն, ինչպէս կը նշանակէ միջնադարեան պատմութեանց մէջ Կիպրն պատմագիրն ալ:

1620էն 1640 կը յիշուին՝ Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին շինողներու կարգին՝ ակրնցի խօծա Վահրատ, արիբիկցի խօծա Վահրատ, Մահեսի Կարապետ, Մահեսի Աղաղար, ակրնցի Մահեսի Քուֆալ, խօծա պարոն Լէոն, խօծա Բամպուխ, խօծա Կիրակոս, խօծա Նահապետ, խօծա Պահատուր և այլք, որ Ոսկեղջիւրի Հայերուն նախնի երեւելիները կը թուին:

Կը յիշուի նաև նշանաւոր վանցի Ռուհիճան հօճան (մեծ եպարքոսին Քիւրքճիպաշին)՝ իրրև պետ կրօնապատրիարքական կուսակցութեան մը ու գործակից պատրիարքական անդակալներու. նոյնպէս Հօճա Ատալմեանք ու Զիրաք Գերաքեան⁽¹⁾: Այդ աշխարհական մեծերէն մէկ քանին՝ 1640ին Դաւիթի պատրիարքութեան տունն՝ յաջողեցան նաև 10—15 ամբօի չափ Պատրիարքական աթոռն ելնելով՝ կառավարել ժողովուրդը, սուանց եկեղեցականի սուանց կրօնական նախրապետութեան⁽²⁾:

(1) Հաւանաբար սսանց սերունդէն ըլլալու և յուզայեցի Պայծառ իշխան աղա Յօհաննան Գերաքեան բնակեալ ՚ի Հնդիկս, ՚ի Սուրաք, որոյ ծախսովը սպուած և երկու մեծահասոր Պատմաբիւն Թւլիմալին, քարգմաննաբիւն Մարգար Զախրիայի Խօչեկն:

(2) Չամչեան Գ. հ. 627—629:

Թուրքիայէն դուրս ալ 14րդ դարէն մինչև 18րդը՝ Չինաստանէն դատ ամէն տեղ Հայերը ծաղկած ու մեծացած են վաճառականութեամբ: Արդէն իրենց բնավայրին մէջ ճարտար ու ճարպիկ առևտրապէս՝ իրենց ցրուեալ ցանկեալ վիճակին մէջ եւս Հայք՝ ամէնուրեք և ամէն վաճառատեղի սիրուած են Պարսկաստան, Հնդկաստան, Յունաստան, Ռուսաստան, Իտալիա, Ֆրանսա, Գերմանիա, Հոլանտա ու Լեհաստան. ասոնցմէ ոմանք պահած են ցարդ իրենց լեզուն և կրօնը, իսկ այլք խառնուած են տեղային ազգերու հետ՝ վաճառականութեան բնակից այլանմանութեան հետեւանքով:

Եւրոպացի մատենագիր մը՝ Մարգրիտիչէ՝ կը գրէր իրր երկու հարիւր տարի առաջ. «Հայերը գրեթէ բոլորովին տուած են ինքզինքնին վաճառականութեան, որուն ընդունակ ալ են՝ անոնք արուեստագիտներ են ոչ միայն արեւելքի վաճառականութեան, այլ նաև ձեռնառուներ վաճառականութեան Եւրոպայի մեծամեծ քաղաքներուն: Կը տեսնենք ամէն տեսն անոնց զայլը Պարսկաստանի խորերէն մինչև Լիխունոյ. զիս շատ չքներ որ անոնք հաստատուեցան Մարսիլիա՝ ալ, կը գտնուին նաև Հոլանտա, Անգլիա, Վիննետիկ, կը ճանապարհորդեն ՚ի Մոզոլ, ՚ի Սիամ, ՚ի Ճավա, ՚ի Փիլիպեան կղզիս և բոլոր աշխարհներն արեւելքի՝ բաց ՚ի Չինաց»⁽¹⁾: Պիշինկ ալ նոյնը կրկնելով՝ կրտէ՛ «Իսկ Ասիայի մէջ չիկայ նաւահանգիստ մը կամ վաճառական քաղաք մը, ուր չգտնուին բազմաթիւ վաճառական վարժամ Հայեր»: Մօրէր անուն մատենագիր մըն ալ կը գրէ՛ «Հայերուն գլխաւոր գործն է վաճառականութիւն. Կարտինալ Ռիչչէօ մտադիր էր բնակեցունել Հայերն ՚ի Ֆրանսա՝ զօրգացունելու համար

(1) Առ 2. Դուկաս Ինսիմեանի Աշխարհ. Ասիա:

վաճառականութիւնը, և ա՛յս միտքով էր որ տպագրել տուաւ քանի մը գիրք» : Ռայնալ ևս⁽¹⁾ կ'անուանէ Հայերը . «Տէր էամ վարժապետ Ասիայի ներքին վաճառականութեան . աչալուրջ և ներձուն ազգ մը, որ դիտէ արեւելքի բովանդակ բարքն ու սովորութիւնները . դրամատէր միանգամայն վերջին տտիճանի ժուժկալ և խրնայող . դաշնակից Պարսկաց և Հնդկաց . մանրագնին քննող և բնդարձակամիտ . . . Բեդրսպուրկի արքունիքն խնաստութեամբ խորհեցաւ բերել հասուած մը յԱժտէրխան այս հարուստ հնարագէտ ու աշխատասէր ժողովուրդէն . Հայերո՛ւն ձեռքով կանցնին միշտ ասիական վաճառքներն ի Ռուսիա»⁽²⁾ . Վոլդէր ալ կը յիշէ ի դէպս Հայերն՝ իր Չեռնասկ ազգաց բարուց ևւ ոգիին վրայ գործին մէջ, և Ռուսոյ՝ իր վերջին հիւանդոտ ամերուն՝ Նւրուպցի վաճառական Հայոց տարազոյի կը հագուէր : Պենկալայի հարուստ աշխարհին վաճառականութիւնը ծաղկեցուցին Հայերը, որոնցմէ ապա առաւ դրաւեց Անգղիացին : Մեծն Պետրոս Ա . Հայերուն հետ բրաւ վաճառական շատ դաշնադրութիւններ ու բերաւ բնակեցուց Աժտէրխան հայ դաղթականութիւն մը : Այլ աւա՛ղ որ շատ քիչ բան մնաց արդի ժամանակներուն՝ հարկերու ծանրութեան, ներքին կռիւներու, քաղաքականութեանց ու անմիաբանութեանց պատճառով . ուստի գործիս բնթացքին՝ քանի մը արտասահմանի մեծատուններէն դատ՝ չպիտի կրբնանք յիշել այս փառաւոր վկայութեանց համակշիռ բազմաթիւ Հայ մեծատուններու անուններ :

(1) Նոյն տեղ. վասն Ռայնալի 'ի պատմութեան վաճառականութեան եւրոպեանց յերկուս Հնդկաստանս հաս. Բ. գիրք է. գլ. 39 :

(2) Առ Յ. Ղուկաս Ինճիհեանի, Աշխարհ. Ասիա :

Ի Թուրքիա՝ 1650—55ին կը փայլի Պրուսացի Անտոն Զէլչպին բազմահարուստ, որ տուաւ շատ դրամ Փիլիպպոս կաթողիկոսին՝ Էջմիածնի մեծ զանգակատունին շինութեան համար: 1652—55ին՝ Կ. Պոլիսի բնիկ Հայերուն մէջ տիրած էր իշխելու և եկեղեցական եկամուտներն ինքնահրաման անտեսելու յաւակնութիւն մը, որով արեւելցիները, այսինքն Անատոլոյէն եկողները, կը նրկատուէին արհամարհութեամբ մը իրրեւ «գուհիկ» բառ Առաքել Գաւրիթեցոյ: Արեւելցիներն ալ միշտ կը բողոքէին, որով երկուտակք անպակաս կըլլար կախն հերձուածի և կը բանար դուռ մեծ ծախքերու: Փիլիպպոս կաթողիկոս շատ աշխատեցաւ վերջ տալ այս վէճերուն՝ ըստ իւր անաշտու ու խաղաղասէր բնասրութեան:

Այս միջոցին կրկին առաւելապէս փայլի Հայերն Իլովի մէջ ալ, ուր վաղուց հաստատուած՝ հետզհետէ անելով զարգանալով՝ ունեցան մեծ անձնաւորութիւններ կարգ մը առանձնահարումներով: Նախ սկսան զաղթել հոն 1062 թուին, լինչպէս կերեւի Դեմնարիոս Զուպի որդւոյն Թէոդորոսի հրովարտակէն, որու հին թարգմանութիւնն է այսպէս. — «Ահա մեծի գքսի Թէոդորի որդւոյ Դեմնարեայ առ Նաշոխաչեան Հայս, որք տատ կամին գալ: Եկեացեն յօգնութիւն ինձ: Եւ ևս տաց ձեզ ազատութիւն ընդ ամս երիս: Եւ յորժամ լինիջիք առ իս, ուր և հաճեցի ոք՝ երթիցէ ազատօրէն»: Այս հրովարտակը կը հաստատէ նաև Վլատիսլաւոս Դ. թագաւորը Լեհաց իր ընդարձակ հրովարտակին մէջ, զոր տուաւ Իլովի Հայերուն 1641ին.⁽¹⁾ այնուհետեւ զարէ զար ու-

(1) Լեոյ դարեւ մինչև այս միջոցներն ըստ Իլովցոց աւանդութեան՝ Իլովի և Կամենիցի Հայերուն մէջ հայկական լեզուն խափանեալ էր գլխովին և սովորաբար կը վարեին Քարաբագ

բիշ տեղերէ ալ գաղթելով՝ զօրացան մեծ հասարակութիւն մը բլլալու շափ և, բնիկ աղնուական դասերուն պէս, ստացան մեծամեծ կալուածներ: Այս կալուածատէրներուն մէջ նշանաւոր եղան Գրիգորովիչ, Նուրիճան, Սարէլեան ու Մալխասովսքի տոճները: Մալխասովսքի տոճէն 1800ի ժամանակները մէկ անձնաւորութիւն մը շատ երեւելի եղաւ Վարչաւիայի մէջ՝ Լեհերուն վերջին թագաւորին ատեն, վասն զի հասաւ ստաջին պաշտօնատարի ատարճանին, որ արքային երկրորդն ըսել է: Նշանաւոր եղան կարգ մը մեծ վաճառականներ ալ, որոնցմէ Պէճնարդովիչ տոճէն սեղանաւոր մը մեծա-

լեզուով, որով կը բռնի քէ Հայոց առաջին գաղթականութեան ևս, Խրիսկէն եկան ուրիշ հայ գաղթականներ ալ եւ հոն հաստատուեցան: Ասոնք չգիտէին բնիկ հայկական բարբառը, եւ կը խօսէին առ հասարակ Թաքարներու լեզուով, որոնց հետ խառնուելով միւսներն ալ՝ մոռցան հայ լեզուն: Ինչոքի եւ Կամենիցի մէջ հայագիր քարտերէն շատ գրուածներ կը վկայեն ասոր. քարտերէն մուրհակներէ ու հաշուագիրներէ զան՝ ամբողջ գիրքեր քարտաւանդ եւն հայ լեզուներէն լոյն խառն քարտերէնին. ինչպէս ժամագիրք, նարեկ, Սաղմոս եւ Պօղոս առաքելաւի ԺԴ. բուդքերը: Այսպէս կը վկայագրէ Ազոնց Գիւլեր արքան Միխարեանց՝ իր Աշխարհագրութեան մէջ: Նոյն մասեւագիրը կը հասցունէ մեզի նաեւ վերայիշեալ առաքելական ԺԴ. բուդքերուն վերջարան յիշատակարանը գրուած լոյն խառն քարտ լեզուով, զոր կօրինակենք հոս բառ առ բառ եւ շտա առ շտա «Դուկալլանի Պօղոս առաքելալ նընկ պիտիդէ քարտաւանդ պօղիան երճեհի տիլիսան Խըրլախ դիլիկայ. խօշուպ շայ եւ զըրիլըլ սաշարգանէսիզ Միխայիլ քահանայ նընկ գօտայ նըլուճունկ Խոլդիայանսան, բուն իւաշոնունկ, բուն Միխայիլ զըլուճունկ խայիսի պունի եագքրքըլ. յիշատակ քհնկի քհնկիսայ ուլուն սայ եագքրիւաշիսիսիկ պօլաւիլըլըլուն քհնկի քհնկիսայ ուլախօմուր պերկուլիսի գօմուլիսն խազանի ալդիքի սայ գըլըլիկան լօրախիսի ալդիքի, իսոսամիշ ճանարտի իլերկայ. քհնկիքի անընկ ճանըն մեկնկիլիս ուլիւպլայ իլերկայ, սայ անընկ

գումար փոխատուութիւն ըրաւ արքային, որով հանեց մեծ անուն. վասն զի տէրութեան մէջ միայն իր քով դանուկացաւ այդչտի դրամ: 1363ին Հայք շինեցին Իլովի մէջ նշանաւոր եկեղեցի մը, որուն գլխաւոր բարերարներն եղան Յակոբ՝ որդի Շահնշահի կաֆացի և Փանոս՝ որդի Այրանի զաղալցին: Իլովէն է նաև լեզուագէտ Ստեփանոս վարդապետը, որ թարգմանած է գրաբարով՝ Յովսէպոսի հրէական պատերազմին պատմութիւնը: 1652ին կը յիշուի Աստղոյ անուն Իլովացի հայ դատաւոր մըն ալ, որ կաթողիկոսական խնդիրի մը համար եկաւ Կ. Պոլիս Իլովի Հայերուն կողմէն և ազդեցութեամբը լուծեց զայն. սա ինք ա՛լ իր ժամանակի ամիրապատիւներէն էր: 1618ին էր որ առաջին անգամ Իլովի մէջ տպագրուեցաւ Սաղմոսարան մը:

1655ին՝ նորէն կարգ մը մեծատուններ ձեռք ձգեցին պատրիարքական տեղապահութիւնն ՚ի Կ. Պոլիս: Ասանցմէ մէկ քանին կրնէին թարգմանչութիւնն եւրոպական դեպքաններու. տեղեակ էին եւրոպական պատմութեանց բարքերու և սովորութեանց: Քանի մը տարիէն քսան և չորսի հասած կը գտնենք թիւն այս տեղակալներուն,

«Կէլիանյարչյնրնկ եազըրկանյարնրնկ. աճկն. խօյարմէն սիզսան
«ճկն եազըխլըյ արգունիսիզ Միխայէլ Բահանայ ի ճկնի պիր
«թկնկրի պօշասոն եազըխլարինայ. այդ մախլըյայ, սա պիր հայր
«մեր պլ. այ ունուդ մայկայսիզ, ի թկնկրի սիզնի դնրկայ: Եա-
«զըլըյ Իլով շահարինայ, գօշկկայսնա սուրբ Ասուածածիկնկ.
«կըղղուիկնայ Տէր Սեփաննունկ ախարաշլըխընայ. Տէր Գրիգոր
«արհիախարաշիկնկ. վանըյ երեսփոխանիկնայ պր. Օհաս, Աղապէյ
«օղլու սայ պր. Գրիգոր բուն Աւհան օղլունուն. Կ: ԹՎ. Ռ. ԺԱ:

Բայց հնգզհեճ այս բարարախան լեզուն ալ կորսուելով՝ սկսան խօսիլ մեծ մասամբ Լեհաց բարբառով, որոնցմէ կը գանազանին միայն անունով, ծիսով, դէմքի գծագրութեամբ և կարգ մը հայական սովորութիւններով:

որոնց մէկ քանիին անուաներն են Խօծայ Տալուա, Խանճի Սէֆէր, Էքմէքճի Պէկէր, Քէրէստէճի Գրիգոր, Սիմէոն Երէց, Բիւրքճի օղլու Երէց, պօսուա Սիմէոն, Մկրտիչ Մուրատ, Յարութիւն Պալի, Ֆէրճատ օղլու և այլն :

Եւ ասոնց ներքին խորհրդատուութեամբ ձեռնտուն էր վերոյիշեալ Վանցի Ռուհիջանը : Ասոնք էին նաև Թոմա Պատրիարքին հակառակորդներն ու անոր մահուան պատճառները, ասոնցմէ՝ դարձեալ ծայր տուա Եղիազարեանց ու Թլխլխեանց հռչակաւոր վէճը պատրիարքական, ուր մեծ դեր ունեցաւ իր արբանեակներովն՝ Եղիազար պատրիարքն այնթապցի : 1666 ին կը յիշուին Զուղայեցի Խանենց պարոն Ստեփանոս, Քթուէնց Մահաեսի Յեղար և որդին պարոն Թէոդորոս, պարոն Պետրոս՝ Պայազասախաոֆ, որ Ռսկան Վարդապետի օգնած են բաւական դրամով՝ առաջին անգամ տպագրելու համար Աստուածաշունչն յԱմրսդերտամ : (Յիշատակարան Ռսկանի Աստուածաշունչին, հատոր Բ. էջք 833-834) :

Նշանաւոր ազնուականներ ու մեծատուններ կան նաև ՚ի վաղուց Մաճառխիթանի Պաշտպալով հայաքաղաքին մէջ՝ մեծ մասով վաճառական, որոնց ոմանք սուին Կայսրէն պաշտօնական ազնուականութիւն զանազան մեծ արտօնութիւններով և կոչուեցան ազատազնեայ յարդուոց որդի : Նոյնպէս Կեռլա Հայաքաղաքին մէջ, որ Հայք շինեցին 1703ին, և 1800ին իրենց թիւը կը հասնէր 3600ի :

1600 թուէն կրսկսինաև հին և հռչակաւոր Տիւզեանց ծագումը՝ Տիւրքիէն, ուրկէ նոյն թուին դաղթած է Կ. Պոլիս Յարութիւն անուն Հայ Հոռմէականը⁽¹⁾, և՛ շնորհիւ իր ճարտար սակերչութեան՝ յարաբերութեան մանե-

(1) Ազգաբանուքիւն զարմին Տիւզեանց ՚ի Հ. Գարտիկի Մեհե-վիշեանե, Վիեննա, հշ 6-7 :

լով կայսերական պալատին հետ՝ անուանուած է հոն արհունի ոսկերիչ և բացած է իր անունովը կայսերական զանձատունին քովն ոսկերչութեան խանութ մը, որ մինչեւ 19րդ դարուն սկիզբը կանգուն էր Տիւզեան անունով : Տիւզեանք 18րդ դարէն սկսեալ բնակած են Գուրու չէչմէ աւանը : Յարութիւնի մահէն ետքն՝ արքունի ոսկերչապետութիւնը մնաց իր որդիին Մահաեսի Սարգիսի, որուն բարձրահասակ կաշմբուռն և ուղղորդ կազմուածքն ⁽¹⁾ առաջին անգամ տեսնելով Վեհ. Սուլթան Ահմէտ Գ. արքունի պարտէզին մէջ «սա Տիւզը կանչեցէ՛ք ինձի» կը հրամայէ, որմէ կը սկսի ալ տոհմին Տիւզ անունը : Տիւզ Սարգիսէն կը ծնին Տիւզ Յովհաննէս ու Տէօլլէթ ազաները, և Տիւզ Յովհաննէսի որդին էր Հոճայ Միքայէլ Չէլէպին ⁽²⁾ (Ծն. 1724 Վիսճն, 1785)՝ փառաւորադոյն զարդը Տիւզեան զերդաստանին, որ հմուտ էր միապէս նկարչութեան ոսկերչութեան ու տարբազխութեան, և նշաւակ ալ եղաւ ժամանակակից նախանձներու իր բարձր արժանիքովը . իր միակ խօսքովն՝ 1741ին 53 հոգի ազատեցան, և 1769ի պատերազմին ալ՝ ազատեց Յոյներն իմաստուն միջամտութեամբ մը : Այս Հոճայ Միքայէլի որդին է Յովհաննէս Չէլէպին (Ծն. 1749. Վիսճն. 1812), որ շատ ուսումնասէր և ուսումնական ալ էր . ինք էր որ հրատարակել տուաւ Դիտակ Բիւզանդեանը, ու շատ զիրք հրապարակելուն իր ծախքովը . ասոր Իսկուհի անուն տղջիկն էր, որ անուանեցաւ «հայկարան» Հ. Արսէն Կ. Բագրատունիէն՝ իր հայերէնագիրութեանն հա-

(1) Նոյն անդ էջ 9—10 :

(2) Չէլէպի մակդիրն թէ՛ իբրև նշան հռոյմեակահանութեան թէ՛ մանաւանդ իբրև նշան ասուածպաշտութեան եւ գիտութեան կը նշանակի ասուածային, ու ծագած է հին բուրժերէն **Չալապ** բառէն որ շուրջ է Ասուած :

մար: Յովհաննէս Չէլէպին թողուց տաննրկու զաւակ,
որոնց մէջ էին Սարգիս, Գրիգոր, Յակոբ ու Միքայէլ
Չէլէպիները և ասոնց պատմութիւնն համառօտիւ ար-
ձանագրած են Ա. Պէրպէրեան⁽¹⁾ ու Հ. Գաբրիէլ Մէնէ-
վիշեան⁽²⁾: Տիւզեան ընտանիքն ամէնէն հին ու նշանա-
ւոր այն ընտանիքներէն է Կ. Պոլիսի, որ թիւով նուազ
ու զիրքով և տաղանդով առատ՝ տուին բոցատիկ փայլ
մը բիւզանդեան հարստութեան:

Դարձեալ 17րդ տարին կէսերը կը յիշուի Սէմէրճի
Տէտէ կոչումով Կառմցի Մուրատ Հոճայ մը, որ կը վա-
յելէր Վեհ. Սուլթան Մեհէմէտ Գ. ի վստահութիւնն և
ազդեցիկ անձ մըն էր Տէրութեան մէջ: Ասո՛վ իսկ կըրցաւ
միջնորդել մեծ յաջողութեամբ պետութեան և տո՛մային-
ներուն: Չուազիր Մաշտոցի մը յիշատակարանին մէջ
1660 ին կը յիշուի սոսկալի հրդեհ մը՝ ի Կ. Պոլիս, որ
սկսելով Այազնայ Բարուէն՝ քաղաքին մինչև ներսերը,
մինչև Սամաթիա՝ արևելքէն արևմուտք, ծովէ ՚ի ծով,
տոչորեց լաիեց աւերեց ամէն բան, շատ մարդիկ այրե-
ցան կիզեցան երկու սևուէ, ինչպէս շատ եկեղեցիներ ու
մզկիթներ հրոյ ճարակ եղան: Յիշատակարանին զրիչը,
որ կը թուի Երեմիա Չելէպի Բէօմիւրճեանը, կը նման-
ցունէ այս հրդեհի օրը՝ կատարածի սարսակլի օրուան,
(Տե՛ս Երևակ 1859, հատ. Ե. էջ 139 նաև Չամչեան
հատ. Գ.):

Տասն և եօթներորդ դարի մեծերուն մէջ է նաև
ներ՛ուն Երէմիա Չէլեպի Բէօմիւրճեան՝ որդի Բէօմիւրճեան՝
Տէր Մարտիրոսի, Բարեկամն Այնթապցի Եղիազար Կա-
թողիկոսին, նօտար գրագէտ ու մատենագիր մեծատունն՝

(¹) Պատմութիւն ժամանակացն 1772—1860:

(²) Ազգարանութիւն զարմեկն Տիւզեանց, (հջ 25—40):

երէց եզրայրը Տէր Կոմիտասի⁽¹⁾, որ և նախ Սամաթիայի Ս. Գէորգ Եկեղեցիին աւագ սարկաւարդն էր, և վախճանեցաւ իմաստուն փառքով 60 տարեկան 1695 ին։ Գրած է հինգ գիրք պատմութիւն Օսմանեան թագաւորութեան ընդարձակ, գիրք մը՝ անոր համառօտութիւնը, միւս գիրք մը ոտանաւոր՝ Յակօր Կաթողիկոսի⁽²⁾ խնդրելովը, Ազեքսանդրի պատմութիւնը՝ նոյնպէս ոտանաւոր, թարգմանած է Թուրքերէնի՝ քաղուածներ Խորենացիէն։ զրած է՝ գերման դեսպանին խնդրելովը՝ Պարսկական Հնդկաշան ու Փոքր Ասիայի աշխարհազրութիւններ, գիրք մը ընդդէմ Հրէից քարոզներ, ճաւեր՝ հայերէն տաճկերէն, պատմութիւն Երուսաղէմի, թարգմանած է Թուրքական լեզուի՝ Աւետարանն ու ինչ ինչ կտորներ հին կրտակարանէն, թարգմանած է յունական ու լատինական լեզուներէ կարգ մը գիրքեր, տպագրել տուած է Յիսուս որդիի գիրք մնացորդն իր հակողութեամբն՝ երկու հատոր, նաև Տնօրինական տեղիքը, զրած է՝ ժամանակակից խնդիրներուն վրայ՝ ընդարձակ նամակներ առ պատրիարքս և կաթողիկոսունս, նաև յորդորականներ՝ խանդաղատելի սճով և ոգիով մը, տեղեկագիրներ, լիշատակարաններ վանքերու վարչութեանց և արատնութեանց վրայ, որոնց մէկ մասը կը գտնուի Երուսաղէմի ձեռագրաց թանգարանը։

Ճանապարհորդած է Փոքր-Ասիայի շատ քաղաքներն ու գիւղերն՝ այն դժուարահաղորդ դարերուն, ինչպէս

(¹) Չովհեակն, հաս. Գ: Եւ վարժ Տ. Կոմիտասի, (հէջ 9—10):

(²) Որ էջմիածինեկն Կ. Պոլիս ևկած եր յսնդիմանելու և պատճելու համար Կ. Պոլիսի Պատրիարքին նշանաւոր մեկ անհնգութիւնը՝ բոլորովին ծայեայ գեղջուկի տարազով մը, և վախճանեցաւ հոն ու քաղուեցաւ Բերայի հին գերեզմանատներ՝ սրբազանեայ տապանի մը մէջ։

նաև Պէրուիթ, Բերիա, Անտիոք Երուսաղէմ, Արմաշ⁽¹⁾ և շն : Գրած է նաև ստուգութեամբ իր ժամանակին պատմութիւնը, որմէ թուի Չամչեան ստած է շատ բան իր անուշտով կը յիշուի Կ . Պոլիսի առաջին տպագրութիւնը (տե՛ս Հայ մասննագիրութեան 2 . Գարեգին Չարպճանէլեանի (էջ ԺԷ) : Ունի նաև Հայ լեզուի բառարան մը՝ որ ամէնէն չինն է վերջին դարերու բառարանաց : Մենք շատ փնտւած ու հարցուցած ենք իր այս ձեռագիր գործերն ու չենք գտած, նոյն խկ բաղմահմուտ ու բաղմամատեան անձերու քով . կը թուի շատոնց ինկած են արժանաւոր վենետիկի մատնագարանն և հասկաքաղուած մասննագիր վարդապետներէն՝ եթէ չեն ինկած կամ կորսուած Կ . Պոլիսի մէջ անարժան չարաշահողներու և բանագողներու ձեռքը : Երեմիա Չէլէպիի գրաբառն ունի արծաթի ձուլուած մը խաթուն՝ տարբեր յոյժ ժամանակին լատինախառն անոճ ոճէն, որ ձարակելու վրայ էր Ոսկան երեւանցի վարդապետին Ամաղէրտամի տպագրական Նրատարակութիւններովը . իր տպագրեալ քանի մը գործերէն կը համարձակինք ընել այս դատաստանը : Ինք՝ իմաստուն Չէլէպին՝ ցաւսիրտ անձնաւորութիւն մըն ալ է եղեր, ու իր գրական յառաջգրութիւնները՝ դարիւ չափ կանխում մըն են Պոլիսի ու վենետիկի գրական զարգացումներուն Ղրղ դարին մէջ . իր ծագումն է Ակնէն, անշո՛ւշտ գիւղերէն, 1600 թուին⁽²⁾ : Յիշատակելի է նաև Ղրղ դարին մէջ Աղուլեցի Սոճայ Գուլնազարի որդի Սոճայ նահապետ, որ 1687ին վենետիկի մէջ իր ծախքով ձուլել տուած տուերով տպագրած է աշխար-

(1) Որու և վանիկն վրայ գրած է շահեկան ընձեռուած մը՝ իրել նօսար Մարտիրոս Պարիարիկն. (տե՛ս Յովն. Տերյունցի հին փոքր երեւակներուն մէջ) :

(2) Վարժ Տէր Կամիսաւի, (էջ 9) :

հարստ Սաղմոսի մեկնութիւն մը բնդարձակ՝ աշխատասիրութեամբ Կ. Պոլսեցի Յովհաննէս լեզուագէտ վարդապետի մը ⁽¹⁾ : Տասն եւ եօթերորդ դարին նշանաւոր է նաև Ամսդէրտամի մէջ հայ գաղթականութիւնը, որուն մէջ կային մէկէ աւելի մեծատուն վաճառականներ՝ մեծ մասով Պարսկահայերէն : Հոն եղած է նաև՝ ուրիշ կարգ մը Հայ տպագրութեանց հետ՝ երևանցի Ռսկան վարդապետի ջանքով Աստուածաշունչի առաջին տպագրութիւն մը 1666ին : Կար հոն աւելի հին թուականէ մը մնացած եկեղեցի մը, զոր 1874ին Հոլանտայի Ռուսական հիւպատոսը վաճառեց՝ հրամանով Տ. Տ. Գէորգ Ս. Կաթողիկոսին՝ 12000 Հոլանտական ֆիորինի, որ՝ եկեղեցւոյ 15000 ֆիորինի ստորաստ դրամին ու քանի մը ստակերներու զգեստներու և գիրքերու հետ՝ զրկուեցաւ էջմիածին : Իսկ հայ գաղթականութիւնն արդէն 40-50 տարիէ հետէ անհետացած էր Ամսդերտամէն :

(1) Պարզաբանութիւն Սաղմոսաց Դաւթի (սպեալ 1687):

Գ.

Վասիորի ճոխ ու բունաստեղծական տիերէն անցնինք պահ մը հիւսիսի ու արեւելքի խրոխտ ու հին նահանգները, ուր լեռնային անխոնարհելի բարձրութեանց մէջ վազուց բունած էին հին բարձրութիւններն՝ հայ իշխանաւորներու և Մեծատուններու : Ասոնց մէջ նշանաւոր են մանաւանդ Ղարաբաղն՝ իր Մելիքներովն ու Պարսկաստան՝ իր խաներով :

Այս մելիքներն՝ յաջորդ հին աղնուական տանուաէրներու և մեծատուններու՝ գլխաւորապէս իբր ասպետ նշանաւոր եղան իրենց ձիերով, գիւղերով, կալուածներով և ձիաւորներով⁽³⁾ :

Նոյնպէս խաներն ալ Պարսկաստանի մէջ ու Պարսկաստանէն դադիթեալ գաւառներու մէջ՝ նշանաւոր եղան իրենց արքունական ազդեցութեամբն՝ հարստութեամբ և ուսումնականութեամբ :

Մելիքներու իշխանութիւնը մեծութիւնն և տիրազոտները ժառանգական էին, անդրանիկ որդի 'ի հօրէ ու քստապատիկ լայն քան թուրքահայ Ամիրաներունը, կցորդուած իրարու աշխարհային ու խնամեկան շահերով և յարաբերութիւններովը :

Նոյնպէս խաներունը որ սուելի գիւանազիտական ու խորհրդականական էին Պարսկաստանի մէջ : Արաս Միրզայի ատեն ու իրմէն ստաջ Պարսկաստանի Հայերը՝ բացի վաճառական արհեստական ու երկրագործական պաշտօն-

(1) Տե՛ս մանաւանդ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւնը սպեալ 'ի Մոսկուա (1861) եւ Խաճնայի Մելիքութիւնները 1600—1827, սպեալ 'ի Թիֆլիս, 1882ին :

ներէ՛ կը վարէին նաև ամբողջ նահանգներու փոխարքայութեան պաշտօն, կը խառնուէին քաղաքագիտական գործերու, կը կատարէին պետական դանձր, ունէին մինչև անգամ ներքինի ու ներքինապետի պաշտօններ՝ Շահերու կանանոցներուն մէջ⁽¹⁾ :

Ղարաբաղի յոխորտ լեռնային ու յորդայիշատակ հողերուն վրայ և Պարսկաստանի երկրագործական նոյնպէս լեռնային և հովուական նահանգներուն և վաղեմի լայնիրա քաղաքակրթութեանց որբան քաղաքներուն մէջ՝ մելիքներէն ու խաներէն շատեր՝ արդարև ցուցած են ստպետական լեռնորդեայ արիութիւններ, նահապետական սոճմասիրութիւններ ու հարստութիւններ և նուրբ խորագէտ քաղաքայնութիւն մը, որ Հայէն դատ ոչ ոք արեւելքի մէջ կըրցած է ստանալ և իւրացունել այնքան դիւրութեամբ: Ըկուն ողի ու բարք, լեզուազիտական ու տեղագիտական սեպճական յարմարութիւններ՝ արժանի ըրած են անոնք անհաւատալի բախտաորութեանց, որոնց շորրորդ մասն հազիւ արձանագրուած է պատմաբար :

Հայ մեծկակ վիպասան մը՝ տեսած է Ղարաբաղի Մարդակերտ անուն գիւղն հարիւրամեայ ծերուկ հայ մը, Միրզա-Ասրի անուն, հմուտ՝ հայկական, պարսկական, արաբական և թուրք գրականութեանց, որ քանի մը խաներու թարգմանչութեան պաշտօն կատարելէ յետոյ՝ սպասարկած է նաև Գերմանացի միտիոնարներու : Կենդանի պատմագրութիւն մը իր բոլորի գաւաաններուն մեծատուն հայերուն, որոնց կենսագրութիւնը պատմած է յիշեալ վիպասանին՝ գլխաւոր աղբիւրը մելիքներու և խաներու վրայ մեր այս առձեռն յիշատակութեանց :



(1) Խամսայի ՄԷլիփուքիւնները (հշ 347):

Միւսնեաց չին մէլիքներէն գլխաւորները կըրնանք յիշել չոս ժամանակագրական կարգով մը, սակաւ առատացած պարագաներով՝ ըստ մերձաւորութեանն արդի ժամանակներուն :

Եւ նախ կը յիշուի առաջին դասակարգութեան մէջ՝ Մելիք Բէգլարեան (Պէլլէրեան), իր եզրայրն է Մելիք Թամրազը : Ապա՝ Մելիք Իսրայէլեաններ. Պաշէն Հասան Ջալալեաններ, որոնցմէ 16 դարին նշանաւոր եղան՝ Երեմիա Կաթողիկոս (վխճն. 1700), Վէլիջանբէկ, որոյ որդին Մուշքի-բէկ Երեմիայէն ետքը կաթողիկոս ըլլալով՝ ունեցաւ կարեւոր բանակցութիւններ Ռուսաց վերանորոգիչ ինքնակալ Մեծն Պետրոսի հետ : Մելիք Շահ-նազարներ, որոնցմէ Մէլիք Յուսէ, Մելիք Միրզաբէկ, Մելիք Աւանեաններ, Մելիք Ալլահվէրաի և այլք : Ասոնցմէ զատարար կը յիշուի՝ նոյն ժամանակներէն քիչ մը ետք՝ 18րդ դարի սկիզբները՝ հարուստ փարիսանրաշի Մելիք Աբով, որ աշխատեցաւ փոխադրել Ախալցխայէն իր Վրաստանի կալուածները հաղար հայ ընտանիք : Սաինք ունէր քոջ ձխաւորներու խումբեր : Մելիք Աբովի որդիներն են՝ Ռոստոմ-էկ, Սոյի-բէկ և Մանաս-բէկ, որոնց մէջ նշանաւոր եղաւ քոջն Ռոստոմ-բէկը, նոյն և բանաստեղծ, ըստ որոյ երգեց ալ իր վախճանն եզերական⁽¹⁾ : Նշանաւոր էր նաև Բեդրասպուրկի մէջ մեծանուն և բարեսէր աղայ Մինաս Լաղարեանը՝ շատ անգամ խօսակից ու խորհրդակից Ռուսաց կայսրին :

Մէլիք-Ջուռլուդ, որ իր արիական ծագացութեանց համար ստացաւ տասիճան Պոլկովնիկի :

Մէլիք-Ֆրէյտան, որ ինկա՛ւ եզրօրը ձեռքով⁽²⁾ .

(1) Խամսայի Մելիքուրիւնները (էջ 250) :

(2) Անդ (էջ 288) :

ասկէ ետքը Վրաստանի մէջ Մէլիքներու նշանակութիւնը կըսկսի իյնալ և կը տեղափոխի Ղարաբաղ :

Ղարաբաղի Մէլիքներուն մէջ առաջնակարգ են վաղմի ազնուական Աթարէկեանները, որոնցմէ կան Պօլկովնիկի աստիճան ստացողներ ալ :

Մէլիքներու հաւասարազօր էր նաև Բաղդասար Մետրապօլիտ Ղարաբաղցին՝ Հասան Զալալեանց տոհմէն, որ թէպէտ ոչ ուսեալ, բայց շատ հանձարեղ անձնաւորութիւն մըն էր, որոյ զուարճախօսութիւններն հռչակ հանած էին հասարակութեան մէջ նասրէտսին Հօծայի սուսկներուն չափ. ինք հիմնեց նաև Գանձասարի Վանքին մէջ⁽¹⁾ դպրոց մը, որուն վարժապետ եղաւ նշանաւոր Յովսէփ վարդապետ : Սա իսկապէս եպիսկոպոս էր՝ կրտսի, բայց թողլով իր բարձր աստիճանն՝ եղաւ վարդապետ մանկավարժութեան և կրթեց շատ աշակերտ, Բաղդասար Մետրապօլիտ ապա (1837 ին) կարգեցաւ թեմական առաջնորդ Ղարաբաղի Կարբեցի Յովհաննէս Կաթողիկոսի կողմէն, իր եղբայրը Մէլիք Ալանվերտի երկրորդ վախճանելով 1827 ին՝ իրմով վերջացաւ իր տոհմին Մելիքութիւնը :

1722 ին նշանակելի են նաև Մելիք Հայկազնեաններ, Տաթևի կողմերը՝ Օրբէլեաններ, Ղախանի մէջ Մելիք Փարսազանեան և Մեղրիի մէջ Շահումեան : Շահ Աբաս Մելիք Հայկազին շնորհած Ֆէրմանի մը մէջ ընծայած էր անոր Սասր-նիչին տխուհար, որ կը նշանակէ գահերէց, արքային մօտ գերագահող : Անոնց ամէնուն ակնարկած է Արել Եպիսկոպոս Մխիթարեան, միաբան էջմիածինի 19րդ դարուն, իր հեղինակած ձեռագիր Հայ պատմութեան մէջ (1761 էն 1857), շարունակութիւն Չամչեանի. կրտսի

(1) Գանձասարի հռչակաւոր վանքը 19րդ դարին խորհրդաբանն էր Ղարաբաղի Մելիքներուն :

թէ այս պատմութիւնը քանի մը հարիւր բուպլի կաշառ-
քով անցած է անժանօթ մէկի մը ձեռք և դատապար-
տուած մուսացութեան կամ այլակերպութեան :

••

Պարսից Արաս Միրզայ Արքան կազմած էր Հայոցմէ
առևտրական միութիւններ, որ կը գործէին ու կը մեծ-
նային վաճառականութեան մէջ՝ իր իսկ դրամադրութով
և որով ինք կուզէր ծաղկեցունել Պարսկաստանի վաճա-
ռականութիւնը : Այսպէս գործած էր նաև ժամանակին
Շահ-Արաս Միրզայ՝ սահմանափակելու համար զրկահարող
այլազեններն իր երկիրին մէջ՝ բարձրացուցած էր Հայե-
րու Մելիքութիւնը տալով անոնց առանձին շնորհներ և
սահմանելով ոսծիկներ : Պահպանելու համար Քրիստոնեա-
ները մոլեկրութենէ՝ նա կը յաճախէր մերթ Հայոց Եկե-
ղեցիները . իր ժամանակ Հայ Եկեղեցիներն սկսան զան-
գակահարութեան, սր առաջ արգիլուած էր . ինք ազա-
տեց նաև հարկէ Դավրէժի՝ արքունի քաղաքին՝ Հայերը,
մինչև ցայսօր կը աւել այդ արտօնութիւնը : Շատ աշխա-
տեցաւ տաք պահել սիրտերն իր հպատակ Հայերուն
Պարսկաստանի վրայ և առաջին առնել զաղթականու-
թեանց, բայց հակառակ այս օրհրկուն՝ 1827-28 ին
40000 Հայեր զաղթեցին արարատեան նահանգն՝ աւելի
հզօր ստիպումներով :

Փունահ խանը նախ՝ տկարացունելով հետզհետէ
մելիքներու մեծութիւնը և իշխանութիւնը՝ զնեց անոնց
կալուածները : Իր որդին Իբրահիմ խան և յաջորդներն
աւելի առաջ գացին ու այսպէս՝ Մելիքներու մեծութիւ-
նը նուազելով տակաւ առ տակաւ՝ երթալով մարեցաւ
մինչև 18րդ դարու կէսերը : Վերջին մնացորդ մըն էր՝

ասոնց շառաւիղներէն՝ 1860ին Յովսէփ Զաքարեան Զէր-
քէզեանց, պետական պաշտօնեայ Ռուսիոյ :

Արաս Միրզայի ժամանակները Պարսկաստանի մէջ
ժողկամ հայ մեծատուններու անուններն՝ համառօտ պա-
րագաններով կը յիշենք՝ ՚ի ստորեւ :

Եռուսեֆ-խան՝ սպանդար (մարզպան) Արաղբստանի,
երկրորդ Եռուսեֆ-խան՝ թօփճի պաշի, Մուսա էգ՝
թօփճի պաշի . Աղա-Եաղուբ՝ ներքինապետ Շահին, Աղա-
Իպրահիմ Ղարաբաղցի՝ աղղեցիկ ներքինի Ֆաթալի-շա-
հին կանանոցին մէջ . Աղա Եաղուպ Երեւանցի՝ ներքինի
ու մատակարար Ֆաթալի Շահին կանանոցին մէջ . բժշ-
կապետ Դաւիթ խան Մկրտիչեան Նոր Զուգոցեցի՝ Բարձր .
Դրան բժիշկ Ֆաթալի շահի ու Մահմէտ խանի ժամանակ-
ները . Սաղաղատ խան Սալմաստեցի՝ կառավարիչ Ասոր-
պատականի զանազան գաւառներուն . Դաւիթ-խան աս-
պետ և Միրզա Եռուսեֆ խան Մելիք Շահնազարեան աը
Ղապուբ՝ առաջինը թարգման Ֆաթալի Շահին, որ իբրև
լիազօր դեսպան Պարսկաստան զրկուեցաւ Նարոյէնն Ա. փ
քով, իսկ երկրորդն՝ հօրեղբորորդին էր առաջինին, և
զժողո՛ ըլլալով Պարսկաստանէն՝ գնաց Թիֆլիս, ապա Ս .
Բեղրազուրկ, ուր մնաւ . Զօ՛րապ խան խազնէտար
շահրիար, որ զանձապետն ու փեսան էր Ֆաթալի շահին,
Զօ՛րապ խան Վարդանեանց՝ արքունի զանձապետ Սպա-
հանի մէջ . Աղա Բահրամ՝ ներքինի, ամիր գլխանխանէ :
այսինքն՝ պետական զիւանապետ . Զօ՛րապ խան՝ Ռու-
լամիլի-Սղմաթ բաշի, Շահի արքունիքին սենեկապետ-
ներուն գլխաւորը . Եռուսեֆ խան ամիր թօփխանէ՝
պարսկական հրետանիին գլխաւորը՝ Թիֆլիսցի Բաղկալ
Գեւոյեանց տունէն . Սպանդար-Սան իշխանազն Ամատունի՝
Թիֆլիզցի, Ղուլամ-Փիշկուզմէթ, սենեկապետ Շահի, Ալ-
լահ-Վէրալի-բէկ Ղարաբաղցի՝ Մահմէտ Շահի մէօհլուր-

տարը, Ոսկան-Սամուրի Սպահանցի՝ վաճառական Փաթա-
լի շահի, Մահտեսի Յովհաննէս Ղաղարեան Դաւրէժցի՝
վաճառական Աբաս Միրզայի, սա ազատեց բանտարկու-
թենէ վշտաշարչար Դանիէլ Կաթողիկոսը (19րդ դարին
ակիզքը)։ Մունուշար խան, որ ունէր Մոտամէտ-ու-տ-
աօլէ տիտղոսը, որ կը նշանակէ նեցուկ պետութեան։
Ինք էր Էնիկօլօբեաններու տունէն, և այն աստիճան
բարձրացաւ Պարսկաստանի մէջ, որ վարեց ժամանակ մը
Թաշտիի, Սպահանի, Լոռասանի, Բակտրիայի, Շուշաէրի
ու Դասֆիղի նահանգներուն փոխարքայութեան պաշ-
տօնը։ Խոսրով խան վաղի թիֆլիսցի կայիթմազեանց տոն-
մէն և շատ ուժեղ բլլալուն համար կը կոչուէր նաև
Խոսրով խան շիր (առիւծ)։ Սէթի խան Բուշեցի, ՚ի
ակզրան ծառայեց անգղիական զեապանատունը, ապա
մտաւ Պարսից ծառայութեան և իր որդին Մատուր խան
ստրճանդ (գնդապետ) եղաւ թարգման առաջին Դաւրէժի
արտաքին գործոց նախարարի պաշտօնէութեան մինչև
1882էն ստղին։ Դաւութ խան կամ Ժան Դաւութ խան
Զմիրսնացի, առաջին թարգման նասրէտտին շահին.
Թաղէոս խան կամ Թուրաթ խան Դաւրէժցի, ճէվահիրճի
պաշի, ակնագործներու գլխաւորը Բ. Դրան, Իսմայիլ խան
Մելիք Մինասեան Դաւրէժցի, ճէվահիրճի պաշի նոյնպէս,
Եռսուֆ բէկ Էնիկօլօբեանց՝ թիֆնապահ Աբաս Միրզայի,
Սիւլէյման խան Էնիկօլօբեանց, իրբև զօրավար երևելի՝
այն աստիճան բարձրացաւ Պարսկաստանի մէջ, որ կառա-
վարութիւնը շնորհեց անոր Սաւր-Տեօլիկ տիտղոսը, որ կը
նշանակէ սուր պետութեան։ Երկար ատեն վարեց Շիրա-
զի, Բակտրիայի, Լոռխասանի, Շուշեթերի և Դասֆիղի
փոխարքայութեան բարձր պաշտօնը։ Իր որդին է ժէնէ-
րալ նարինան-Պանը, որ այժմ Վիեննայի պարսկական
զեապան է՝ Փեսայ Պօղոս պէյ Տառեանի այրի աղջրկան

և հայրագիր նէվրուզ Արթուրի խանի, թոռն Յարութիւն ամիրայ նէվրուզեանի, որ 1905ի կէսերը վախճանեցաւ Աւստրիոյ մէկ քաղաքին մէջ : Սիւլէյման խանի մուսորդին է գեներալ Ջհանկեր խանը՝ ու Ղաֆի Աջուղան բաշին միանգամայն ամբողջ Պարսկաստանի արդիւրբի գլխաւորը : Աւագ խան Մէլիք Մէհրապեանց, հին Նախիջեւանցի, կը ծառայէր Դաւրէթի Ռուսաց հիւպատոսարանը, միանգամայն տեղացի ուսանալատակ վաճառականներու թածիր պաշին էր, այսինքն՝ առևտրական գիււանի գլխաւորը . իր կատարած նշանաւոր գործերով՝ ստացաւ մեծ յարգանք ու հռչակ Պարսկաստանի մէջ, և թողուց անմտանալի յիշատակ տեղային քրիստոնեաներու մէջ՝ երկու անգամ ազատելով Դաւրէթի Հայերը զայրացած պարսիկներու սարսափելի սպառնալիքէն : Իր որդին՝ Սուլէյման խան կը վարէ Թիֆլիզի արևելեան լեզուներու գլխաւոր ցենզօրի պաշտօնը :

Բացի զինուորական, քաղաքական, դիւանագիտական ասպարէզներէն, բացի Շահի Բ. Գրան մօտ զանազան նշանաւոր պաշտօններ վարելէ՝ Հայերը Պարսից հոգեւոր դասին մէջ ալ երևելի եղան, ՚ի հարկէ, կրօնափոխ ըլլալով : Ատոնցմէ յիշելի են Մօլլա Բաշի, Միրզա Աքասի անունը, Հաճի-Մօլլա Քարիմ Տէր Գրիգորեանի անունը, որոյ եղբօր թոռը Թիֆլիսի Մոզնի եկեղեցիին քահանայ եղաւ :

Աւելորդ չենք համարիր նկատել՝ որ վերայիշեալ անձնաւորութիւններէն ոմանք Աղամամատ խանի Թիֆլիսէն ու Անդրակովկասի ուրիշ տեղերէն տարած (1795-ին), ոմանք ալ Աբաս Միրզայի Ճեցիանօվ իշխանի հետ ունեցած կռիւի ժամանակ (1804ին) Ապարանէն տարած գերիներէն են, որ իրենց ձեռքերով Պարսկաստանի մէջ ալ հասան բարձր պաշտօններու : Թէպէտեւ ասոնց բոլորին անունը կը կրէ Պարսկական ձեւ՝ բայց անոնք, մէկ քանի բացառութիւններէ զատ ամէնն ալ Քրիստոնեայ մնացին՝ հաւատարիմ իրենց հին կրօնին ու տոմարն :

Դ.

Վերոյիշեալ հին խաներու և մելիքներու լայն նախապատուութիւններն որչափ որ անհետացած ալ 19րդ դարին կէսերը՝ նոյն դարին վերջերը, սակայն, պարագաներու բերուածով թէ՛ Ռուսիայի թէ՛ Պարսկաստանի մէջ բաւական բարձր պաշտօններու կրօնացան հասնիլ կարգ մը նոր անձնաւորութիւններ, որոնցմէ կրնանք անուանել աղայ Կարապետ Եղեանցը, բարեսէր ու կրթասէր անձնաւորութիւն մը, Աղայք Մկրտիչ Սանտարեանց և Յովսէփ Իզմիրեանց. Յովհաննէս Ասն Չմիւռնացի՝ կցորդ պարսկական ղեապանին ՚ի Կ. Պոլիս, Գրիգոր Ասն Շամտանճեան՝ վաճառական, Յարութիւն Ասն Թրեաքեան՝ բժիշկ բանասէր և այլք :

ժամանակագրական շարունակութեամբ՝ 17-րդ դարի կէսէն սաղին ալ հետզհետէ կրնդարձակին նաև Թուրքիայի Ռուսիայի ու Պարսկաստանի և հետեւարար Մուկուայի, Ս. Բեղրսպուրկի, Դաւրէթի ու Կ. Պոլիսի գործառնութեանց գլխաւոր մասնակցողներն եզոզ Հայերուն գործերն ու ազդեցութիւնները : Նոյն ժամանակին՝ Կ. Պոլիսի դաւառացի երեւելի վաճառականներէն էին պարոնայք Միրզէ ու Սոսրով՝ Յակոբ Կաթողիկոսի ծանօթները : Բայց Պոլիսի մէջ ժամանակակից ամէնէն նշանաւոր դէմքն է Ապրոյ Չէլէպին՝ Նպարգոսին մարդն և խորհրդականը, Եղիազար Այնթապցի Կաթողիկոսին մտերիմն ու պաշտպանը, որու սերունդէն ելած են հետզհետէ՝ մինչև և մեր օրերը՝ նշանաւոր և ուսեալ մարդիկ, ծառայելով թէ՛ տոհմին թէ՛ պետութեան հաւասար ջերմութեամբ և հաւատարմութեամբ :

Տասն և և եօթներորդ դարին՝ Երուսաղէմի Գրիգոր

Պարոն Տէր | Մարգարեան գանձակեցի Պատրիարքին⁽¹⁾
Ժամանակակից է նաև Բաղիշէցի մանասի Ամիրազիզ
Ամիրխան բանասէր ու աստուածասէր Ազան, որ շատ
անգ՝ մինչև Հոռոմ իսկ՝ ուխտաւոր զնաց՝ քրիստոնեայ
խնասաստէրի մը վայելուչ անխտրութեամբ. իր բարեկամ
Գրիգոր Պարոն-Տէր Պատրիարքը կարգեց զինքը նուի-
րակ Ս. Յակոբեանց՝ անոր քաղցրաբանութեանն և երու-
սազէմասէր նախանձաւորութեանն համար :

Այդպէս՝ աշխարհական կրօնասէրն՝ իր համարյր բար-
քովն և անրիժ վարքովն օգտակար եղաւ Ս. Յակոբ-
եանց վարդապետէ մը աւելի. ամէն մարդ առատ դրամ
կուտար վանքին՝ անուշեղու Ամիրազիզի ձեռքով, բա՛ւ-
էր որ ինք բերան մը խնդրէր. և վախճանեցաւ Երու-
սազէմի մէջ՝ վրան արձանագրեալ քար մը անգամ չէ
գրուած, ըստ վկայութեան Ս. Յակոբեանց վարդապետի
մը : Պարոն-Տէր պատրիարքի օրով մանաւանդ՝ արեւելցի
մեծ վաճառական Հայեր շատ նպաստեցին բառնալու հա-
մար՝ Վանքին ծանր պարտիքը. և ինք երանայիշատակ
պատրիարքը⁽²⁾ կը վայելէր թէ՛ պետութեան թէ՛ սոհմբն
ամէնապատահ վարկը, գոհարանական մաղթանքի մը ա-

(1) Այս պարոն Տէր դրուսանունը, որ բացառիկ մակդիր
մըն է ազնուականութեան, Գրիգոր Պատրիարքին առաջ 1564 թուին
տրուած է նաև Երուսաղէմի Անդրեաս Պատրիարքին, որ՝ Ս. Արո-
նին բարեբարեւեռէն եղած կը պատմագրուի՝ զնաժ ըլլալով մանա-
ւանդ Արոնին համար շատ կաշուածներ, ինչպէս վանքին արեւ-
մասկողմի պարսպաց մէջ մեծ պարեկն և վանքին կցորդ ուրիշ
վայրեր : **Տե՛ս Յաջորդութիւն Պատրիարքաց Ալմի.** Բառնարաս
վարդապետի Գանձանակեցոյ (տպ. 'ի Պոլիս 1872. էջ 52) :

(2) Իր անունով գեղեցիկ այգի մը կայ Բեթղեհեմի ճամբուն
վրայ՝ հովասուն և բարձրայիւր, քարունի հիմունուրց վանասու-
նով մը և զեւեալոր գերեզմանասունով. հոս երբեմն օղախո-
խէշ կ'երթան Ս. Յակոբեանց վարդապետի :

սխիստով՝ անգամ մը Բեթղեհէմի մէջ 500 ոչխար մատաղ
բրաւ ի ցոյց երախտագրիտութեան ժամանակին վեհա-
փառ Սուլթանին և ստացաւ մեծ շնորհներ, ինչպէս կը
գրէ Յրանչիակեանց մեծաւորն⁽¹⁾ իր եռնասոր Ս. Տեղ-
եաց պատմութեան մէջ :

* *

1681ին՝ Պոլիսի Հայերը կը բնակէին զլիսաւորաբար
Գուս-Գարու, Վլանկա, Եէնի-Գարու, և ասոնց եկեղե-
ցին էր Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին՝ արդի միջ-
նատաճարին տեղը, բայց ոչ այնքան բնդարձակ : Սա-
մաթիա ունէր 1000 տուն, եկեղեցի՝ հինաւուրց և Պատ-
րիարքական՝ Ս. Գէորգ. իսկ Եէնի-Գարու և Պալատ՝
Եկեղեցի Ս. Հրեշտակապետ. Ղալադիա՝ Ս. Գրիգոր Լու-
սաւորիչ. Սկիւտար Եէնի-Մահալլէ՝ Ս. Կարապետ շին-
ուած վանեցի Զաքարիա վրդ. Էն, որուն միջնադարեան
կոթիկ տապանաքարը կը գտնուի Պաղար-Պաչլլի գե-
րեզմանատունին Եէնիմահալլէյի բաժինին մէջ : Նոյն տա-
րիները, ըստ եւրոպացի պատմիչի մը,⁽²⁾ Կ. Պոլիսի մէջ
կային իբրև 40000 բնիկ և 50000 պանդուխտ Հայեր :
Հայոց թիւն ի Կ. Պոլիս ամեն ատեն հազիւ 150000ն
անցած է ու այն՝ 19րդ դարին կէսերը :⁽³⁾

Ամիրաներէն Պատրիարք ալ եղածը կայ, ու թե-
րևս ժամանակին պահանջներուն կարի՛ իմաստուն հա-
մակերպութեամբ մը : 1679ի մեծատուններէն էքսէքճի
պաշի Սարգիս՝ աշխարհիկ վիճակովը բարձրացաւ մինչև
պատրիարքական տեղապահութեան. ապա ընդունելով

(1) Բեռ Լիեվեկն, Ս. Տեղիթ, երեխ հասր :

(2) Գեյգեր :

(3) Ոմանի՛ մանուանց Հ. Ղուկաս Ինճիճեան՝ կը չափազան-
ցեն այս թիւը կրկնապատիկ քանակով :

եկեղեցական վիճակ՝ եղաւ Պատրիարք, ինչպէս կար-
ձանագրէ ինք Չամչեան ալ։⁽¹⁾ Այս միջոցին՝ Կոստան-
դինուպոլսեցի Յովհաննէս կաթսկոպոսն ալ կառնէ Երու-
սաղէմի Պատրիարքութիւնը . ինք թուի միա՛կ Կ . Պոլ-
սեցի Պատրիարքն է Երուսաղէմի հազարամեայ Պատ-
րիարքութեան մէջ : Երուսաղէմացիք ցարդ ունեցած են
մասնաւոր խորշում մը Կ . Պոլսեցիներուն հանդէպ՝ ա-
նոնց դրամներն առատ առատ քաշելով՝ հանդերձ , Կ .
Պոլսեցիք ալ փոխադարձաբար շատ մնալ չեն ուզեր Ս .
Յակոբեանց մասնաւոր խուցերուն մէջ . Ս . Յակոբեանք
կրանն՝ թէ Պոլսեցիք հոս գերեզման չունին , թերեւս ու-
րովհետեւ չեն ալ ուզեր ունենալ :

Կ . Պոլիսի պատրիարքութեան վերոյիշեալ յանդուզն
նախընթացին վրայ՝ 1684ին դարձեալ աշխարհական ե-
րեւելիներէն Սաքայ օղլու և Շահին անուն տեղակալ-
ներ կ'ելնեն Կ . Պոլիսի Պատրիարքական աթոռը , և կը
վարեն զայն քանի մը տարի :

Այսպիսի հօր աշխարհական մեծատուններու օգնու-
թեամբն էր՝ որ յիշեալ Կ . Պոլսեցի Յովհաննէս կաթսկո-
պոսը Պատրիարք եղաւ Երուսաղէմի աթոռին և իրեն իշ-
խանակից ըրաւ զանոնք «տեղակալ» անունով՝ իր Պատ-
րիարքութեան առաջին տարին⁽²⁾ : Այս միջոցին (1685—
1706) մեծ յուզումներ տեղի ունեցած են Պատրիարքա-
կան աթոռին շուրջն և Կ . Պոլիսի Հայերուն մէջ առ
հասարակ , ինչպէս արձանագրուած է 1709ին Պոլիս

(1) Չամչեան, Հատր Դ. Աշխարհականաց միջամուխ լինելն
այսպէս Պատրիարքական իշխանութեան՝ եղանակով մը արտօնուած
էր Օսմանեան Պետութեան հրովարտակներուն մէջ. (Պատմ. Հայ
եկեղեցւոյ, Մեյլիսեղիկ Մուրատեան վարդապետի, էջ 566—567):

(2) **Յաջորդութիւն Պատրիարքացն Երուսաղէմի**, Յատ-
մարաս Վարդապետի Գանձակեցւոյ (էջ 56):

տպագրուած Ազաթանգեղոսի մը յառաջարանին մէջ⁽¹⁾ : Գրիչն այսպէս կը համառօտէ այդ յուզումը . «Յորժամ Նորին (Տէր Ազեքսանդր Կաթողիկոսի) հրամանաւ ես նուաաստ Աստուածատուր վարդապետ՝ ձեռնասուն աշակերտ ի մանկութենէ սոյն հայրապետիս՝ զայի ի նուիրակութիւն ի մայրաքաղաքս Բիւզանդեան, ետ ինձ զգիրքս զի բերեալ տացից Մանտեսի Գրիգոր դպրին՝ զի տպեցէ, և ՌՃԾՁ թուոջ և յամսեան Ապրիլի եօթներորդի ժամանեալ հասի ի Կ. Պոլիս, և տեսի զի խռովութիւնք յուր զք յուզիւր ի քաղաքիս, ամենեցունցդ յայտ է, յազագս որոյ եղև խափանումն իրողութեանս մինչև ի թիւն ՌՃԾԸ» :

1700—1707ին՝ շատ ազդեցիկ էր Խօժա Մարգար Պարթևեաղն գործօն և հարուստ Հայ մը, որ ջերմ կուսակիցն ալ էր Աւետիք Պատրիարքի : 1702ին կը յիշուին՝ իբր ազդեցիկ ու մեծատուն անձնաւորութիւններ՝ Թիւթէլ օղլու Յովհաննէս, Սահապ-այար⁽²⁾ Երեմիա, Թիւթէլ օղլու Յարութիւն և Էսկի օղլու Նիկողոս, որ եղան նաև հակառակորդներ Աւետիք Պատրիարքի : Կը յիշուի

(1) Այս միջոցներուն կ'որ կը շեշտուի Կ. Պոլիսի մէջ յարու-մը յասիւնական դաւանութեան, և առաջին անգամն ըլլալով կը շտուի ի հոն ի Հայս՝ կաթողիկ, Գառնկացեալ, ուղղափառ, ոչ ուղղափառ կամ հարափառ յորոշումները՝ ձայներ աւելի ասեղութեան քան դաւանաբանական խտրութեանց նոյն եկեղեցիի զաւակաց մէջ, որուն առաջին ի սկզբան իսկ անդ առնելու շան-հերն Եղիազար կաթողիկոսին և Երեմիա Զեյքայիին չյաջողեցան՝ իրենց վերահաս վախճանին պատճառով :

(2) Զարայիսանէյի մէջ վերագոյն գործ մըն էր Ասահապ-այարի պաշտօնը մեծ, Զարայիսանէ Նազրիի պաշտօնէն ետ, որ հին ասեղները շատ անգամ Հայերունն էր, իսկ այժմ միայն Տաճկաց կը տուի՝ 120 տարիէ ի վեր :

նաև յԵւդոկիա⁽¹⁾ Թորոս անուն ազնուարարոյ առաջա-
կաց նախագահ մը՝ 1708—1710ի միջոցները, որ ոգիով
չափ ինամատար էր հասարակութեան կարեացն և բարե-
կամ Մխիթարի նորահաստատ Միաբանութեանը. իր քով
ի պահ դրուած էին Մխիթարի նպատող բարերարաց
դրամները, և այս պատճառով՝ մատնուեցաւ շատ հա-
կատակութեանց ու տագնապներու:

1704էն մինչև 1706՝ հռչակաւորն Աւետիք Պատ-
րիարք, իբրև նախանձաւոր եկեղեցականներու իշխանա-
կան իրաւունքին, կը յաջողի վերջապէս բաւական նեղը
ձգել ատենին պմիրաններուն հարուստներն ու իշխանա-
սէրները: Անոնք ալ՝ միաբանելով վերի հակառակորդնե-
րուն հետ՝ կը հրաժարեցունեն զինքը մեծ դժուարութեամբ:
Ահա այդ միջոցներուն է, հաւանարար, որ կը զայրանայ ու
տեւական կամ պատմական երեւոյթ մը կառնէ՝ վերի գրի-
չին յիշատակագրած յուղումներուն հետ՝ Պատրիարքու-
թեան ու ամիրայութեան մէջ իրարու վրայ իշխելու և
իրարու հրամանահան ըլլալու կաշառարոյծ նախանձաւո-
րութիւն՝ մանաւանդ հանուրին միասակար կիրք մը, որ
տեւած է մինչև 1863 թուականը, և, շրջան ընդ մէջ,
մինչև մեր օրերն իսկ:

Նոյն ատեններն է (1705)՝ որ Աւետիք Պատրիարք
կերթայ Ֆրանսական դեսպանատունն՝ հետն առած երեկ
հարիւր հարուս և երեւելի Հայեր՝ վերցունելու համար
բանադրանք մը: Աւետիքէ անմիջապէս ետքն է որ Կ.
Պոլիսի մէջ կը յուղուին Լուսաւորչականութեան և Հոռ-
մէականութեան վշտալից կոիւները, որ զմիւսնացի Գրի-
գորեան Յովհաննէս Պատրիարքի օրերուն կառնեն զայ-
րադին երեւոյթներ և կը յանգին աղետաւոր վախճաննե-

(1) Պատմութիւն կենաց և վարուց Մխիթարայ Աբրա-
հոր, Եօրիկեայ Տ. Տ. Ստեփանոս Կիւլքր Ազունց Աբրայի, 1810
(էջ 175—176):

բու : Նոյն Յովհաննէս Պատրիարք պատճառ եղաւ քանի մը երեւելի մեծատուններու զաւալի անկումին ալ , որոնց անուններն են՝ Տուբուշեան Մանուկ , Մահեսի Արքահամ Բարա օղլու (թերեւս Բարաքէշեաներու նախահաւը) , Մուրատ Թէրճիման , Շահամիրեան Առաքել , Պէնկիի Յարութիւն , Նորտունիեան և Մխլէյիմեան ու այլ կարգ մը նշանակելի անձնաւորութիւններ : (Տես Չամչեան հատոր Գ . էջ 757) :

Գարձեալ՝ երկու տարի ետքը , 1707 ին , է որ եպարքոսական հրամանով՝ Ասչատուր Մարկոսեան և Տօնապետ Վարդանեան ազդեցիկները ճամբայ կելնեն Կ . Պոլիսէն Եւրոպա՝ գտնելով Աւետիք հախախեալ ծածկեալ պատրիարքը բերելու համար զայն Կ . Պոլիս , ու կը վրիպին , Ֆէրիոլ ֆրանսական դեսպանին նախապատրաստեալ երկդիմութեամբը , թէպէտ և ժամանակին Օսմանեան վեհապետն ալ ջերմ փափագող էր , հայ ժողովուրդին հետ , արեւմտացեալ ու անհետացեալ Աւետիքի դարձին (1) :

•

Վիպական ու կարի՝ հետաքրքրական այս դրուագներէն ետք , որ Թուրքահայերուն պատմութեան ամենէն անանդորր փուլերէն էին , ու Շիրաչյակիր(2) Գրիգոր Երուսաղէմի խաղաղիկ ու արդիւնաւոր Պատրիարքէն քանի մը տարի առաջ՝ Ս . Յակոբեանց վանքին խեղճութեամբ հզօրացէս օգնած են դրամական ու նուիրական նպաստներով՝ ժամանակին ամիրաներէն Թէվէքէլեան Յարու-

(1) Տես Երկաթէ դիմակով մարդը , և Հայոց Աւետիք Պատրիարքը , Մարիոս Թօրքենի , քարգմ . Կ . Ս . Իւրիւմեան (սպագր . Կ . Պոլիս 1870) :

(2) Իսկ այլագգիները կանուանեին զայն Զինհիրլի վարդապետ՝ Երուսաղէմի պատրիարքի թարգմանի համար իր վիզէն կախած կամակիր շիրային պատճառով :

թիւն, Պոլսեցի մահտեսի Իսրայէլ, մահտեսի Լուսթֆի, Ակնեցի Երեւանեցի մահտեսի Սեղրեսարոս Մանուէլեան՝ Պազիրկեան պաշի, որ էր ամէնաճոխ սեղանաւոր, ու եղաւ վաճառապետ արքունի⁽¹⁾։ Իր ժամանակին Կ. Պոլիսի մէջ ամէնէն մեծատուն հայը, որոյ հարստութիւնն առակաւորեալ է ցարդ հայ ժողովուրդին բերանը։ Այս օգնողներուն մէջ՝ Մահտեսի Սեղրեսարոսէն ետք՝ ամէնէն ազդեցիկն եղած է Կեսարիայի Տարսիսի գիւղին Արապ օղլու Մելիտոնը⁽²⁾, ճարտարապետ վեհ. Սուլթան Ահմէտ Գ. ի, որ Բ. դրան ալ մեծարուն էր⁽³⁾, նաև՝ Մահտեսի Սեղրեսարոսի ընկեր Հովուեան Մահտեսի Յարսթիւն՝ նախահաւն Հովուեանց տոճմն. նոյնպէս կեսարացի Սարգիս Սալթան, որ ժամանակին արքունի ճարտարապետն ու Ղալաթիայի եկեղեցիին վերաշինողն և միւս եկեղեցիներուն ալ պաշտպան հողարարձուն էր⁽⁴⁾։ Եւ ասոնք ամէնը կը յիշուին ժամանակին զրուածներուն մէջ՝ մեծապատիւ յիշատակութեամբ՝ պերճաշուք անունով։ Կան դաս մը մահտեսի պայազատներ ալ, որ յիշուած են Կ. Պոլիս տպագրուած Հին Հարանց Վարքին յիշատակարանին և ուրիշ ձեռագիրներու մէջ, ամէնն ալ սիրող եկեղեցիներու մանաւանդ Երուսաղէմի ու խաղաղութեան և ամէնն ալ սիրուած անոնցմէ։

Ղալաթիայի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին Ս. Յակոբ

(¹) Յովհ. Հաննայ, պատմ. Երուսաղէմի, տպագր. Բ. 1767 (էջ 139)։ Երուսաղէմի արքունի այս մեծանուն բարեւարը վախճանած է ի Կ. Պոլիս՝ Իսահակ Պարբուի տօնին երեկոյցին, 1754 Փետր. 5։

(²) Զ. Ղուկաս Ինճիհեան, Եւրոպիա (էջ 131)։ Նաև Բ. ծանօթութեանը մէջ։

(³) Նոյն, անց (էջ 169)։

(⁴) Կեսարացիները 18րդ դարուն ալ արքուն գործօն և ի հզօր էին Կ. Պոլիսի մէջ հանրաբար, ինչպէս կը վկայէ Նուրսինեան վարդապետ ալ իր ոսանաւոր պատմութեան մէջ Սարգիս Սարսթեանի։

մատուռին դրան վրայ կը յիշուի նաև Սերաստեան զարմ մը, որուն սերունդէն ըլլալու է 19րդ դարին մէջերն յիշուած Պօղոս Սերաստեան նշանաւոր գրագէտն՝ հեղինակ մ'ած բառարանի մը (ձեռագիր) :

Այս միջոցներուն նշանաւոր եղան նաև Վենետիկի մէջ հաստատուած կարգ մը հայ վաճառականներ . երևելի էին ասոնց մէջ՝ քանի մը Զուգայեցիներ Շահրիմանեան ազնուական տոհմէն, որ մեծ հարստութեամբ անցնելով Եւրոպա՝ հաստատուեցան Վենետիկ : Ասոնցմէ երկու եղբայրներ՝ Նազար ու Շահրիման՝ երթալով Գերմանիա՝ մեծ ընդունելութիւն զտան Լէոքոլտ կայսրէն, որ անուանեց զանոնք ու բոլոր անոնց առձմը՝ Շահրիմանեան կոմս, կարգելով զանոնք Մաճառխտանի բնիկ կոմսերուն զասը : Այլ ապա իրենց որդիներն ու թոռները, ինչպէս Վենետիկի Հայերէն շատերը, քիչ քիչ փոխեցին իրենց լեզուն և ազգն ու եղան խաւացի . շատերն ալ մեռան անժառանգ և ոմանք ցրուեցան զանազան աշխարհներ :

Կայ Վենետիկի մէջ Երեման Ս . խաչի մասնաւոր եկեղեցի մը Հայոց, որ թէպէտև փոքր է, այլ գեղեցիկ է ու գմբէթայարկ, երևելի վաճառանոցին մէջ Ս . Մարկոսի մօտերը : Գրիգոր Կիրաք Միրման հայը վերստին շինեց այս եկեղեցին հիմէն՝ 1688 ին : Վենետիկի մէջ էր նաև որ ամէնէն առաջ տպագրուեցան հայ լեզուով շատ գիրքեր, ինչպէս վերջերը Ս . Ղազարու Մխիթարեանց ձեռքով ալ . Ամէնէն առաջ տպագրուեցան հոն Սաղմոս մը և Յիսուս որդի, մին 1642 ին միւսն 1643 ին :

Երուսաղէմի մէջ Գրիգոր Շղթայակիրի ու Կ . Պոլիսի մէջ Յովհաննէս Կոլոտի եղբայրական Պատրիարքութեան իրրև քսանըհինգ տարուան միջոցը՝ կերելի արձաթ-գար մը շինութեանց և ուսումնասիրութեանց, մինչ

ամիրաներ, մահտեսիներ, աղաներ, ուսումնասէր վարդապետներ ու եպիսկոպոսներ՝ շուրջն առած այդ երկու ամլածիններուն⁽¹⁾՝ կառուցին իմացակաւն բարեկրական և աստուածսիրական շատ բաներ, ու տպագրեցին և թարգմանել տուին կրօնական ու սրտմական շատ գիրք։ Այդ արծաթ-դարին⁽²⁾ ծաղկած են, ի մէջ այլոց, ձամճուղատէ լեզուազէտ Յակոբ դպիրը՝ թարգմանն Շուէտի դեսպանին ի Կ. Պոլիս, որուն բարեկամն էր Նալեան յաջորդ պատրիարքն և անոր թարգմանել կուտար իր փափագած եւրոպական հեղինակները. ձամճու ողլու ալ կոչուած այս Յակոբ դպիրը՝ թարգմանած է ֆրանսերէնէ Գիրք խրատակակներ. յունարէնէ ալ թարգմանած է 1749ին յունական ժամակարգութիւնը, և լատիներէնէ՝ 1723ին՝ Գիրք ուսմանց վասն բարոյն կենցաղավարելոյ, ու՝ 1745ին՝ Նեւտոնի փիլիսոփայութիւնը։ Ասոնց ձեռագիրները կը մնան Երուսաղէմի Հոյոց վանքին մատենադարանը, մինչ Կ. Պոլիսի ձեռագիրները կը յաճին ցարդ ու կը շահածին անդո՛յս աներեւոյթներո՛ւ մէջ...

Նաև հոչակաւոր է կեսարացի Բարսեղ արքունի նկարիչն ալ, որ հանած է բարձր անձնաւորութեանց կենդանագիր պատկերները։ Յովհաննէս Կոլլոս Պատրիարքի ժա-

(1) Բաղէշի Ամրոզլոյ վանքէն էին անոնք, եւ գլխաւոր աշակերտները Վարդան Բաղիշեցի մեծ վարդապետին։ Եոյնպէս այն վանքէն էր Արտահաս Նուրսիեան վարդապետ ֆերթոյ պատմագիր։

(2) Ժամանակակից մեծ գրիչ մը երկարի կանուանկ այդ դարը, շուրջ ողբալի ժամանակ մըն էր ազգին համար, մինչ սգիտութեան առագաստը կը պատէր կը պաշարէր ամէն կողմ. նուազութիւն հոգեկիր առաքինասէր եւ իմաստուն հոյփուներու, անկրթութիւն անուսումնութիւն մանկւոյն եւ անարժան եկեղեցականութիւն. **Վարք Մխիթար Արքայի, Ազունց Դիւլիեր (Կիլ 238—239):**

մանակակից կը յիշուի Բաստեանց տո՛մը (Բաստ օղլու), որոնց տունն ապաստանեցաւ երբեմն Կոլոտ՝ ժամանակակից կեսարացիներուն և ռամիկներուն երկիւղէն, թերեւս Հռոմէականութեան հետ իր հաշտ վերաբերումներուն պատճառով, վասնզի գլխաւորապէս Կեսարացիք իրբեւ միշտ աններող եղած են ընդդէմ Հայ Հռոմէականներուն⁽¹⁾ Այս Բաստեանց հին տո՛մէն համարելի է 18րդ դարի սկիզբները ծագկող մատենագիր Միքայէլ-Րէստէն բժիշկը :

Ասոնցմէ եւքն է Ճէվահիրճի Մաղաքիա Չէլէպին, ազգական Քէօմլւրճեանն Երևմիա Չէլէպիին, և Սեդրոսեան Յովհաննէս Չէլէպի կամ Մարգիղ՝ մատենագիր ամիրան, որ խաղերէն ու հայերէն քանի մը հրատարակութեանց հետ՝ ունի նաև զրած Բաղալական պատմութիւն մը և ծանօթութիւններ Տէր Կոմիտասի վրայ⁽²⁾ : Ապա կը ծաղկին հետզհետէ Նալեան Յակոբ Պատրիարքի խաղաղ օրերուն յառաջադէմ ամիրաներն ու արուեստագէտները, որ կը դնեն հիմը 18րդ դարի արուեստական սեղանաւորական ու խնայական զարգացումներուն թուրքահայոց մէջ :



(1) Տաղալափեայ վկայ՝ Նուրսիեան ժամանակակից վարդապետի. Չեռագիր Կ. Պոլիս Անտոնեան Հարց Մատենադարանին Օրբագիւղի (Երգ Դ. :

(2) Սեդրոսեան Յովհաննէս Չէլէպիի խնդրանքով սպազրուած է 1752ին ի վեներտիկ Մովսէս Խորենացիի պատմութիւնը, երկասիրութեամբ Սարգիս Վարդապետի Կոստանդինուպոլսեցոյ : Ինք ու ձկնաճիւղի Մաղաքիա Չէլէպին գրած են Տէր Կոմիտասի վարձն ալ :

Ե.

Թուրքահայոց մանաւանդ այս խնացական զարդացումներուն հայր կը համարուի, ըստ ժամանակագրական կարգին, Յանրապատցի Աստուածատուր Աստուածարան վարդապետն ալ՝ Գրիգոր շքեայակիրի ու Յովհաննէս Կոլոտի հետ՝ որ 1706ին միջոցները նուիրակ եկաւ Էջմիածինէն Կ. Պոլիս և որուն համար կը վկայուի⁽¹⁾ թէ րանասիրական ու փիլիսոփայական ուսումներու նախասկիզբներն աւանդեց բարունարար Կ. Պոլսեցի պատուելիններուն. իր առաջին աշակերան հասաւ Պաղտասար մատենադիր ու լեզուագէտ պատուելին՝ դպիր ըսուած յառկապէս, որ էր նախան Յակոբ Պատրիարքի Իրան գրագէտը, ժամանակակից մասնագրական հրատարակութեանց Մենտորը: Պաղտասար գրած է շատ գործերու հետ՝ Լնդարձակ պատմութիւն մը տոհմային, որ աներեւոյթ եղած է: Ասոր վրայ քիչ մը վարն ալ:

Փիլիսոփայ և մատենագիր նախան Յակոբ Պատրիարքի օրերուն՝ ինչպէս իր հոգեւոր հօր Կոլոտ Յովհաննէս Պատրիարքի⁽²⁾ ժամանակ՝ փայլած են նշանաւոր դաւառացի ամիրաներ նուժայական բեղուն խաղաղութեան մէջ, որ տուած է բացառիկ գրոշմ մը զիմառացի⁽³⁾ Պատրիարքին երկարածից իշխանութեան:

(1) Գիրք տրամարանութեան Սիմեոնի Զուղայեցոյ, սյագր. ի Կ. Պոլիս (հշ 295), և Յովհ. Տերոյեց յՄրեւակսն:

(2) Պոլիսի պատրիարքներուն ամենեն խաղաղականն ու՝ Կաղզուանցի Զատրիա պատրիարքն զա՝ երկարանը, որ 25 տարի անխափան վարեց Պոլիսի պատրիարքութիւնը, և վախճանեցաւ 1741ին:

(3) Եւ սա՝ 20 տարի իւսասուն խաղաղութեամբ վարեց Պոլսական պատրիարքութիւնը, սակայն ընդմիջումով: Իր վրայ գրած ենք համառօտ կենսագրական մը մեր Հին Դեմքերու շարքին (տե՛ս Մասիս հանդէս թիւ 4, 1903 և Ստուեք Հին Դեմքերու):

Ինք նախան ալ՝ ոչ միայն իբր իմաստասէր Պատրիարք՝ այլ նաև իբրև կրօնական պետ տոհմային ստուար մածամասնութեան, ժամանակին իշխանական տեղակալներուն և ամիրաներուն նեա, թէ՛ Պատրիարքարանի ներքին խնդիրներու թէ՛ հոռմէական հատուածին վերաբերումով, բռնած է իրաւարար դիրք մը և կատարած է հաշտ դեր մը՝ հնարաւոր իւրասիրութեամբ ու միջին քաղաքադիտութեամբ մը, որով արուեստք, մեծութիւնք, դպրոցական՝ եկեղեցական՝ գրական ու վանական զարգացումներ կրցած են դիւրութեամբ արմատ ձգել ժամանակակից տոհմայիններուն մէջ։ Կողտի ու Նախանի օրերէ՛ն է՝ որ Թուրքահայերուն տեղական յառաջդիմութիւնը կը ձգէ խոր արմատ մը, որմէ կը բուսնին եւ կընծիւղին ցայսօր երևցած իմացական ու արհեստական բարգաւաճումները։ Նախանի օրերը բարգաւաճած էին Մուրատեան Պաղտասար եւ իր որդին Գոսպար ամիրաները, որ հրատարակել տուած ալ են Նարեկի ընտրելագոյն ձեռագիրը՝ բերել ապով զայն յատկապէս Կառւցանապատի վանահօր Կարապետ վարդապետի միջոցով՝ Մոկաց աշխարհէն. այս ձեռագիր՝ կարծուած է բա՛ն իսկ Նարեկացիին գրածը՝ նոյնին գտիչ ճոխագիր Յակոբ վարդապետի կողմէ։

Այս միջոցներուն կըսկսի նաև փայլիլ Ռուսահայերուն մէջ՝ Յովհաննէս Լազարեան ազնուականը, որ շինած է Բեղրապուրկի մէջ երկու հայ եկեղեցի ու կտակած է երկու հարիւր հազար բուսլի՝ Մոսկուայի մէջ հիմնուած Լազարեան ճեմարանին համար։ Շատ նշանաւոր են նաև սոյն միջոցները՝ Հնդկաստանի մէջ մեծ վաճառական Պետրոս Ոսկանեան, ու Պետրոս Յարութիւնեան⁽¹⁾, որու

(1) Աշխարհագրութիւն Սեփակոս Գիւլեւ Ազոնցի Հաս. Գ. Ասիա (հշ 15)։ Միևչու 1780 հին Հայերու վաճառականութիւնն

եղբայրն էր մեծ խորհրդական Գրիգոր կամ Կորկին խա-
նը, այր մեծախորհուրդ քաջ և կորույամբա՝ Սասարմ Ա-
լիին իբրու վէզիրը: Անուանի են նաև աստիճանաւորք
Յարութիւն և Մարգար խան: Նշանաւոր եղան նաև
Սէյտապատի մետաքսի հայ վաճառականները:

Պետրոս Ոսկանեան՝ Մատրասի մէջ աէր էր անբաւ
կալուածներու, որոց մէկ մասը դրուեցին Գողիացիք,
դինքն ալ հրաւիրելով սպանապիքով Գողիացի ըլլալ, սյլ
ինք մինչև վերջ հուատարիմ մնաց Անդղիացուոց: Իր
վախճանին մօտ՝ կտակեց իր բոլոր հարստութիւնը գա-
նազան ազգաց երեւելի ուխտատեղիներուն. մեծնելէն
ետք՝ իր ստացուածներէն դատ՝ գտնուեցաւ 700,000
բութի պատրաստ դրամ:

Նոյն ժամանակները կրկսի նաև յիշատակուիլ Ռու-
սանայերուն մէջ՝ Արղութեանց երկայնաբազուկ ստճմը
մեծ, որմէ էր Յովսէփ ընտրեալ կաթողիկոսն Արղութեանց.
Հասան Ջալալեանց հին գերպաստանը, որ յաճախ ար-
ձանագրուած ու յիշատակուած է: Հասան Ջալալեան
ստճմին պատմութիւնը ձեռագրած է՝ 1808 թուին՝ Բաղ-
ասասար Մետրապոլիտ, և կը գտնուի Գանձասարի վանքին
գիւղը Վախտանգ-բէկ Հասան Ջալալեանի տունը, հնա-
մաշ վիճակի մէջ. ունին յատուկ ճիւղագրութիւն նաև
Շուշիի մէջ: Հասան Ջալալեանց շատախղէն կենթագրութի՝
1840 էն ասդին իբրև մասնագիր ու իբր առաջնորդ
Վրաստանի և Իմէրէթի փայլող՝ Սարգիս արքեպիսկոպոսն
Հասան Ջալալեանց. սա կը գրէր յստակ ու կշռեալ գր-
բարաս մը: Ինք՝ Սանահինի վանքէն էր ու հանրային

ի Հնդկաստան անհաւասարելի եղած եր, մինչև անգլիացիք ան-
գամ խոստովանեցան թէ Կալիպոսի մեծաշէն դասարանն Հայե-
րուն դրամովը շինուեցաւ. նոյն (էջ 16):

գործերու մէջ ունեցաւ մեծ դեր, մանաւանդ ներսէս Աշտարակեցիի կաթողիկոսութեան օրերը:

1740ի առնները՝ Ղափանէն Չմբուռնա, Պոլիս ու եւրոպական քաղաքներ վաճառական Հայեր կը մեծնային ու կը ճոխանային. ասոնցմէ Մեղրիի սահմանագլուխին վրայ գտնուող՝ Վանք գիւղէն Ոսկան Շահումեան բացաւ Վենետիկի մէջ առևտրական տուն մը, որ կառուարէր Դամակոսի կերպաններու, հայելիներու, ապակիէ ջահարաններու և այլ անցուկ վաճառքներու վրայ, Շահումեան տանը դարէ մը աւելի տեւց և նշանաւոր եղաւ Վենետիկի վաճառանոցին մէջ⁽¹⁾: Այս Ոսկանի եղբորորդին Վրդանէան էր որ գրեց Սիւնեցոց նշանաւոր պատմութիւնը. այդ հազուագիւտ գիրքը տպագրուած է Վաղարշապատ 1871 թուին Դուրիթ-բէգ անունով:

*, *

Իսկ Պոլիսի մէջ ծաղկած ու փայլած է նոյն առնները (1750) Թուրքահայոց ամէնէն երևելին՝ Երևաննոց Մահտեսի Սեղբեսարոս ամիրայի հաւասար՝ Ակնցի Եղուպ աղան կամ ամիրան, որ նորոգած է հիմէն Մուշի Ս. կարապետի վանքը⁽²⁾, որ և մեծարուած էր Կ. Պոլիսի ամէնագլխի ժողովուրդէն, ու Հայերուն մէջ՝ 1455 էն ՚ի վեր ցայնվայր հազիւ երկու հոգի տեսնուած էր հաւասարապատիւ և հաւասարածոխ իրեն⁽³⁾. մա՛րդ՝ Ղաղէզ

(1) Լեօ, Հայկ. պագր. հաս. Ա. էջ 387):

(2) Ըստ Հ. Ղուկաս Ինճիհեանի:

(3) Եղուպ ամիրայի բացառիկ մեծութեանն ու անկուսին պարագաներն հեռուեալ մանր վկայով պատմած է ինճի յերուսաղեմ Դեր. ներսէս կաթիկոսոս Դեռզեան՝ փոխաւորդ Երուսաղեմի պատրիարքութեանն ի վանս Ս. Յակոբեանց. ինքն ալ վաւերաբար ըսած ըլլալով զայս հանգուցեալ Դեր. Սեբեան Յովհաննէս կաթիկոսոսէն: — Եղուպ աղան սիրելին էր Մուսրաֆա աղայի՝

Արթինի պէս: Իբր իրեն ժամանակակից՝ փայլած են նաև Ապուլշէնցի Աղասեան ամիրաները, որոնց տապանաքարերը կը կենան տակաւին Սկիւտարի հայ գերեզմանատունը, Ակընցի Մոմճի Սարգիս ամիրան՝ Սասգիւղի Մոմճեաններուն նախահայրը, որուն յաջորդներն որդի ՚ի հօրէ, զբասէր մարդիկ եղած են, մանաւանդ Մոմճեան Մկրտիչ աղան, որ ունի գործօն և նետուող դեր մը 1835 էն 1855ի հանրային գործերուն մէջ:

Տեսեա Պեշիր անուն ներհնապետին, որոյ ազդեցութիւնն ա՛յնքան մեծ էր մինչև իշխել կամֆի Վեհ. Սուլթանին. ունէր կիև գերեայ Վրաստանէն և այս իրեն (Եաղուպ աղայի) հետ ամուսնացաւ. այս կիկն՝ յաճախ շտեղծ իր ամուսինէն Մուսաֆա աղայի գովեստը՝ կը քախանձէ իր այրն որ օր մը տուն քերէ զայն, ու ինք հիւրանոցին վրայ նայող վանդակապատ պատուհանէ մը կը դիտէ զայն ուշի ուշով: Երկար ատեն սրտաբախ դիտելէ ետե՛ւ՝ վերանայալը վագելով՝ կը մարի կիկնայ և ոտընկերը գետինը զարնելով կը պոռայ կը պոռչքէ. «Տեղիք՝ մանաւանդ Եաղուպ աղան՝ վեր կը վագեն ու երբ կըստփեցունեն (Ներսէս Սրբազանի քառով՝ կը լրջացունեն) զայն՝ կիկը կը գոչէ ք «այդ Մուսաֆա աղան իմ եղբա՛յրս է»։ Եաղուպ կը զարմանայ կը մնայ ասի ի քերտան և կը շանայ զգաստացունել իր կիկը. քայց սա դարձեալ կը պնդէ և կը կրկնէ ճշելով ք «իմ եղբա՛յրս է նա, անպատճառ իր տով պիտի տանի՛ս զիս»։ Եաղուպ կանկէ կը տանի զայն Մուսաֆայի տովը. կիկն հոն ալ, և անելի խանդաղասանով, կըսկսի պոռայ ք «Դու իմ եղբա՛յրս ես, դու իմ եղբա՛յրս ես»։ Այս յովսկիտան աղադակներուն շրիմանալով՝ Մուսաֆա կը յուզուի կայրայի՛ պատճառ ու փաստ խնդրելով այդ յայտնութեան: Տիկին Եաղուպ կըսկսի յայնժամ նկ... ազիրն ընել Վրաստանի իրենց քնակութեան և սալ իրենց հօրն ու մօր անունը. քայց Մուսաֆա դարձեալ չհաւանիր կամ չհաւանիչ կեղծելով կը պահանջէ անելի ջօշափելի նշան մը. Տիկինն յայնժամ կըսէ ք «ձոճուակիդ վրայ նիշ մը ունիս ա՛յս ձեռ»։ Մուսաֆա կը զարմանայ քանիև ճշգրտութեան վրայ և կը հաւատայ ինչ որ արժան էր ու իրաւ ալ: Փնտա՛յ կը կոչէ իրեն՝ Եաղուպ աղան, և այն օրէն անելի սիրով ու քեւարկութեամբ կը կատուի անոր հետ. կը ձոխանան կը փար-

1649 թուականին էր նաև Սահաթճի Եռասուֆ՝ նախահայրը Պոլիսի Եռասուֆեանց : Նոյն միջոցներն Ապրոյ չէլէպին, որ վաճառապեան էր Քէօփրուլի օղլու Ֆաղլը Ահմէտ փաշային, միջնորդելով անոր և Դրան մեծերուն՝ առաւ Հայերուն համար Կրետէի Քանտիա քաղաքին Յունաց Ս. Գէորգ եկեղեցին, որ յետ այնորիկ անուանեցաւ Ս. Կորսապետ :⁽¹⁾ Կը յիշուի՝ կարգ մը Վենետիկեան ազնուականներու հետ՝ նաև Պարոն Խաչիկ Զուգայեցի մը, որ կը բնակէր ի Վենետիկ և յարարերութեան մէջ էր Միսիթարեանց հետ : 1757ին պատահեցաւ Տիարպէքիբի գաւառին մէջ այն անհնարին երաշտութիւնն և սովը, որ պատմութեանց մէջ քիչ նմաններ ունի : Այլիւրները ցամաքեցան. ապա վրայ եկաւ մարտիի տեղատարափ մը Մուսուլի կողմերէն, որ թզաչափէ աւելի թանձրութեամբ ծածկեց գետինը, և ապա մրնինա անուն թռչուններ մը արշաւելով՝ ծծեցին սպառեցին բովանդակ ցորենի ու գարբիի հիւթերը : Կորստական սովն է տիրեց Մուսուլէն մինչև Սերաստիա, Հալէպէն մինչև Կարին. քիչէ մը ցորենն որ առաջ կը ծախուէր 7 զրշ. ի, ծախուեցաւ 15,

բամանակ : Ամիրայական խնջոյից օր մը, սակայն, Եաղուպ եւ բարեկամք կաղաչեն իրենց ընկեր մեկ ամիրային, որ կարճահասակ ու սապառոզն կ եղեր, յիս գիներբուաց պարէն ու զուարճանայ. այս վերջինը նախ կընդդիմանայ ապա կը համակերպի ու կը պարե՛հ հասարակաց, մանաւանդ Եաղուպի, անխոհեմ Տրիչնեւուն մէջ : Մարդուկն այս բանը սիրտը կը դնէ ու վրեժ կը պահէ : Երբ Մուսաֆայի մեծ ներքինին կը շուսապարտուի Բարձր. հրամանով եւ Մուսաֆա աչ Տիչ օրեն կը մասնուի անոր բաղդին, յիշեալ կարճուկ ամիրան յարժար առիթ համարելով զայս՝ մեծ կուսայ Եաղուպն աչ իրտ անոնց ընկերը, ու կապեւելով զայն իր հարսուութիւններէն՝ կը վարեն ի բան և կը ձգեն ուր ուրեմն :

⁽¹⁾ Հ. Դուկաս Ինճիհան, Աշխարհագրութիւն, Եւրոպիա, հատ. 6 (էջ 328) :

25, 30, 40 նաև 60 զրչ .ի. աղքատները ծախեցին նախ իրենց կահ կարասիքը վար գինով՝ հաց ճարելու համար, ապա ծախեցին իրենց զաւակներն ալ աւանակի մը գինէն վար գինով. մուրացողներուն և անօթի թափառաչրքջիկներուն թիւը անհամար էր. հետզհետէ սկսան ուտել շուն և կատու, նաև ոմանք կենդանի մարդ անգամ. Հազրու աւանին մէջ 3 քիւրտեր 40 հոգի զենլով կերան ու երեք քրդուհիներ՝ կերան շատ մանուկներ, և սպանուեցան դատաւորներու ձեռքով: Ծամբաները դիակներով լեցան, գիւղերն անբնակ ամայացան, քաղաքին մէջ ալ նոյնպէս հիւանդութիւնները սաստկացան և մեծատուններն աղքատացան սովեցան ու մեռան: Ամբողջ քաղաքին մնուելներուն թիւն հասաւ 80000ի: Յովսէպոս միայն կը յիշէ նման սով մը մարդակերական՝ Երուսաղէմի ահրելի պաշարումին ատեն, ինչպէս մեր Առաքել Դաւրիթեցին իր ժամանակին աղէտները պատմագրած միջոցին:

Ասոնցմէ տասը տասնեակնգ տարի կտքը կուգան արքունի ոսկերիչ ու դրամապետ Տիւղ Միքայէլ ամիրան՝ Հայ Հասկական, որուն ծագումն և վերջացքը (postérité) յիշեցինք վերն անուանարար, և Մահտեսի Տատ Առաքել ամիրան,⁽¹⁾ համանուն գերդաստաններուն նախնայրերը, մեծահաւատ ըսուած Մուրատ ամիրան, Պաղտասար և Մուրատեանց Դասար ամիրանները:⁽²⁾

(¹) Տասեակն ի սկզբան Պէտեց կը մականուանեիմ, (սե'ս Սարգիս դպիր Յովհաննէսեան, Տեղագր. Կ. Պոլիսի, մեռացիր): Կաղզուանցի Պօղոս վարդապետ՝ գրած Է ռճանաւոր զովեւս մը ի Մահեկսի Տատ Առաքել ամիրայ, (սե'ս ի չեւրական Զուհայնուքնէ կենցաղոյս, սպագր. ի Կ. Պոլիս, 1805):

(²) Յիշատակարան ճաշոց գրոց. սպագր. երկրորդ անգամ ի Կ. Պոլիս 1793ին եւ հինգերորդ սպագրութիւն Նաբեկի 1774, Յիշատակարանին մէջ:

1751ին շինուեցաւ՝ նարը զարուի մօտ՝ ծովեզերեայ հիւանդանոցն Հայոց Ղարանցի Գէորգի պատրիարքութեան ատեն և նորոգուեցաւ 1794 ին :

Ասո՞նք են ըստ մեծի մասին, կարգ մը երկրորդական ամիրաներու և թարմատար ազաներու հետ՝ ակրնցի նախնական ամիրաները, որոնց արտակարգ փայլելուն մեծ պատճառները կը թուին դարձալ ակրնցի Երևաննոց Սեղբնատրոս ամիրան ու ինք նալեան Յակօբ Պատրիարքը, իրր անոնց Հաւշիրակ ակնցի՝ ըլլալով ինք ալ Զիմառայ գիւղէն ⁽¹⁾ : Իր մարդիկն յառաջացունելու այս իւրաշահութիւնը (pépotisme)՝ վաղընտել ախտ մը կը թուի մեր գործառնութեանց պատրիարքական աթոռներուն շուրջն և վանքերուն մէջ, առիթ յետադէմ անպատեհութեանց զեղծումներու և զրկեալներու վնասարեք տըժգօնութեանց ու հակադարձութեանց :

•••

Հինաւուրց երեւելի այս Ակրնցիներուն յաջորդելով է՝ որ հետզհետէ ծլեցան ու մեծցան միւս ակրնցի թանձախօսիկ և խորամանկիկ ամիրաններն ալ, որ երևեցան ու ճոխացան մինչև 1840, իրրեւ սեղանաւոր ու վաճառական, իրենց երփնագտնողուած ու առակի կարգ անցած վարպետորդութիւններովը :

1760—1763 ի միջև փայլած են մեծ վէզիրին վաճառապետ (պազիրիկաւ պաշի)՝ Պօղոս Ղազար ու Ասլան ամիրաները, որ և բաւարարեցան յետ մահուան վէզիրին և ազատեցան բաւարարութեամբ մը . բայց Ղազար

(1) Գ. Պոչիս բնակող ակրնցիներ՝ ունեին յասուկ պաշտօնեաներ, որոնց միջոցով ակրնցիներն և կող ճամբորդ պանդուխտները կը հանձնէին նաւերէն եւ Երեւանի խաչու մասնաւոր պաշտպանութեամբ կը տեղաւորէին ակրնցիներէն յայտնի նախապատրաստեալ գործի :

ամիրան ⁽¹⁾ ինկաւ, ու իրենց երեքին միայնդամայն յաջորդեցին Ճանառզեան Յարութիւն Սարգիս անն և Սաքսիեան Մարտիրոս :

Սոյն միջոցները՝ Գահմաս Գուլի խանին մահուրնէն ետք Ազուլիս քաղաքին հայ բնակիչները, որ 10000 տունէ աւելի էին, ցրուեցան ի սիրուս աշխարհի՝ մանաւանդ Կ. Պոլիս. ասոնք ըստ մեծի մասին Հնդկական վաճառականներ էին ու իրենցմէ շատ մեծատուններ սերեցան, որոնց ոչ սակաւք բարերարք եկեղեցւոյ տպագրութեանց և վանորէից՝ հօճայ կոչու մով :

1770 ին վախճանեցաւ Հնդկաստանի մէջ խօճա Ղազար Գրիգորեան մեծատունը, որուն ժառանգութեան մէկ մասը բաժնուեցաւ 1864 ին Պոլիսի Պատրիարքարանի միջոցով :

Նոյն 1750—65 ի միջոցին է՝ որ կը շինուի հոյակապ Մեծ—Նոր խանը, ⁽²⁾ Զաքմաքճըլար եօղուշին, և կըլլայ՝ Վալխտէ խանին հետ՝ զլխաւոր կենդրոն ու օթեան սեղանաւոր և վաճառական հայ մեծատուններուն, մանաւանդ սեղանաւորներուն, որ այդ հսկայակուռ շէնքերուն մէջ աւելի հսկայակուռ առևտրական ձեռնարկներով անգամ՝ չկրրցան դարձեալ մինչև 19րդ դարի կէսէն սաղին ալ անխարխար պահել, այդ խաններուն հարուստ վէմերուն և որմերուն հետ, իրենց հարստութիւնն և հեղինակութիւնը. չկրրցան սիրել զիրար աննախանձութեան մը չափ ու տեսել համերաշխարար իրենց նախանձելի դիրքին մէջ : Մեծ—Նոր խանը մանաւանդ՝ հայ ամիրաններուն խորանն եղած է հարիւր տարիի չափ :

Ասոնցմէ դուրս և ժամանակով աւելի նոր են Զարսխանէ Սարաֆի Մերունն և Ռասա օղլուն (Ռասսեանց

(1) Սահակ աղայ Ղազարոսեան Ղազար ամիրայեան սերած է :

(2) 166 սենեակով եռայարկ ու երեք դուռներով :

տունէն), որոնց ապուշեխցի հռչակաւոր Բեղրաքի Չէլէպին ծառայած էր նախ և ապա յաջորդած: Այս Բեղրաքի Հայ—Հոռոմ Չէլէպին պատիւն և ազդեցութիւնը մե՛ծ եղաւ Օսմանեան ազնուականներուն մէջ, որոնցմէ շատն հարստացան՝ միս՛յն իր հաշուադէտ գործառնութեանց շնորհիւ: Բայց ինք ու վերոյիշեալ Եաղուպ ազան ալ՝ չգիտնալով խոհեմութեան սահմանին մէջ մնալ՝ չու՛տ ինկան (գլխատուեցան) (1):

Ակրնցի այդ Եաղուպ ազան Յովհաննէսեան ձեռնառու էր նալեան Յակոբ Պատրիարքին շատ գործերուն մէջ. և նալեան ալ՝ իր Երուսաղէմական պատրիարքութեան միջոցին՝ կր թղթակցէր անոր հետ շատ անգամ և կր հրաւիրէր ալ ուխտի յԵրուսաղէմ՝ կոչելով զայն փաճառապէս արհուհի, նոր Յովսէփ զեղեցիկ ժամանակին և երկրորդ Զօրաբարեկ սաճարաշին: Եաղուպ ազան ալ՝ Երուսաղէմ ուխտագնաց ըլլալով՝ դարձին իր հետ Պոլիս բերաւ ու Պոլիսի Պատրիարքութեան տխոր բազմեցուց նալեան Սրբազանն՝ ըստ թախանձագին փափաքի այս վերջինին: Կա՛ն մինչև ցայսօր Ս. Յակոբեանց վանքին մէջ՝ Պէքեար թաղի կից երկու շնորհքով հին սենեակ, որ Եաղուպ աղայի անունով կը կոչուին: Կա՛յ նաև նոյն վանքը պղնձի յիշատակարան տախտակ մը, որուն վրայ մի առ մի գրուած են Եաղուպ աղայի բարեպաշտական ընծաներն ու յիշատակները՝ նուիրուած միայն Ս. Յակոբայ տաճարին: Տալու համար առ հասարակ գաղափար մը ժամանակին նուիրական ոճին ու հարստութեանց որակին վրայ՝ կորինակենք հոս այդ յիշատակարանը(2):

(1) Դարապատում Հաս. Ե. 1789—1795 (էջ 23—25):

(2) Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, սպգր. 1890 (հաս. Բ. էջ 78): Երուսաղէմի նուիրուած միևյիւ իսկ արոյրեկ ու պղնձ ամաններուն և ստմաններուն ցանկը՝ նուիրա-

— Նուէրք Եաղուպ աղայի ի դանձա Ս . Աթուոյն և Ս . Տեղեաց Գրիստոսի յԵրուսաղէմ՝ ի յիշատակ իւր և ազգատոհմին իւրոյ 1 արծաթի ջահ 56 օքքայ՝ կախեալ ի մէջ գմբէթի եկեղեցւոյն Ս . Յակոբայ , և ի ներքոյ նորին կանթեղք 8 . 1 մեծ և պատուակոնն վարագոյր Աւագ խորանին ոսկեթել ասղնեգործ , յորոց վերայ տեսանին կերպարանք վիշապաց . 2 ծաղկեայ տիպայ գոգնոց . 1 իւղարերից շուրջառ . 1 ստոֆա վարագոյր Ս . Գլխադրի , և որմոց նորին պատկերք անօրէնութեան Փրկչին , գործ սքանչելի՝ հանդերձ արծաթի շրջանակաւ և վանդակաւն . 1 արծաթ կանթեղ ի մատուռն Մակարայ հայրապետի . 1 ոսկեթել թաւիշագործ (Կլապիտան աթլազ տոքումայ) վարագոյր՝ Ս . Էջմիածնի խորանին . 1 պղինձ ծորակ տընտեսատան , երկաթեայ արտաքին մեծ դուռն վանայ , (որ է երկաթագործութեան գլուխ-գործոց) : Ս . Յարութեան 1 ոսկի կանթեղ 600 արամ ի վերայ գերեզմանին Գրիստոսի . 1 շուրջառ , 1 սաղաւարտ . 1 վակաս , Ս . Յովհաննէս եկեղեցւոյ՝ 1 լեհ չիթ վարագոյր , 1 տիպայ վարագոյր , 1 տիպայ գոգնոց : Ս . Թորոս եկեղեցւոյ՝ 1 արծաթ ոսկեզօծ սկիհ . 1 տիպայ գոգնոց , Ս . Հրեշտակապետ եկեղեցւոյ՝ 2 տիպայ գոգնոց , 1 լեհ չիթ վարագոյր 2 քարեայ աշտանակք մոմեղէնք : Ս Փրկիչ եկեղեցւոյ՝ 1 տիպայ գոգնոց , 1 գոյգ քարեայ աշտանակ մոմեղէնօք , Ս . Աստուածածնի գերեզմանին՝ 1 տիպայ գոգնոց , 1 սաղաւարտ , 1 վարչամակ , 3 շապիկ : Ս . Մննդեան եկեղեցւոյն 1 շուրջառ , 1 սաղաւարտ , 1 վարչամակ , 1 փորուրար , 3 շապիկ . 1 արծաթ բուրվառ : Ս . Նիկողայոս եկեղեցւոյն Յոպպէի՝ 1 շուրջառ , 1 սաղաւարտ , 1

սուաց բազմաքիւ անուաներով՝ գեղեցիկ արձանագրուած սեսակ յերուսաղէմ՝ ձեռագիր ու ոսկեզօծ սեսակներու մէջ յամին 1901-2:

վարչամակ, 1 փորուբար, 4 շապիկ, 1 լե՛ն չիթ վարագոյր : Իսկ Եազուպ աղայի բարեպաշտուհի տիկինը՝ Սուրոմէ՛ յիշատակեց Ս. Յարութեան տաճարին մէջ կանանց վերնատանը՝ 2 տիպայ գոգնոց, 1 չիթ լե՛ն վարագոյր և Քրիստոսի գերեզմանին հանդէպ Խաչելութեան պատկերի ոսկեզօծ շրջանակը քանդակադործ :

Սյս ձեւն ունէին ընդհանրապէս նուէրները Կ. Պոլի՛ս ալ :

Զ.

Տասնութերորդ դարին մէջ՝ առեւտրական ամբարաներուն ամէնէն ջոջերը կը համարուին Սամուէլ Մուրատ և Ռափայէլ Հնդկաստանի մեծ թանգարներն ու Մխիթարեանց Վենետիկի ու Փարիզի Մուրատ-Ռափայէլեան վարժարաններուն մեծ բարերարները, որ հարիւր հազարի չափ Քրանսական ոսկիի դումար մը կտակեցին՝ որը ու աղքատ հայ աղայոց դպրոցական կրթութեան համար, Վենետիկի Մխիթարեան Հարց միջնորդութեամբ : Նոյնպէս Հնդկաստանի մէջ՝ Մասեհ-Պապաճան և Մարտիրոս միացեալ անձնաւորութիւնը, որու անունով մեծակակ կտակի խնդիր մը յուղուեցաւ 1869էն 1871 Կ. Պոլիսի Պատրիարքարանին մէջ և ներկայացեալ ժառանգորդները շատ աշխատեցան ձեռք բերել անդլիական Պանքային մէջ զնստեալ⁽¹⁾ գումարէն իրենց համար մաս մը :

(1) Լսած ենք 1884ին թէ այս պակֆայիկ մեջ 9,000,000 շիքայ սփերիկնի կտակեալ գումար մը կը մնայ շատնց՝ որոց վաւերական ժառանգորդները չեն ի միջի:

1773ին՝ Էջմիածինի ջերմ միաբաններէն Կաղզուանցի Չաքարիա արքեպիսկոպոս Փօքուզեան կրնորուի Պատրիարք Կ. Պոլիսի, ու իր Էջմիածնական աններուզութիւնը գրգռուելով և ևս Մխիթարեանց ու Հ. Միքայէլ Չամչեանի քանի մը խտրական բառերէն ու գրութիւններէն, հակառակ իր նախորդաց խնաստուն և իրաւախոհ տոհմախորութեան՝ ձեռք կառնէ անհաշտ ու անանդորր տոհմայնութիւն մը և ի գործ կը դնէ ծայրայեղ հակակաթողիկոթիւն: Իրեն այդ անհաշտ ոգիին կը բռնուին ժամանակին Փօքր-Ասիայի եպիսկոպոսներ⁽¹⁾ ու ամիրաններն ալ մեծ մասով՝ հալածելով ու ատելով կաթողիկէներն ու հալածուելով և ատուելով անոնցմէ,⁽²⁾ որով հայ մեծատուններու ոյժը՝ փոխանակ արդիւնապէս ծառայելու իրենց անհատական ու աշխարհային զարգացումին՝ կրսպառի ազգամիջեան պայքարներով. այս ատելութիւնն և ընդոստ անմիութիւնն է՝ որ տեւած է մինչև Աբրահամ Պատրիարքի օրերն (1814) և մերթ անկէ շատ ազդիները՝ մինչև որ բողոքական նոր հատուած մըն ալ վրայ հասնելով հակօսնէ արեւմուտքէ մը՝ չրջեց արեւելեան հայ միաքերը բոլորովին ընդդիմօսն նորութեան մը դէմ՝ մոռնալով ա՛լ ձեւակերպեալ հայ Հռոմէականութիւնը:

18րդ դարին վերջերը կը յիշուի նաև Ղալաղիայի

(1) Ասոնցմէ Կ ևսև Ծերունի յիշուած Պօղոս Գարագոյ եպիսկոպոսը, որ առաջնորդեց Պռուսայի վերսին հիմնեց Արմաշի վանքն և հասուց մեծկակ աշակերտներ:

(2) Չախարիայի հալածած ու թիապարած հայ հոռոճակներու գլխաւորներն են՝ Կոյր Միկաս, Գափաւմաճի Լօրկն, Վարդան մանկավարժ, Թիւլյակնճի Յովսէփ, Մահեստի Բերովրկ, դերձակ Սերովրկ, ժամագործ Սերովրկ, Արիկ և Յովհաննէկու եղբարք, ճամպազեան Մահեստի Յարուքիւն (Պատմ. Ա. Պէրպլեբեան ԿԷ, 2):

Ս. Լուսաւորիչ կկեղեցին հին շուրջատի մը վրայ՝ Բինկեանցի Չայննց մահտեսի Վարդերես ամիրայ մը, որ թեքեւս հաւն է ազնուական հանգուցեալ Չայնան Իլլիաս էֆէնտիի: Նոյնպէս Պապանանց նախածնողներէն համարելի են Լուսաւորիչի Ս. Խաչի բնմին քիչատակարանին վրայ արձանագրուած «Արեւելցի Պապայի որդի Մահտեսի Կարապետ» ու թուներն Յովհաննէս, Կարապետ, Մահտեսի Հայրապետ Արիկ ու Եփրեմ:

Գարձեալ այս միջոցներուն նշանաւոր է՝ թէ՛ մեծութեամբ թէ՛ վշտակրութեամբ՝ Կարապետ Մանուկ Օղլուն ամասիացի, որուն կենցաղը կը համառօտենք հոս, և աւելիին համար կը զրկենք ընթերցողն՝ 1828ին Փարիզ տպագրուած Վարժ Հայոյն Կարապետի Մանուկ-Օղլոյի, սեղանաւորի Գայնագաւ Քանիր փաշային և Վեզիր Ազի փաշային Եանկայու տեարակին:

Այս Կարապետ Մանուկ օղլու ծնաւ Ամասիա քաղաքը Փոքր-Ասիայի՝ ազնուական և հարուստ ծնողքէ 1755ին: Տասնևեօթն տարեկանին՝ սկսաւ ինքնազլուխ կառավարել իր հօր վաճառական գործերը. քսան երեք տարեկանին՝ վաղ իսկ ամուսնացած՝ անցաւ Կ. Պոլիս, ուր ընդունուեցաւ մեծ պատիւով և սկսաւ աւելի մեծ գործառնութեանց: Սեղանաւորութիւն ըրաւ շատ փաշաներու, մասնաւորապէս երկու մեծ փաշաներու, որ բազմահոջակ էին: Իր վաճառարարձ նաւերը կերթեւեկէին Խրիմ և Ռուսիա. քսան տարի շարունակելով այսպէս՝ զիզեց մեծ հարստութիւն, և ապա սկսաւ նուազիլ ու իյնալ:

Այդ առաջին անկումէն ետք՝ նորէն կանգնեցաւ օգնութեամբ իր եղբայրներուն և վերստին ինկաւ, մինչև որ՝ մղեալ արկածներէ ու հիւանդութիւններէ՝ զնաց Արնոպ ու անկէ Եանկա, ուր պաշտպանութեամբ փա-

չային նորէն տէր եղաւ տունի և դիրքի: Եւ ապա Կ. Պոլիս վերադառնալով՝ կրրցաւ ատենի մը համար զբաղիլ իր հին գործերով, մինչև որ բախելով մեծամեծ ֆեսաներու՝ միտքը դրաւ երթալ ապրիլ Յրանաս: Հետզհետէ վարչաւ, Պերլին, Վիէննա, Համպուրկ, Լոնտրա և ուրիշ Եւրոպական քաղաքներէ անցնելով՝ 1823ին հասաւ Փարիզ:

Հոն՝ իր ամբաւ հարստութեանց նշխարներովը բացաւ արեւելեան անուշահոտութեանց խանութ մը՝ Պազառ Իդայիէնի մէջ, մինչև որ հո՛ն ալ կրակ մը պատահելով՝ մոխիր դարձուց Կարապետին վերջին հանգրուանը, այնպէս որ եօթանամանամեայ հայ Յորն հարկադրեցաւ գիշերօթիկ ճամբաներու վրայ:

Վերջապէս՝ Յրանասցի երեւելի բարեկամ անձնաւորութիւն մը վրան գիթալով՝ հանգանակութեամբ ապաստան ճարեց անոր և գնեց խանութ մըն ալ Պուլլար Տէրանուրանայի վրայ, ուր անկեալ ծերուկը կապրէր ծախելով դիւրազին բաներ: Հո՛ն ալ սակայն հալածեց զինքն անողոք ճակատագիրը, զի եղաւ օր մը որ ամբաստանուեցաւ արգիլեալ ծուխ ծախելու յանցանքով, և դատաստանի ենթարկուելով՝ հազիւ կրրցաւ անպարտ ելնել ու ազատիլ տուգանքէ: Իր փաստաբանը՝ Տիւրլանդի՛ գրեց վերոյիշեալ իր վարքը:

Եւ Կարապետ՝ ա՛լ խելամուռ իր բազդին դժնէութեան՝ որոշեց մէկուսանալ Արշիպիզազոսի կղզիներէն մին հանդերձ իր ընտանիքովը, ու ապրիլ հոն վերջին փրկաստփայլութեամբ մը:

* *

Կ. Պոլիսի ամիրաներուն մէջ 1780ին կը յիշուի Պալգարանցի Մահտեսի Յարութիւն ամիրայն, որ էր ժամանակին Սարափար Քեհնապին ու ամէնէն հզօրն հանրային գործերու մէջ: Այս ժամանակ կը յիշուի նաև ձէզայիրցի

Գրախառն հասան փաշայ մը, ծագումով հայ, որ Կ. Պոլիսի մէջ շատ շինուածոց հետ՝ շինեց նաև նաւային մեծ զօրանոցն երկու տարուան մէջ և ծաղկեցուց նաւաւարութեան ուսումը նոր կարգերով: Ռոտտսթոյի էր ինք, և տղայ հասակին զնացած էր Ճէզայիր, ուր քաջութեամբ և վարչական կարողութեամբ նշանաւոր եղաւ. անկէ մղուեցաւ Սպանիա և ապա ի Պոլիս, ուր հասաւ մեծ պաշտօններու:

1782ի օգոստոսի առաջին օրը⁽¹⁾ սոսկալի հրդեհ մը 66 ժամի մէջ մոխիր դարձուց Կ. Պոլիսի մէջ հազարներով տուն և կիզեց այրեց 1000է՛ աւելի հողի:

1786ին կը յիշուին նոր ջուղայեցի ազնուատոհմ Մանիջարեանք, որոնցմէ հասած են զբասէր անձնաւորութիւններ:

1799ին կը յիշուին՝ Ղալաղիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին մարմարի մը վրայ արձանագրուած՝ Բինկեանցի Քաչատուրեան մահտեսի Ստեփանոս ամիրայ:

1790–1800ին կը յիշուի յերուսաղէմ յիշատակարաններու վրայ՝ կեսարացի Պաշպաղիրկեանեան մահտեսի Յովհաննէս, որ յախճապակել տուած է Երուսաղէմի Ս. Էջմիածին անուն տաճարը⁽²⁾: Նոյն թուականներուն երեւելի է նաև հասէրն Կողմաս Չէլէպի Քէօմիւրճեան՝ Տէր Կոմիտասի թոռը, որ Կ. Պոլիսի սպանիական դեսպանին թարգմանն էր, ու շատ օգնեց Հ. Ղուկաս Խնճիճեանի հաստիքական ու աշխարհագրական երկասիրութեանց: Գրած է խտալերէն usruագրութիւն մը Կ. Պոլիսի, տպագրուած ՚ի դիւզն Պասասն Վենետիոյ 1794ին. խտալական ձևով՝ կը մականուանի Քաուպօնեանոյ:

(1) Դիտելի ու զարմանալի պարագայ մըն է՝ որ Կ. Պոլիսի մեծ ու յաճախաւոր հրդեհներն ընդհանրապէս կը պատահին աշունի սկիզբները՝ բարլիեան այր ըսուած միջոցին:

(2) Ուղեցոյց Ս. Տեղեաց, (էջ 392):

1789ին Կ. Պոլսի մէջ տեղի ունեցաւ սոսկալի տեղատարափ մը, զոր այսպէս կը նկարագրէ՝ ժամանակին ռամկօրէնոյն՝ Հ. Ղուկաս Իստիճեան Մխիթարեանը⁽¹⁾ :

«Այս տարի Ստամբուլ մէկ ալեկոծեալ տարի մը եղաւ . երկինքէն մէկ հեղեղ (սէլ) մը եկաւ որ չիկար ծեր մը անանկ սաստիկ անձրև յիշող . երկու օր անձրևային եղաւ , բայց մէջը մէկ անձրև մը եկաւ ժամ ու կէս քչօղ անանկ շատ որ լման պղտիկ ջրհեղեղ մը երեցաւ մեզի . Ստամբուլին ճամբաները անանկ բարձրրցան ջրով որ տեղ տեղ մարդիկ չի կրցան անցնիլ , տեղ տեղ ալ անանկ խորունկ փորեց որ՝ գետնի տակէն հնուցմէ մնացած գերեզմանի քարեր երևան հանեց . Գասրմ Փաշան տուներ՝ տէրամէնի քարեր քակեց ծովը տարաւ : Պօղաղ իջիին ան գեղերը որ ձորի (տէրէի) մէջ են՝ տուներուն բարձրը ֆըշինները սեղանները ելին ծովը քշեց տարաւ . Խանտիլլիին ջուրի ճամբուն մէջը քշելով խօթելով կով՝ մը՝ անանկ հրելով ծովը տարաւ , տեղ տեղ ալ ան ճամբուն ամուր պատերը պատուեց որ Սուլթան Մուրատէն են շինուած : Պէպէքին ձորին մէջ 7 ծառեր քշելով իրարու վրայ դիգելով մէկ պատուար (պէնա) մը շինեց , ու ծառերուն վրայ ջուրը արդիլուելով բարձրրցաւ , բարձրութենէն վար վազելով ջուրին սաստկութիւնը ինչ հոռմի գերեզմանի քարեր որ կային՝ ծովեզերքը քշեց տարաւ , տուներ փլուց , լեռան հողը վար բերելով չարշին հողով լեցուց . խանութները վարը խորունկը մնացին . սոխախները խուլածի չափ խանութներէն բարձր մնացին : Կէօքսուլին ամմէն պարտէղներէն որ 4 ժամ ներսէ ներս կը քշէ՝ իրենց ամմէն բերքը ծովը քշեց տարաւ . Չէնկէլ գեղին ծովածոցը լեց-

(1) Գարսպասուս հաստր Ե. 1789—1795 (կէլ 11—12) եւ Ամաւանց Բիւզանդեան (կէլ 153, 154):

ուած կերեւնար քչուած կանանչեղէնով, տներէն հանած բարձերով: Ամմէն մէկ տեղին պատահարները ինչ որ տեսանք սա սոսկալի անձրեւին սաստկութենէն եղած թէ որ պատմելու ըլլանք՝ մէկ գիրք մը կըլլայ. ամմէնուս վրայ անանկ ա՛ն մը պատել տուաւ սա անձրեւին սաստկութիւնը՝ որ իբր թէ գետինը անցնիլ կը ցըցընէր սա ամբողջ քաղաքը): Այս հեղեղաստատ փոթորիկը նման բան մը ըլլալու էր 1905 մայիս ամսուն վերջերը՝ կիրակէ ու երկուշարթի օրերուն՝ պատահած կարկրատալից և թաթառուտ փոթորիկին, որ պատճառեց մէկ միլիոն ոսկիի շիսս Կ. Պոլիսի և արուարձաններուն ու գիւղերուն՝ իր գործած ջախջախումներովն ու աւերներով և տապալումներովը. մէկ քանի հոգի ալ կեանքերնին վրայ տուին:

Տասնևութերորդ դարուն վերջերն էր՝ որ Հայ մը քիւչպիկնի վրայ ձեռագործ նկարակերտութեան գիւտն ըրաւ ի Քուզկունձուք, որով նոյն կողմերն և ի Սկիւտար Լազնաճիութեան արհեստը բարգաւաճելով՝ մինչև ցայսօր հարիւրաւոր հայ աղքատիկ ընտանեաց ասրուստին պատճառ եղաւ: Կ. Պոլիսի մեծ շուկային մէջ և գաւառներն ու Տէրութեան գլխաւոր քաղաքները՝ Պէյրութ, Չմիւսնա, Գահիբէ, Աղեքսանդրիա, Արշիպեղագեան կղզիները կը փնտուռին ու յարգի են Սկիւտարի Լազնաները: Ը. Ղուկաս Ինճիճեան՝ կերպէ հետեւեալ ստանաւոր տողերով այս հայական գիւտը. — (1)

Տեղի է (Քուզկունձուք) գիւտի Հայկազուն աղգին,
Նոր գործարանի՝ ընտիր ներկողին,
Նըկարակերտի՝ գործոյ բեհեզին
Բոլորից այլոց ընտրելագունին:

(1) Անտրանոց Բիզանդեան (էջ 189—190):

Որ թէպէտ փոխեալ՝ ի յԻւսկիւտարին ,
Այլ սորայս կոչի՝ անուն հընարչին ,
Բանայ զիւր ծագիկ՝ ոչ սոսկ գարնային ,
Այլ գարնան յաշնան՝ զանթառամային :

Իսկ Հրեայք՝ որ Յոյներէն ետք Կ . Պոլիսի մէջ
պարտիզպանութեան հետամուտ մշակներ ալ եղած են
հին ասեններն՝ 1650ին առաջին անգամ Եւրոպայէն Օր-
թաքէոյ բերին և անկեցին Կնկիկաւի բարեհամ բոյսը , որ
անտի և այսօր ամբողջ Բիւզանդիայի մէջ կը մշակուի
ու կըսպասի յաջողութեամբ ⁽¹⁾ :

(1) Անտրանց Բիզանդեան (Կէ 123—124 ծանօթութիւնն
հօտագիր) :

Է.

Ժամանակին հետեւակ մակարդակէն բաւական վեր բարձրացած ու մեծցած ազնուականութիւն մը կելնէ հոս մեր դէմը՝ 18րդ դարին վերջերը, նշանաւոր դեսպանական՝ մը թէ՛ իբրև մատենագիր թէ՛ իբրև Չէլէպի կամ Ամիրայ, Մուրաթեան Իզնատիոս տ'Օհարն⁽¹⁾ ըսուած

(1) Յովհաննէս Հիսարեան (Բանասէր ամսական հանդէս, սպ. ի 4. Պոլիս 1854ին. Հասոր Ա. կջ 14—15) կը գրէ այս սնունը Մուրաթա տ'Օհարն: Դարձեալ ըստ Բանասերին՝ Իզնասիոս Մուրաթա տ'Օհարն ծնած է ի 4. Պոլիս 1740ին Քոստանեան բարեկեցիկ ընտանիքէն Բերայի մէջ, ուր երեսասաներորդ դարի ձեռնովական գաղթականութենէն ի վեր թուած էր արեւմտեան սարագ ու կենցաղ մը՝ բաւական նպաստաւոր արեւելլի մայրաքաղաքին մէջ սնուցանելու եւրոպական զարգացում մը: Այդ զարգացումին գրգռն կուտային նաև Յրանչիսկեանք ու Դոմինիկեան շրջուն ֆարոգիներն ինչպէս նաև դեսպանական արտերը, որ օրուանած էին Բերայի բարձանց վրայ երկու դարէ հետ: Իզնասիոսի հայրը՝ Չմիռնայի շուքական հիւպատոս էր, որ տուալ շրջավայրի այս պատաստութեանց համեմատ արեւմտեան ընտիր կրթութիւն մը իր այս յառաջդիմասէր զաւակին: Իզնասիոս՝ իր համբոյր ընաւորութեամբն եւ իւրիմայի մը օգնութեամբ ստացաւ արեւելեան լեզուներու եւ պատմութեանց վրայ մանրամասն ծանօթութիւններ ու 1782ին եղաւ Շուքի դեսպան ու անուանուեցաւ Ասպետ Վազայի կարգին. 1787—1790ին հրատարակեց իր պատկերագրող Ընդհանուր Պատկերին Օսմանեան Կայսրութեան առաջին մասը: Այս գործը կորակ է մեծանուն Կիպրն անգղիացի պատմագիրը, քերեւ ժամանակակցական արագ ակնարկով մը, «իբրև գործ մը ոչ այնքան իրապէս օգտակար քան երևութապէս շեղ ու փառաւոր»:

Այս երկասիրութիւնը ցարդ ունի մեծ անուն. 1804ին ալ Բարիզի մէջ լոյս տեսաւ Պատմական Պատկեր Արեւելից անունով գիրք մը, որ կը թովանդակէր հին Պարսից Պատմութիւնը ի

4. Պոլսեցին, որ էր նաև քաջ ֆրանսագէտ և բրաւ հեղինակութիւններ ֆրանսական լեզուով Օսմանեան պետութեան պատմութեան և ժողովուրդին բարքին վրայ (երկու հատ յոյժ ստուար տպագր. ի Փարիզ 1784ին) ուսուա ի փոխարէն հայասէր Սուլթան Աէլիմէն մեծ պարգև: Մուրատճան գնացած էր նաև 1792ին Վենետիկի Միսիթարեանց վանքը, և հոն ալ պարապով ուսումնասիրած ու հաւաքած էր իրեն կարեւոր պատմական ու բանասիրական ատաղձները՝ մանաւանդ բազմաձևու ա չ. Միքայէլ Չամչեանի ու չ. Ղուկաս Ինճիճեանի միջոցով: Իզնատրոս՝ ամուսնացած էր Գուլէլի օլլուի աղջկանն հետ, ու իր դիզած հարստութիւնը պակեցուցած ըլլալով Ֆրանսայի դրամատունը՝ 1708—92ի յեղական մեծ դէպքերուն ժամանակ կորոյս այդ հարստութեան

սկզբանէ մինչև 7րդ դարը: Ինք մեռաւ Յգոս. 27, 1807ին իր Պիկվրի տունին մէջ. իր զուակը՝ Կարոյոս Մուրատա սայեօր, ղեսպան Շուքի ի Գրիսիսի, շարունակեց իր ընդհատուած գործերը, և և հրատարակեց Պատմութիւն Մողղաց՝ 1824ին և Սև ու Կասպից ծովերուն Հիւսիսային երկիրներու վրայ ի ժ. Գարու 1828ին: Մուրատան ՏՕհարնի վարժը գրող ֆրանսացի պատմագիրը սա դասասանը կընէ իր գործերուն վրայ. «ՏՕհարնի պատմական գործերն աշխարհագրական ծանօթութիւններն և և միջին դարի կու անծանօթ ազգաց վրայ տուած տեղեկութիւնները՝ ճիշդ են. բարգմանած կամ ֆաղած է ֆանտազիոս արտաքցի բուրք և պարսիկ հեղինակներէ, որոնց վրայ համառօտի կը խօսի իր յառաջարանին մէջ: Իր գործին կէսը լեցուած է ծանօթութեամբ, որ բուն պատմութեան կցորդ կարեւոր մասն են»: Տե՛ս նաև իր վրայ մեր գրածը 1903ի թիւ 5 Մասիս հանդէսին մէջ և Ստուեքն Հին Գեղեկութիւն: Մուրատայի օսմանեան կայսրութեան պատմութեան անկ օգտուած է Յովսէփ Համեքր գեղմանն իր Օսմանեան Պատմութեան Ա. հատրին մէջ՝ մանաւանդ Օսմանեանց Վանական դրութեան վրայ խօսած տեղումները (հաս. Ա. էջ 203):

մեծ մասն ինչպէս և իր կինը, զնաց Փարիզ երկրորդ անգամ և նորէն ամուսնացաւ ինն ազնուական օրիորդի մը հետ, ու ա՛լ բոլորովին տուաւ ինքզինքը մատենագրական դպրութեանց: Իր հրապարակային ու մատենագրական վերջին անունն էր՝ Ասպէս Օստոնի, և ա՛ս է պատճառն՝ որ Եւրոպացիներն յոյն կանուանեն զինքը, Շուէտի մէջ առաւ Օստոնի ասպետութեան այդ տիրադոմն ու պատիւը, ուրկէ՛ իբրև լիազօր դեսպան եկած էր ՚ի Կ. Պոլիս: Չափազանց յարած զրել-կարգալու՝ պաշտօնական ու դեսպանական գործերուն մէջ անգամ կըզբաղէր գրականութեամբ օրն ամբողջ ե՛օթը ժամ: Արժանիքով՝ Երեսնիա Չէլէպիի ու Չամճուզատէ Յակօբ դպիրի նման, իսկ պաշտօնով՝ անոնցմէ շա՛տ վեր անձնաւորութիւն մը⁽¹⁾, որուն անունն յիշուած է նաև արժանատարարար երևելի արանց եւրոպական բազմաթիւ գրութեան մէջ: Պատիւ իր յիշատակին:

Նշանաւոր է՝ տարաբնակ մեծանուն Հայերու կարգին՝ Դրանսիուանիայի մէջ հաստատուած Ազոնց ազգատոհմն ալ, դասթամ արարատեան աշխարհէն 1330ին ՚ի Խրրիմ, անկէ 1654ին Դրանսիուանիա: Այս տոհմէ՛ն էր Ստեփանոս Ազոնց Գիւլէր արքեպիսկոպոսը՝⁽²⁾ Մխիթար-

(1) Դարապատումեն ու աւանդութենէ:

(2) Ազոնց Ստեփանոս Գիւլէրի մկրտօքեան անունն ալ Ամիրայ Կր: Ինկ Ազոնց Կր Անու՝ որ Սիմոն Լուրսկ Փրանսացի ֆահանային ուսոյց ֆաշ հայերէն մը: Եւրոպայի բազաւորներ ու իշխանագն անձնաւորութիւնկ այցեցիկն Ազոնց Արքային՝ իր առաջինաւանի մէջ ևւ մեծապատիւ մեծարեցիկն զայն, որոնցմէ Աւստրիացոց Ֆրանչիսկոս կայսրն՝ իր աւագանիին ձեռ այցելով իրեն ի Ս. Ղազար՝ ընտանի գրուցաւորութիւններով պատուեց զայն, ևւ մեկնած ասեւը իսկողապատանով ըսաւ. «Դրանսիականիայի մէջ ծեսա՛յ ֆու ազգատոհմը. երբ նորէն դառնամ ինն պիտի տանիմ անոնց ֆու բարեւանդը»: Վաթ 8. 8. Ստեփանոսի Ազոնց Գիւլէր (Տպագր. ի Վեներիկ 1825 Կշ 40):

եանց (Վենետիկի) երրորդ Արքան ազնուական, որմէ կրսկրսի Ս. Ղազարու միաբանութեան բարոյական ու իմացական ոսկեղարը: Ազոնց Տանուտեարք՝ պատուուած են Աւստրիական ինքնակալութիւնէն Հունգար նախարարաց աստիճանակցութեամբ, և իրենց բնակած երեք քաղաքները՝ Պաշպալով, Կեռլէ, Ճուրճով անուանուած են Ստանիկ քաղաք արքունի:

Ստեփանոս Ազոնց արքայի եղբորորդիներն ու քեռորդիները՝ Թըմըշվար, Պուտա, Լուկօշ և ուրիշ քաղաքներու մէջ եղան գանձապետ ու արքունի խորհրդական⁽¹⁾: Դրանսիրվանիոյ Հայոց սովորութեանց և ընտանեկան բարքի վրայ բաւական գաղտփար կրնայ տալ հետեւեալ խնամխօսական պայմանագիրը, որ իրենց լեզուով գրօրկնի անուանած են.—

— Գրօրկնի. թվին Հայոց ՌՄԷ. (1758), Հոկտ. Գ.

Կամաւն Աստուծոյ կամեցողին բարեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եղև այս շնորհաւոր հարսանիքն Ի յերկիրն Դրանդիլվանիոյ, ի քաղաքն Հայոց (Armenopoli) Կերլա. ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ է օգնական և պահապան ամենայն հաւատացեալ քրիստոնէից, մանաւանդ այս հարսանեացն: Ի հայրապետութեան հանուրց Քրիստոնէից Սրբազան Պապին Տեառն Տէր Կղէմէսին երեքտասաներորդի, եպիսկոպոսութեան յերկրիս Դերապատիւ Տեառն Տէր Զիկիւլմոնտոսին, Արքեպիսկոպոսութեան քաղաքիս գերյարգելի Տեառն Տէր Վրժարեան Ղուկասին. Աւագերիցութեան տեղւոյս Գերյար. Տեառն Տէր Թորոսեան Մինասայ, ընդ իւրեանց վերապատուելի քահանայից, Եւ ի ժամանակս Գրայոքեան

(1) Vita D. D. Stephani Acontii Kover. Venetiis, Typis coenobii, Lazari. 1825 (page, 4—5):

Թագուհուն մերոյ Մարիա Թէրէզիային . Եկեղեցքանու-
րեան պատուելի Աղաչայ Մէրիկին , Խաչիկին Ակոր-
չայեան , Պիրովուրեան քաղաքի՛ս Պատ . Աղաչալ Ակոր-
չային Հանդովիչեան , ընդ իւր երկոտասան երգուեալ
դատաւորաց :

Զոր եկն առաջի օրինաց վերապատուելի քահանա-
յից , և պատուելի տօրնարարաց՝ փեսին հայրն Պատ .
Աղաչայ Նիկօն Շուժուլովցու , ընդ կողակցոյն իւր պիսա
խաթունին , և խնդրեցին ի Պատ . Աղաչայ Խաչիկէն և
իւր կողակցոյնմէ պիքա Աննուհէն՝ զիւրեանց սիրելի
դուստրն զՀռիփսիմէն , իւրեանց սիրելի որդւոյն՝ Ստե-
փանին՝ ի հալալ ամուսնութիւն , զոր Տէր Աստուած շը-
նորհաւոր արասցէ :

Արդ ես Խաչիկս հետ իմ կողակցոյն Աննուծին , կու-
տամք մեք մեր սիրելի դատերն Հռիփսիմէին՝ ճհէզ . նախ ,
զԱստուծոյ և զծնողական օրհնէնքն . և սպա՛ սկիզէն
և մարդտեղէն , արսթեղէն և հագստեղէն . որ է այս-
չափ . Ա . նշանի մատնի մը Թ . սկու . տիւսմանթով և
ուռպինով , պաշխա . Ա . մատնի մը Գ . սկու . ոռպի-
նով , Ա . լանձուկ մը ԻԼ . սկու . իւր սկու տուգադոմի
է . սկու : Ա . արսթէ սկէջրամ դօտի մը մարգըրանելով
ակներով Ա . սկու : Բ . ճուֆթ օղ , առջինը է . սկու
ուռպինով և տիւսմանթներով . երկուսում ճուֆդը Գ .
սկու . ոռպինով և տիւսմանթներով : Բ . Բընա վզի մար-
գրիտ , առջինը Լ . ջրակ գօրջաններով արթէ . երկու-
սում բընար՝ Ե . ջրակ այլվի վզի մարգրիտ : Ի . ջրակ
թեւի մարգրիտ Գ . մինդէյ . առջինը կապուտ փորած
խատիֆէ կուչայով բրիմուիդ և տակը փորով , արսթէ
սկէջրաց սաւատուն կօճկըտիքներով և կիլապտօնէ կայդ-
ներով , Երկուսում մինդէյը համուսին լիւսղարինէ կու-
չայով բրիմուիդ կիլապտոնէ կայդներով , սիրմայէ կօճկը-

տիքներով : Իրեքում մինդէյը ձիծիլխայէ բրիմուխա քի-
շով արսրդէ ոսղէջրած կօճկըտիքներով , Բ . կրծդալ ,
առջինը դէզին ըլտօֆէ բրիմուխդ քիշով կիլապտօնէ
կայդներով : Երկուսում կրծգալը ձիծիլխայէ բրիմուխդ եա-
նօդով , կիլապտօնէ կայդներով : Բ . Զէփէշ . առաջինը
զարպայէ ոսկու բօնդիշքաններով : Երկուսումը ու երե-
քումը կապուտ փորած խատիֆէ բօնդիշքաններով : Եօֆն
սուզնա . առջինը կապուտ փորած խատիֆէ իւր դեր-
դոյն իւր կիլապտօնէ ֆիդոյոյն և իւր զարմածին բէ-
ձէթագիլովէ շուրձոյն : Երկուսում սուզնան դեղին ըշդօ-
ֆէ իւր դերդոյն , և իւր ճերմակ բէձէէ շուրձոյն : Ե-
րեքում սուզնան տրօկէտէ չիշակներով իւր դերդոյն և
իւր ըշայիրէ շուրձոյն : Զորսում սուզնան ժանշարի ըլտօ-
տօֆէ իւր գիրդոյն իւր կիլապտօնէ ֆիդոյոյն և իւր
շուրձոյն : Հինկում սուզնան քարմուճին ձիծիլխայէ իւր
դերդոյն և իւր շուրձոյն . և իւր կիլապտօնէ ֆիդոյոյն :
Վեցում սուզնան վօղչին աղէի գամիլօղէն իւր շուրձոյն
և իւր ճերմակ լայպրոյն : Սիզնում սուզնան համուսին
աղէկ գամիլօղէն իւր շուրձոյն : Պաշխա , Բ . շարձ . Բ .
սեւ շար բէձէ գլխու , Բ . վզի լալեխ չիշակներով : Ա .
շապիք մը փեսութեան . ԻԴ . շապիք հարսնութեան :
Պաշխա Գ . շապիք ըշայիրէ և մէկը բէձէէ : Բ . օպրուզ :
Գ . սաւան , հինկում սաւանը կաշի : Գ . ճուֆթ բարձե-
րեսք ճերմակ դուդիշներով , Ա . կնկողին մը Բ . բարձով :
Ա . թուրքի խալի մը . Ա . թէփսի մը . Ա . սնտուկ մը :
Այլ աւելի Աստուած իմերուստ պարգևէ :

Գարձեալ կուտանք մնր սիրելի փեսին պաշխշ Ե .
գուրա արսթէ ոսղէջրած : Զ . արսթէ դիդալ , և մնր
գտտերն մէկ մարգտէ ֆարթա մը ոսկի պօկլարներով որ
ըլան անդաւանալի :

Գարձեալ ևս նիկօլս՝ հետ իմ՝ սիրելի կողակցուս

կուտանք մենք երէջուր մեր սիրելի հարսինը Հովիտին
երեսջուր պան հարուր և քսանըհինգ ոսկի, մէկ մանէ-
լա ոսկու, և մէկ լանցուկ մը 45 ոսգու, որ, և ումէնով
մէկտեղ՝ երկու հարուր ոսգի: Եւ զԱստուծոյ ողորմու-
թիւնն կու կամենանք որ անհատ ըլլայ մեր սիրելի տը-
ղոցն⁽¹⁾:



Եւ որովհետեւ անգամ մը առած եղանք մեր շրջա-
նակին մէջ գրագէտ-ամիրաներն ալ՝ յիշե՛նք նաև իբր
այնպիսիներ՝ աղայ Մարգար Շէհրիմանեանը⁽²⁾, որ թարգ-
մանած է Մեծիկ Ճիկիլիզիսանի պատմութիւնը գրաբառ
հայերէնի (Տպագր. ի Թրիեստ, ի տպարանի Հարց Մխի-
թարեանց, 1788), և Մարգար Խօջենց. Չաքարիան ևս—
եթէ երբէք այս երկուքը չեն միւսնոյն Մարգարը, որ
սոյն միջոցները (1790-1800) Կ. Պոլիս գտնուելով՝ Բե-
րայի գերեզմանատունին մէջ տօն օր մը ունեցած է ի-
մաստուն գրուցատութիւն մը՝ ժամանակին Անատու
Քաղաքէրիին հետ՝ Երրորդութեան վրայ, որ արձանա-
գրուած է Ս. Յակոբեանց Սիոն հանդէսին մէջ: Ունի
Հոգեշահ քանից կտակագիր մը տպեալ՝ առ իւր որդին, և
առաջին թարգմանութիւն մը Տելեւաբայ արկածին՝ տպա-
գրուած նոր նախիջեւան՝ ընդ հովանեաւ երկնահանգէտ
Սուրբ Խաչ վանիցն 1793ին:

1799ին կը յիշուին Բինկեանցի մահեօխ Պետրոս ա-
միրայ Ազրիանուպոլիսի մէջ ու իր որդիւրը՝ Պաղտա-

(1) Տե՛ս Բազմավէպ 1873ի: Պայմանագրիս մէջ անծանօթ
եւ օտար քաները մեկնուած են նոյն Բազմավէպներուն մէջ:

(2) Ասոր սերունդեկն կը քուի Կոստն Յովհաննէս Շեհրիմանե-
ան, որ Սամուէլ Մուրաթի կտակահասարութեան մէջ ունի քա-
ւական քաժիկ:

տար, Յովհաննէս, Խաչատուր, որ տպագրել տուած են Սիւնեցիին Ադաւ Գիրքը, հիներուն լաւագոյն տաղաչափեալ՝ քերթուածներէն:

Ռուսիայի մէջ ալ՝ 1789ին ծնած էր Խաչատուր Լազարեանց, Պետական Խորհրդական Ռուսիայի, որ նուիրեց իր նախնեաց հիմնած Լազարեան ձեմօրանին մեծաքանակ գումարներ, այցած է քանիցս իշխանաբար Եւրոպայի մայրաքաղաքներն ու Փարիզ. վախճանեցաւ բարւոք ծերութեամբ 1871ին Բեդրսպուրկի մէջ: Նշանաւոր է նաև ի Թիֆլիս Քամօյնց վաղեմի տոմար, որոնց անունով կը կոչուին Թիֆլիսի Տափի քաղի երկու եկեղեցիները: Երեւելի է նաև Ուրֆայի մէջ 18րդ դարին՝ հայազգի Ստեփանոս կամ Փանոս ճարտարապետը, որ շատ սիրելին էր մեծափարթամ Համպալ օզլու Ահմէտ փաշային. շինեց Ուրֆայի մէջ հինգ նշանաւոր մրդկիթ և շատ յորդորուեցաւ թողուլ իր կրօնքն և ազգը մինչև ի վախճան:

1790ին Մատրասի մէջ կը փայլէին կարգ մը հայ մեծ տուներ, որոնց մէջ էր նաև Շահամիր Ս. Շահամիրեան, որ տպագրել տուած է Աղեքսանդր Մակեդոնացիի պատմութիւնը: Նոյնպէս ի Մատրաս Աղայ Եղուարդ Ռաֆայէլ Ղարաման՝⁽¹⁾ հայր պարոն Աղեքսանդր Ռաֆայէլի Ղարաման, որոյ արդեամբք և ծախիւք տպագրուած է Ռօլէնի վեց հատոր ընդարձակ Հնախօտութիւնը՝ ճոխ և գեղեցիկ զրարաւ թարգմանութեամբ ի Վեննայի 1825-1829ին, ինչպէս Հոռմայեցոց մեծ պատմութիւնը 1816ին:

Այդ միջոցներուն նշանաւոր է դարձեալ Մանուկ պէյ Ռուսնօքցի, որ փայլած է արտաքոյ կարգի թեւարկութիւններով:

⁽¹⁾ Սերեալ Ղարամենց ազնուական ցեղեն՝ Նախիչեանի Արթանկի գիւղը ծնած Խաչիկ Ղարամենցնէ:

1799ին ազաջնակարգ մեծատուն Հայեր էին ի Կ. Պոլիս՝ Ազնաւորեան Գասպար, Տագէսեան Յովհաննէս, Լէմոնճեան Յովհաննէս և Կիւլլապեան Յակոբ աղաները :

1800 թուին կը յիշատակուի ի Կ. Պոլիս Ղրիմեցի (ըստ այլ արձանագրութեան մը՝ Վանցի) Աղայէկեան եազճի Գէորգ Աղայ՝ թարգման ռուսական զեապանատունին, որ աշխատեցաւ Կաթողիկոս ընարել տալ Յովսէփ եպիսկոպոսն Արղութեանց, և յաջողեցաւ :

Նոյն թուականներուն յիշուած են ի Քանձակ Արղուեցի Տայինեանք, որոնց սերունդը բնակեցաւ 1842էն ասդին ի Տփղիս. կը համարուին Յովհան Օճնեցի իմաստասէրին տոհմէն : Այս սերունդին վերջին նշանաւոր անդամն եղած է Ստեփաննոս Տայինեանց :

1780էն մինչեւ 1825՝ կը յիշուի նաև ի Կ. Պոլիս Ժողովրդասէր Արրահամ ամիրան⁽¹⁾, որ սպագրել տալէ

(1) Իբր հայրական ու հանրական ալ պարագայ մը՝ ներեն մեզի հետաքրքիր ընթերցողներն յաւելուլ հոս՝ որ ակընցի սպագրուսէր այս ամիրային եղբայրն էր հաճի երամ յարեւտ անձնաւորուչիւնն՝ հայր երամեան Կարապետ ու Դեորգ պէյերուն, որ այս վերջինն ալ՝ էր հայր յարճուպատի Արտահամ փաշային, անդամ օսմանեան պետական Ծերակոսիկն : Այս հաճի երամ աղան եւս կը բնակէր Սամաթիա՝ ասենին գործօն Հայերուն հոշակաւոր կենդրոնը, և Մրմըր զատ Յակոբի (մեր հօր կողմէ պապն ու Մրմըր Տէր Յակոբ Սամաթիայի վաղնչուց աւագերէց աղօթամեմունը՝ Մրմըր՝ ֆահանային բոռան բոռը) և Դուլումձը Ղազարոսի հետ քաղին համերաշի եկեղեցականներն էին : Երեքը միասին Հաճի երամ աղայ, Մրմըր զատ Յակոբ, Դուլումձը Ղազարոս, ընտանի մտերմութեամբ կը հաշուեն՝ որ 1816 Ս. Դեորգի օտին շարքուն երեքն ալ մեյմէկ նոր զաւակի տէր պիտի ըլլան. ուստի ուխտ կընեն՝ որ յիսցուած երախաներուն երեքին ալ անունն առ յիշատակի Գէորգ դնելով՝ նուիրեն անոնք հանրական ծառայութեան : Սակաւ Ղազարիացի անհանդարտ այն մարդը,

ետք իր ծախքովը շատ գիրքեր՝ բացաւ ալ ի Կ. Պոլիս՝
Հասան փաշա խանը՝ տպարան մը իրեն սեպհական . ժա-
մանակին մանաւանդ կրօնական ու պատմական գիրքե-
րուն մեծ մասն ելած են այդ խոշորագիր տպարանէն :
Արրահամ ամիրայի հայրն է Թէրզեանց Սարաֆ հաճի Օ-
հան աղան՝ միշտ ակնցի : Արրահամ ամիրայ , որ Քարա-
քէնեաւ ևս կը կոչուէր , բրած էր նաև մեծագումար կը-
տակ մը , որ 1830ին Հասգիւղի Ս . Ստեփանոս եկեղե-
ցիին նորայնութեանը գործածուեցաւ :

18րդ դարու մէջերը օտար տէրութեանց Կ . Պոլիսի
ներկայացուցիչներուն կողմէն կըլլայ Կ . Պոլիսի հայ Պատ-
րիարքարանին կարեւոր առաջարկ մը , որ կը մերժուի
խղճահար խորասիրութեամբ մը : Մինչև նոյն ժամանակ-
ներն եւրոպական դեսպանք և հււպատոսք կիջեւանէին ,
բաց ի ֆրանսական ու թերեւս անգղիական դեսպանէն ,
Կ . Պոլիս Թավուք Բագար մեծ Վէլյիր-Յանի դիմաց Էլչի-
խանը (Տե՛ս նաև Յ . Համմէր Պատմ . Օսմանեանց , թրգմ . J . J .
Hellert , հատ . 2 . էջ 117) և որովհետև չէին կրնար իրենց

Գույումընը Ղազարոսի որդին , յառաջդիմարա՛ւր երկու շարք
տուաչ կը ծնի . ու հայրն ալ այս պատճառով՝ կը յայտարարէ իր
ընկերներուն թէ պիտի աւրէ իր ուխտը պատշաճագոյն անուա-
նադրութեամբ մը , քանի որ Ստամբուլ կը կանխէ օտան ևս հիմն
օր տուաչ տալու իրեն զուակը . մկրտելով անհամբեր երախան ալ՝
իրեւ Քրիստոսի արագ տուրքն՝ անունը կը դնէ Քրիստոս-
տուր , ևնչակաւորն այն ապա Ղազարոսեան Քրիստոսուր կ՛փեկ-
նի : Իսկ հաճի Երամ աղայի ևս Մտմըր գաւթ Յակոբի ժամադրէ
երախաններ՝ ձիշո հաշուեալ օրին՝ Ո . Գեորգի շարքուն՝ 1816ին
աշխարհ գալով կը մկրտուին երկուսն ալ Գեորգ անունով ևնչ
Ղաւտգայ Թաշի կիրակիին մին՝ Երամեան Գեորգ պէշ սեղանա-
ւորը , միւսն՝ հանգուցեալ (1873) հայրս Գեորգ Մտմըրեան , եր-
կուսն ալ երրորդին Քրիստոսուր կ՛փեկնի՝ հետ կըլլան այսպէս
յորովայնէ ընտրեալ և զատուցեալ : Զայս այսպէ՛ս պատճա՛ծ
է ինձի ին՛ք Քրիստոսուր կ՛փեկնի Ղազարոսեան աւանդարտ :

կիններն ալ հետերնին բերել ի Կ. Պոլիս⁽¹⁾՝ նկատելով Հայ
Եկեղեցիին մերձաւորութիւնն Արեւմտեան Եկեղեցիին՝
կառաջարկեն Հայոց Պատրիարքարանին Հայ մեծատուն-
ներէ առջիկ առնել ի հարսնութիւն՝ համակերպելով ըստ
ամենայնի՝ կրօնական ձեւակերպութեանց . Հայոց Պատ-
րիարքը ժողովելով ամիրայից հետ ի խորհրդակցութիւն՝
կը մերժեն փրհկնկոչքեան պատճառով . դեսպանք կը դիմեն
Յունաց Պատրիարքին , որ կընդունի ամենայն սիրով՝
պայմանով որ Որդատոքս ձեւով կատարուի այդ խնա-
մութիւնը . անկէ ի վեր կը հաստատուի խնամեկան
կցորդութիւն մը Եւրոպացւոց և Յունաց միջեւ , որ Հա-
յոց հետ պիտի ըլլար՝ եթէ Պատրիարքը (Թուի Զարա-
րիա Պատրիարք) և մեծատունք չմերժէին :

Ասոնցմէ զառ՝ կան նաև դարասկիպրիկ (1780-1810)
դպրոցաշէն Միրիճանեան Շնորհք ամիրաները , որ նպաս-
տած են Ս . Յարութիւն Եկեղեցիին քովի Հիւանդանո-
ցին հիմնարկութեան (1794) , և հաստատած են Դպրա-
սուն մը Մայր Եկեղեցւոյ քովն ու Ֆըչըճը փողոցը՝ Պո-
լիսի հայ իրր անդրանիկ վարժարաններն հանրային : Ղա-
լադիայի Ս . Լուսաւորիչ Եկեղեցիին նորաշէն աւազանին
ներքին ճակատը դրուած մկրտութեան պատկերին յիշա-
տակարանին մէջ՝ արձանագրուած են Միւթէվէլլի մահ-
տեսի Վարդերես ամիրայ և որդին Յակոբճան աղայ և
անոնց փեսան մահտեսի Գէորգ ամիրայ , որոյ որդին
Միւթէվէլլի Գրիգոր ամիրայ : Ասոնց օրերն արդէն բա-

(1) Կ. Պոլիսի մէջ զիրոյ շարագն եր յայնժամ՝ արանցը գալ-
բաւ և ճիւղալէ, կանանցը Ծէրանէ ու եաշմաւ. եքե գլխաւ-
կաւոր կամ շրջագգեստով մէկը երեւեք փողոցը՝ կը մասնանշեին
իբր էճրէնն խորշնի, և փողոցի շուներն անգամ կը հաշեին
հարածելով: Այս և ուրիշ նշանակալից պատճառներով եւրոպա-
կան ներկայացուցիչք չեին կրնար իրենց հետ կին բերել Կ. Պոլիս:

ւական սրայծառացած էր Տ. Մովսէսի որդի Փափազեան Սիմէոն ամիրան՝ հայր Սարիմ տղային և նշանաւոր ձանիկ յաղթանդամ ու յաղթադրամ ամիրային, որ անուն հանեց 19րդ դարի առաջին քառորդին մէջ: Կա՛յ նաև Սուրէնեան Մուրատ ամիրայ մը:

*, *

Կեսարացի՝ նախ կօշկակար ապա գրադէտ ու մատենագիր Պաղտասար Ա. դպիր յորջորջուած Պատուելիէն ետքը, որ էջմիրածնական հին նուիրակի մը ամէնէն ներձուն աշակերան ու 1700էն մինչև 1750 Պոլիսի ամենէն բազմահմուտ և բազմասան վարժապետն եղաւ: (1) ձեռնկալութեամբ իրեն ժամանակակից ամիրաներուն և գրասէր Յովհաննէս Կոլոտ և անոր ձեռնասուն Յակոբ

(1) Ըստ ծերունի Գարիկէլ Պատկունի (Ծաղկաբաղ կենսագրութիւն Ներսիս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին, էջ 11—12) այս Պաղտասար Ա. դպիրն՝ Հոյով Յովհաննէսի նաև Մխիթար Արքայի գրական հեղեղէն պահպանած էր ուղիղ հայերէն լեզուն, գրելով եւ սպելով շատ հեղինակութեանց եւ սրբագրութեանց հետ՝ նաև երես հասո՞ր աշխարհարան ու գրարան ինտանտութիւն, գոր, կըրս Գ. Պատկունեան, ծայրէ ծայր իւրացուցած է Հ. Մխիթարի Չամչեան՝ առանց յիշելու իր Պատմութեան մէջ գեթ անո՞նքը Պաղտասար Ա. դպիրին: Կաւանդուի թէ գրած էր նաև ընդարձակ պատմութիւն մը Հայոց: Այս վաղեմի գրարանեան դպիրին վարժարանին մէջ ձախարակութեան՝ Սիմեոն Կաթողիկոս, Բասենցի Յարութիւն վարդապետ, իմաստասէր Պետրոս վարդապետ Բերդունեան, Թագուր վարժապետ (Ներսիս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսին վարժապետը), Աղամազեան, Ղարակցիկ, Բարսեղ Կեսարացի եւ Սահակ Բ. ահագին ըսուածը, որ հակառակորդն էր Չամբարիս Պատրիարքին Կ. Պոլիսի: Ըստ այսմ՝ գրականութեան դարագլուխ մը բացած է այս անշուք Պաղտասար՝ դպիրը, որով կը կշռէ՝ գեթ գրականօրէն՝ չոչ ամիրայ մը: Պաղտասար դպիր վախճանեցաւ 85 տարուան 1763ին, եւ քաղուեցաւ պատուով Պալլիսի զերեզմանատունը:

Նալեան Պատրիարքներուն, հետզհետէ իբրև գրագէտ ու լեզուագէտ դպիր փայլեցաւ, Խարբերդցի Ղուկաս լեզուագէտ վարդապետին յաջորդելով արժանաւորաբար, ⁽¹⁾ 1750էն 1812 անհունջ աշխատող Պալաթցի Տէր Յովհաննէսեան Գէորգ պատուելին, տեղեակ գրականօրէ՛ն ալ վեց մեծ լեզուներու (եբրայական, յունական, արաբական, պարսկական, լատինական ու հայկական): Ինք՝ ամիրաներուն շատ գլուխ ծող մարդ չէ՛ եղեր ուրիշ հետեւակ պատուելիներու պէս, այլ խորխոր ինքնավրատանութեամբ Պալաթի Հրեշտակապետ եկեղեցիին քովընտրի սենեակն ատանձնական թուաւկեր ներանձնութեամբ մը՝ բանասիրեր է տարիներով, օժակով տո՛ւմային դեռ վտիտ մատենագրութիւնը տաննահինգ հատորի չափ հմտալից գործերով, ⁽²⁾ մինչ Վենետիկի Հ. Արսէն Բագրատունին դեռ աշխարհ եկած անգամ չէր: Յարութիւն Պէզճեան տպագրել տուած է այս անձին

(1) Այս յատկանշէ Ղուկաս վարդապետը՝ շատ անուանի է իբրև քարգմանիչ արագագիր ու քազմալսասակ. ունի քարգմանած քանի հասորի չափ իր ամեն շեւակ մեկնութիւն Ս. Իրոց, որոնց մեծ մասը մեռագիր՝ կը մնայ ազգ. մասնադարանը Ղալաթիայի ու Երուսաղէմի Ս. Յակոբեանց քանդարանը. մեկ մասն ալ՝ ջրպուած է ի Կ. Պոլիս եւ ի Վենետիկ: Միւրքարեանցմէ ու Յովն. Տերոյնեց պատուելիէն զաս՝ նոր դարերու մէջ չիկայ այս անձին չափ թուղթ սեւցունող հայ գրագէտ, որ կը գործէր ծախսովն եւ յորդորելովն Յակոբ Նալեանի:

(2) Դիլիաւորները՝ Գարսիահայ բառարան (սպուած), երասպականէ քարգմանութիւն մը Սաղմոսի, Ասուածարանական հասորներ, արաբերէն ճեւղանութիւն մը գրաբառ բացատրեամբ, արաբական քարգմանուած աստղագիտութիւն մը, Արիստոսկի Յղ. Աշխարհիին գրաբառ քարգմանութիւն մը անուարս (Ս. Յակոբեանց Երուսաղէմի գրասունը թիւ 1435 մասեան), զոր քարգմանած են նաև Դաւիթ Անյաղթ ու գործիս հեղինակն՝ ամբողջապէս:

քանի մը գործերը, ու մինք շատ անդ պատահած ենք իր կոկիկ ու կարեւոր ձեռագիրներուն: Սա՛ ինքն ալ իր ժամանակի գրագէտներո՛ւն ամիրան է եղեր, որ Պալաթցի ըլլալուն համար՝ կրատորագրէ եղեր Գեորգ դպիր Պալարախան: Արժանայիշատակ Տ. Յովհաննէս Ա. քահանայ Հիւնքեարպէյէնտօնեան՝ մօտաւոր ազգականն էր Գէորգ Յովհաննէսեան այս դպիրին ու թերեւս անոր նախանձայուղութեամբը մղուած բանասիրական ու լեզուագիտական դժուար աշխատութեանց:

Գէորգ դպիրին աջէն ձախէն զոյգ կրնթանան՝ Մելքիսեղ դպիր ու Հոգեւից խմաստասէր ըսուածն՝ հաւանաբար հայ-հուռմ, որ թարգմանած է՝ ի մէջ այլոց՝ յունականէն Վասսակ ումկեղեկ ըսուած (ձեռագիր) կարեւոր գիրք մը, և Սարգիս դպիր Յովհաննէսեան, որ գրած է Կ. Պոլիսի վրայ հետաքրքրական տեղագրութիւն մը՝ Բիզասէն մինչեւ իր օրերը պատմական ակնարկներով. ոճը՝ կոկիկ և լեզուն՝ պարզեփուն գրարատ մըն է: Պալաթի այս փոխտփաներուն թիկունքն էին Պեղծեան Յարութիւն ամիրայ և Հովուեանց Մարտիրոս աղայ՝ թոռն Ապուշէխցի արդիւնաւոր հօճայ Յարութիւնի:⁽¹⁾ Իրենց յաջորդեցին խմաստասիրաբար 19րդ դարին մէջ՝ Գրիգոր Փէշտրմալճեան պատուելին և Չամուրճեան, որ ապա (1857) Տէրոյնց կոչուեցաւ. նաև մասամբ Յովսէփ Մալէզեան պատուելին՝ իրրեւ քաջ հայկարան և Խ. Պ. Միսաքեան՝ պատմագէտ բանասէր ու քննարան, որ քսան և չորս տարի ուսումնասիրեց Փարիզի մէջ և եկաւ վերջին տարիներն անցուց ի Կ. Պոլիս՝ իր ծննդավայրն Սկիւտար, ուր վախճանեցաւ 1891ին:

18րդ դարին վերջերը՝ պատմական է ակընցի Չօփենց

⁽¹⁾ Ձեռագիր Վասսակ Ոսկեղէն Սամուէլ Ռարբիին (եջ 1 և 92):


մահտեսի Անտօն ամիրան, որ Երուսաղէմ դնացած էր մեծ վէզիրին հետ, և Մեծն Նարոլէոնի Սուրբական արշաւանքին ատեն՝ Պաղեստինի ընկերներէն Հայերուն և Երուսաղէմի վանքերուն կրած վիշտերը թեթեւցունելու համար՝ խնդրանօք Երուսաղէմի Պետրոս Պատրիարքին՝ միջնորդ եղաւ տեղւոյն մեծ բղեաշխին և Ս. Յակօբեանց Միաբանութեան: Զօփենցի հետ կը յիշուին՝ Մատենի Ստեփան և իր ընկեր Փիլիպպոս ամիրաները: Յիշուած է նաև մեծագոյի յորջորջումով Պիլէզիկճի Յովսէփ աղայ մը՝ ՚ին Արարատեան գաւառներու գաղթականներէն սերեալ, որ 14 ուստր և դուստր գաւակի տէր եղած էր, այնպէս որ 4. Պոլիսի մէջ կըրնանք համարել ամէնէն բազմանդամ աղգատո՛մը՝ որ կցորդութիւն ունէր ամէն մեծ ու միջակային ընտանիքներու հետ, խնամութեամբ հարսնութեամբ և փեսայութեամբ՝ Տատեանցմէ, Պալեսանցմէ մինչև էսնաֆ ընտանիքներու խաւերը, ծայրագոյն երջանկութիւններէ մինչև յետին վիպական թշուառութիւններու մէջ տարուբերելով լայնատատան... Իր ընտանիկան զերեզմանն է Սկիւտարի զերեզմանատունին կենդրոնը: 1793ին չինուեցաւ Ազատը գիւղին մէջ մեծ վառօդարան մը և վառօդապետ կարգուեցաւ հոն հաճի Տատ Առաքել ամիրայ:

1800ին կը յիշուին ի Հունգարիա ականաւոր վաճառական՝ Եւդոկիացի Ղըրըճեանց աղայ Մելքոն և իր որդին Պաղտասար Սապէլեան, որ օգնած ալ են ժամանակին տպագրական հրատարակութեանց:

1789ին կը յիշուին Կիպրական առաջնորդութեան յիշատակարանի մը մէջ⁽¹⁾ բարեպաշտօն Մահտեսի Յարութիւն և Սարգիս ամիրաներ ՚ի Կիպրոս, որ հայթայթեցին

(1) Տե՛ս Կիպրոս Խղզի (հշ 72):

և նուիրեցին տեղւոյն առաջնորդարանին՝ կալուածներ ու
յատուկ վայր: Գարձեալ 'ի Կիպրոս 1816ին կը յիշուին
Բալուցի Սարաֆ Յարութիւն ամիրայ Անտօնեան, Նշա-
նաւոր եղած են նոն՝ ԺԼրդ դարի վերջերէն ԺԹրդ դարն՝
Ասվար օղլու, կեսարացի Հոճայ Յարութիւն, Յովակիմ-
եան Յարութիւն և Սարգիս, Պօղոս Երամեան զմիւռնա-
ցի, Սիմէոն խրրիմցի՝ Միւթէվէլլի, Յարութիւն Երամ-
եան, Հայրապետ Մելիքեան և Յակոբ Պալֆա, որ կը
բնակէր 'ի Պէլլէր-Պէյ և որ թեւորկեց Գալուստ Եպս.
նուիրակին⁽¹⁾:



(1) Պատմ. Կաթողիկոսաց Էջմիածնի. Մսեր Մագիստրոս Մսեր-
եանց:

Ը.

Ամիրաններուն, հայ մեծարաններուն, իշխանաւորներուն և այլ տիրադոսաւորներուն ծագումն և շարունակութիւնը կը հասնի՝ իրենց ժամանակակից նշանաւոր պատրիարքներոյն ու կցորդ գրագէտներոյն և դպիրներով՝ այս տարտամ գիծերուն հետ մինչև 1800 թուականը, մինչ անոնք կըսկսին առնել աւելի՛ գործօն աւելի՛ վառ դիրք մը անձնական ու մերթ հանրական կամ, որպէս զի այսպէս մտածենք ու քսենք, ժամանակի մերձաւորութամբ կերեւին այնպէս:

Իրենց ծագումնն ատեն ու գաւառներու և լեռնային նահանգներու մէջ՝ ընդարձակ սահմաններու տիրապետող և հրամայետող՝ իրենց տակաւ բազմանալուն ժամանակով մեղի մօտենալուն և քաղաքներու՝ մանաւանդ մայրաքաղաքներու՝ մէջ բնակելուն և գործելուն համեմատութեամբ տակաւ սահմանափակուելով, իրենց գործունէութիւններն հետզհետէ կամփոփուին արուարձաններու և թաղերու մէջ, և իրենց գիտութիւնն՝ աւելի ճարտարարուեստական ու սեղանաւորական անհետային գործերու մէջ կը գտնէ լայն ճարակ մը անմրցակից, որով կը տիրանան մեծ հարստութեանց և առանին հեղինակութեանց:

18րդ դարին անձկացեալ այս ճարպիկ ամիրաներն՝ ընդհանրապէս աւանդական պարզ մարդիկ եղած ըլլալ կը թուին. աւանդութիւնն յիշատակարաններն ու տոհմային նահապետական հանգամանքն ալ կը ցուցնեն՝ որ անոնց մէջ պակաս չեն եղեր դպրոցատէր ընտանեսէր ու եկեղե-

ցատէր մարդիկ: Անոնք ընդհանրապէս մահիշեալի⁽¹⁾ են եղեր, ընդհանրապէս երկիւզած (pieux) ու բարեհոգի, թէպէտ մեծ մասով անուսումն թէպէտ ըստ ամենայնի անոճ ալ, այլ գործնապէս խորագէտ ու ոճո՛յն իրենց գործին և տունին՝ շրջավայրին թոյլատրած ու ներգործած արեւելեան համեմատութեամբը:

Իրենց բնակութեան տեղերն են եղեր առ հասարակ՝ Ակիւտար, Օրթագիւղ, Հասգիւղ, մերթ Սամաթիա, Գուրուչէմէ, Պալաթ, Գում գարու և Եէնի գարու և ուր որ նշանաւոր եկեղեցի մը կամ հայ բազմութիւն մը կը գտնուէր: Իսկ դաւառներու մէջ՝ վանքերու և Առաջնորդարաններու մօտերն ու այգեւէտ արուարձանները: Իրենց կենցաղը մայրաքաղաքին մէջ՝ ըլլալով հանդերձ տանուտիրական ու այլամերժ՝ զերծ չէ մնացած ստոր կիրքերէ, արծաթսիրութենէ, փառամոլութենէ ու նախանձընդդէմ հակառակութիւններէ, որ պատճառ եղած են իրենց բարեկեցիկ թշուառութեանց: Փամանակակից հայր Ղուկաս Ինճիճեան՝ Կ. Պոլսեցի Մխիթարեանը՝ քաջ կը նկարագրէ այս կենցաղը քանի մը բանաստեղծական սրտառուչ տուներով. —

Ունին հեշտալի՝ տեղիս ի զընին .
Ընդ նեղուց ծովուն՝ յամարանոցին ,
Այլ չունին ինչ սիրտ՝ կեանք բանականին
Ըզմայլել նովաւ՝ ի գործ Արարչին :

Առաքինութիւնք՝ բարոյականին ,
Կրթողականօք՝ ըզկիրս սանձողին ,
Օտար են սոցա՝ յանօգտից սակին ,
Որք են դեզք կենաց՝ երկարօղք նըմին :

(1) Աւելի՛ ամիրաներուն և մեծասուններուն յազկացած անուն մը բարեպաշտական:

Ստանան գոհար՝ առ ի զարդ անձին ,
Որ յինքեան է զարդ՝ ո՛չ ըստացողին ,
Մերժեն ըզբարին՝ բարոյականին ,
Որ մարդոյն է զարդ՝ Լ՛ոչ ինքըն ինքնին ,
Ոմանց լիացեալք՝ և յաւելորդին ,
Ողբան չունել ինչ՝ ըզկարեւորին ,
Քաղց ծարաւ ընչից՝ նախանձ ընկերին ,
Ոչինչ ցուցանէ՝ զոր յանձին ունին :
Այլ արդեամբք ողբան՝ չունել զոր ունին ,
Զի ո՛չ վայելեն՝ զինչարն զոր ունին ,
Ունին իղձ անյագ՝ փոխանակ ընչին ,
Ոչ իշխեն ընչին՝ այլ յըղձից իշխին

Անցի նաւակաւ ընդ ծով քաղաքին ,
Տեսի և ըզտունս՝ զամարանոցին ,
Շրքեղ գեղեցիկ՝ ձգեալ առ ծովին ,
Մինչ երանի տաս՝ բրնակչաց նոցին :
Մըտի չըջեցայ՝ մի մի ըստ կարգին ,
Քննեցի ըզկայս՝ ներքին վիճակին ,
Մըտի անտրրտում՝ առանց ինչ վշտին ,
Ելի դառնացեալ՝ տխուր վշտազին :
Զի զազէտս լուայ՝ ինձ կսկրծելին ,
Յիւրաքանչիւրոց՝ զ՛նեծումն ցաւազին ,
Կարծէի զբօնուլ ի խօսից նոցին ,
Լըցայ թախտութեամբ՝ և ես ընդ նոսին :
Ոմըն վշտանայր՝ յախտից ընկերին ,
Այլ ոմն ի հաղբից՝ հակառակորդին ,
Ոմըն ի չարեաց իւր պարտապանին ,
Այլ ոմն ի վարձուց՝ իւր տան վարձկանին :
Թողուն զանտութիւն՝ իւրեանց պարտիցին ,
Մատչին գանդատել՝ առ անձուկ սրտին ,

Ազգական բանայ՝ զախտ ազգականին,
Բարեկամ ըզդաւ՝ իւր բարեկամին :
Այրն ըզհեզգութիւն՝ զանգործ կողակցին,
Կինն ըզխատութիւն՝ դժնեայ լըծակցին,
Եզբայր ըզզբրկումն՝ զեղբօր մըտերմին,
Մեծըն ըզփոքուն՝ փոքրըն ըզմեծին :⁽¹⁾

Այո՛, և այսպէս է միշտ հարուստ ու քաղաքա-
բընակ կեանքի մէջ մանաւանդ :

*
* *

Այսպէս՝ ուրեմն գալով 19րդ դարին սկիզբը՝ արնետապետ, ճարտարապետ, մանաւանդ սեղանաւոր ամիրաներուն՝ ընդհանրապէս ակնցի, կը տեսնենք որ անոնք՝ ամփոփելով իրենց տարտամ սահմանները՝ կտանեն որոշ ուղղութիւն մը անհատական և կը շողան յատուկ փայլով՝ մանաւանդ յիշատակի արժանի Վեհ. Սուլթան Մահմուտ Բ. ի և Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտի օրերուն : Այդ օրերուն տո՛մասէր ամիրաներն են՝ որ (1829ին), առաջնորդութեամբ Կ. Պոլիսի Երուսաղէմական փոխանորդ Զաքարիա Եպիսկոպոսի, նորողեցին Ս. գերեզմանին վրայ Հայոց պատարագելուն հնագոյն հրովարտակն ալ, ըստ որում սկսան պատարագել հոն՝ նախ Յոյնք ապա Հայք և ապա Լատինք : Այս հրովարտակը գործադրութեան սկսաւ յերուսաղէմ Ադրիանուպոլսեցի Պողոս Գրիգորեան արքեպիսկոպոսին ձեռքով⁽²⁾ :

(1) Ամաթանոց Բիւզանդեան, սյագր. ի Վենեսիկ 1794. (հէջ 241—245) :

(2) 19րդ դարի ամենէն մեծագործ իմաստուն և մասեկագիր Պատրիարք Կ. Պոլիսի, որ հեղինակած է Քանգարան խրատու, Զանազանութիւն հինգ դարուց և Համառօտ Պատմութիւն Ս. Գրոց գործերը :

Տասն և իններորդ դարի 4. Պոլիսի այս ամիրանները՝ կրակահերձ և՛ Տէրութեան պաշտօնեաներու և բղէաշխններու հետ ընել մեծ գործառնութիւններ՝ հաղորդակցութեանց, զիւտերու, շոգենաւներու, տպագրութեանց և տակաւ յառաջդիմող ուրիշ դիւրութեանց չափով՝ տակաւ կրկնապատկելով իրենց գիտութիւնն ազդեցութիւնն և հարստութիւնը՝ տանուտիրական իրենց սահմանափակ շրջանակին մէջ։ Իրենց որդիներուն ձեռքով կրակի արեւմրտեան ոճերու և գաղափարներու նախնական աղօտ շփում մը, և արեւմտեանէ ու արեւելեանէ խառնուածոյ միջին կենցաղ մը, նմանագործ արուեստգիտութիւն մը, կառավարելու և կառավարուելու տարազ մը ամփոփ՝ հետզհետէ մարմին կառնէ, որուն բաւական ալ կրնդդիմանան հիներէն մնացած մեծատուններն և որուն մեծապէս կը նպաստեն Պոլիսի լուսաւորչական և հոռմէական Հայերուն նոր երեւելիներն և վենետիկի պոլսեցի կիրթ Մխիթարեաններն ու անոնց աշակերանները։ Ասոնցմէ բաւական դատ՝ Զատեանց-Տատեանց տունը՝ կը ճանչցուի իրրեւ վառօղապետ Տէրութեան իր հնարագիտութեամբն և ճարպիկութեամբ, ու Պալեանց տունն՝ իրրեւ ճարտարապետ արքունի իր հաւատարիմ գործառնութիւններովն և ճարտարութիւններով, առաջինն՝ հարիւր քառասունի մօտ, իսկ երկրորդն՝ երկու հարիւրէ աւելի տարուան⁽¹⁾ ընտանիքներ։ Պալեանց յայնժամու

(1) Պալեանց նախահաւն և Դարամանի Պեչկն գիւղէն Պալի Խաչքա 1682ին 4. Պոլիս եկած, որ ապա Բարեդէն սերունդ ունեցած և Դրիգոր Խաչքան. ինք վախճանած և 1725ին. իր որդին և Միհաս Խաչքա՝ վախճանեալ 1730ին, որ Պոլիս գալով միայն 5 քառի արժունի ճարտարապետութիւն ըրած և. ասոր որդին Մալար Խաչքա՝ գործունեայ և ևս նմարեղ, որ՝ ի մէջ այլոց՝ շինած և Նուրի Օսմանիյէ մզկիթը. իր որդին և Պապա Դրիգոր Խաչքան՝ ծնեալ ի Բարեդէ:

ներկայացուցիչն էր Գրիգոր ամիրայ Պալեան, բարի՛ ու պապա՛ մարդը, որ 1790էն մինչև 1832 փոյլող ու փայլեցունող մեծ ամիրաներէն մին եղած է. ինք՝ իր նահապետական մարդասիրութեամբն և ուսումնասէր հնարագիտութեամբ՝ սիրելի եղած էր թէ՛ Օսմանեան Վեհապետին թէ՛ աւագանիին թէ՛ հայ Պատրիարքներուն և թէ՛ մեծերուն և ժողովուրդին: Իր ճարտարպետական ձեռնկալուն եղած է իր հայրը Մակար Խալփան, ինչպէս ինք ալ շատերուն՝ մանաւանդ Ղազէզ Յարութիւն ամիրային՝ ձեռքէն բռնած է, ու ներկայացուցած է զայն Օսմանեան Վեհապետին՝ իրր հանձարեղ ու հաւատարիմ խորհրդական, երբ Սուլթան Մահմուտ կայսրն ի խնդիր էր այդպիսի անձի մը: Իբր արքունի ճարտարպետ՝ մե՛ծ էր Գրիգոր Խալփայի անունն և գործն Օսմանեան մայրաքաղաքին մէջ, և իր գործապետներն երկրորդականներն ու գործաւորները լէզէ՛ո՛ն մը կը կազմէին, որոնց կը կենցաղակցէր ու կը մարդասիրէր ալ մտերմաբար՝ պահելով հանդերձ իր ծանր շուքն և հեղինակութիւնը:

Իր տունն ալ՝ հինաւուրց զուարթ հիւրասիրութեամբ կը պատուուէին միշտ ժամանակին կարեւոր մարդիկը՝ գրագէտ, սշխարհական, եկեղեցական ու արուեստագէտ, ինչպէս այս բացսիրտ հիւրասիրութիւնն ապացոյց տուաւ նաև ճարտարպետականներուն համարակալ գրապետն (Օտեան) Եազըճի Պօղոս աղայ Պետրոսեան⁽¹⁾:

(1) Եազըճի Պօղոս աղայ՝ ի մէջ այլ բարեգործութեանց՝ կտակած ալ է Կ. Պոլիս Դարակոմիտիկի եկեղեցիին 75,500 դրշ.:

Թ.

Գրիգոր ամիրայ Պալեանի շինուածապետութեամբ կառուցուած են՝ Սէրայ-Պուրնույի հին պալատը⁽¹⁾, Տու-մապահճէի ու Զրազանի այժմու պալատներուն նախորդ փայտակերտ պալատները, Պէյլէրպէյի հին փայտակերտ պալատը, Պէլկրատի պեկեքը, նաև Սէյիմիյէ ընդարձակ դօրանոցն ի Հայտար Փաշայ և ուրիշ դօրանոցներ ու հովանոցներ, որոնց մէկ քանին կը կենան տակաւին, Պոլիսի հին Եանկըն Քէօշքիւն ու Թօփհանէյի բարձրագմբէթ մզկիթը⁽²⁾: Ինք է պայծառացունողը Պալեանց անունին և անոնց մէջ եղած է առաջին խոհեմ ամիրան, որ ձայն ունեցած է պատրիարքական ու սոհմային դօրծերու ալ մէջ, ուր ժրացած է ջերմեռանդութեամբ և պաշտպան կեցած է խեղճերու, անկեալներու, վանքերու և վարդապետներու: Անգամ մըն ալ սխալ հասկըցողութեամբ մը տարագիր ալ գնացած է Տարսոն և Կեսարիա, ու տեղէն ընտիր ապուխտի մը շնորհիւ, զոր Ղազէզ Յարութիւն ընծայած էր բարեխօսարար վեհ. Սուլթանին՝ ի դիմաց Պալեան Գրիգորի, աղատած է քիչ ատենէն ու Կ. Պոլիս դարձած է Եղիա Եպիսկոպոսի հետ:

(1) Որ այրեցաւ 19րդ դարու կիսին առջին:

(2) Թուի Նուրի-Օսմանիյէ մզկիթն ու Թօփհանէյի այս մըզկիթը շինած են յաջառուութեամբ մը Հայ ճարտարապետներ, որ միայն պաշտի կառուցողներ էին. իսկ մզկիթներն՝ որ կերելին Կ. Պոլիսի բարձրագոյն և զեղեցկագոյն կեսերուն վրայ՝ կառուցուած են մեծ մասով յոյն ճարտարապետներու մեղմով, ինչպէս կը գրէ Կոստանդիոս Արհուն յոյն պատրիարք Կ. Պոլիսի 1834ին (Ստորագրութիւն Հին ու Նոր Կ. Պոլիսի, մասն Բ. Կ. Բ.):

Գրիգոր ամիրան հաստատած էր իր բնակութիւնն Սկիւտար Պիւլպիւլ Տէրէյի բլուրին առաջին սարահարթին վրայ, ուր կերեւի այժմիկ եռադարեան կիսաւեր սօսին իր պարտիզին անկիւնը: Պատճառով մը դող ելնելով՝ կաթուածահար վախճանած է հոն 1832ին:

Բարեհամբոյր և ազքատասէր ալ մարդ՝ շատ կիրակէ իր Պաղլար Պաչըյի ընդարձակ այգիին մէջ ինջոյք կուտայ եղեր իր ստորակարգ բանւորներուն և անոնց պետերուն՝ ճաշակցութեամբ և զուարթ բարեկամութեամբ տիտիելով անոնք: Ժամանակին ճօխ և ջոջ Հալերը՝ նոյն ինք Ղազէզ անգամ՝ շատ բան կը պարտին Պալեան Գրիգորի, 19րդ դարի սկիզբի առաջին ամիրային: Ինք հիմը դրած էր այն համբաւին ու հարուստ ազնուականութեան, որ ապա պարծանքն եղան իր որդիներուն և ճարտարարուեստ թուներուն: Իր մեծ թոռը՝ Նիկողոս պէյ Պալեան՝ մանրանկար վերկենցադուժ մըն է եղեր իր բարքին ու բնաւորութեան, կրսն, վերկենցադուժ մը՝ վարդի նման վարդորայնի մը չափ նշողելով⁽¹⁾ . . . : Ծնած էր 1825ին. շինած է Տոլմա-Պահճէյի սէրային հոյակապ տիւան-խանէն, քանի մը գեղեցիկ ֆօշիեր, Պոլիսի նոր քարուկիր Եանկըն-քէօշկին ու լայնատարր Ղալսթա-Սէրային:

Գրիգոր ամիրայի անմիջապէս յաջորդած է՝ իր դեռ շատ երիտասարդ որդին Կարապետ Խալֆայ, երկիւզած ամիրան, որուն ակնարկեցինք ալ գօրծին սկիզբը:

Այս միջոցներուն կը պայծառանար իրրեւ ուսուցչապետ ու մատենագիր ի Փարիզ Շահան-ջրպետ եղեւ սիւսցին, որ կը դաստիսօսէր հայերէն լեզուն և մատենագրութիւնը Բոլէժ տը Ծրանսի մէջ: Ինքն էր սերեալ

(¹) Յողմերգն Վերմական Մալեայ քրահասցի ֆերդոյին:

Ծնորդայինն եղբայր Շահան իշխանէն ու ծնած էր 1772
Դեկտ. 16ին՝ պարոն Սարգիս Շահանէն եւ Մարիամ
Ալաբեանէն, ու մանկութենէն աշակերտած էր Բաղիշե-
ցի Աւգալեան Պողոս վարդապետին, որ առաջնորդ էր
Եղեօսոյի ու վերջին շառաւիղ Ամրտուլու վանքին վար-
դապետներուն. 1789ին անցաւ իր ծնողաց հետ Իտալիա
և ապա անցաւ Փլորենտիա Լիւթորնոյ և Ճինուա՝ անդա-
դար պարապելով լեզուագիտութեան բանասիրութեան
և օրինագիտութեան. ապա տեսութիւն մը ունեցաւ Նա-
բոլէոն զօրավարին և ուրիշ Թրանսալպի երևելի պաշտօ-
նատարներու հետ, որոնցմէ հրաւիրուեցաւ ի Թրանսա և
գրատունին մէջ դրուեցաւ պաշտօնի մը. ապա Փարիզի
Արեւելեան լեզուներու վարժարանին մէջ դասասաց և-
ղաւ մինչեւ 1826: Ապա հրաժարեցաւ և քանի մը տա-
րի ալ դասախօսեց Թիֆլիզ Ներսէսեան վարժարանին
մէջ: Հուսկ ուրեմն՝ մասնաւոր թոշակով Ռուսիայի Տէ-
րութեան՝ հայ և Ֆրանսական լեզուներու դասարան մը
բացաւ Թիֆլիզի մէջ, ուր և վախճանեցաւ 1838ին: Իր
գործերն ևս՝ Հեսագոսութիւնք Ասիայի հին պատմութեան
վրայ, Մատթէոս երիցուն Ռաչակրաց պատմութեան քաղ-
ուածք. Տուցակ ընդհանուր Փոքր-Ասիայի 1813. Յիշատա-
կարանք հին Հայոց վրայ. Կացութիւն այժմեան քաղաք-
ութեան Պարսից 1816. Յիշատակարանք ծագման եւ յա-
նադիմութեան Թուրքաց:

••

19րդ դարին մէջ կրտսէսն անուն հանել ի Ռուսահայս՝
Թամամբշեանք, Արծրունեանք, Խէրորդիներեանք, Թայիր-
եանք, Մանդինեանք⁽¹⁾, բժիշկ Ռոմանոս Նատիրեան, Մոս-

(1) ճանապարհորդութիւն Սարգսի Սանահնեցոյ Զայազեանց
Ման Բ. (էջք 56—75)

կուացի աղայ Յովհաննան, Նախիջևանցի Յ. Ղալիպեան⁽¹⁾, որ հիննեց Ղալիպեան ուսումնարանն ի Ռուսահայս՝ մասամբ՝ ներսէս կաթողիկոսի իրեն աւանդած և մասամբ իր իսկ դրամէն, Լորիս Մէլիքով, Ագուլեցի Պօղոս Ջլովխանեան Աղամպեանց, բարերարներ կը յիշուին նաև Մարիեամ կազազկեանց ու Պապովեան, մանաւանդ վերջերս Մանդաշեան մեծ վաճառականը, որ մեծ նպաստներ տրուաւ տոճալին հաստատութեանց ու շինեց Փարիզի Հայոց Եկեղեցին, իր հարստութիւնը կը կարծուի 5,000,000 ռսկիի չափ: Անգղիայի մէջ պանքայի մը հաստատութեան ալ մեծարածին նախաձեռնարկն ըլլալու վրայ է (1906):

1730ի ատեններն ալ անուանի եղած է Ռուսահայոց մէջ Աշխարան աղայ Բէհբուդեանց, նոյնպէս իր որդին Քալանդար աղայ: Ռուսահայ վաճառական Շամախեցի Ենովք Բուդաղեան, վախճանեալ 1900 Ապրիլ 12ին Օսէտայի մէջ, նշանաւոր է իր առատութեամբը. մեծ մասով Հայերու նուիրած և կտակած նպաստներուն դումարն է 82000 օսմ. ռսկի: Աստրախանի մէջ ալ երեւելի են նշանաւոր վաճառական աղայ Գանիէլ Սարգըսեան, որուն հարստութիւնը կը հասնէր եօթն միլիոնի (հաւանաբար՝ ռուսկի): Ասոր որդիներն ալ Գրիգոր և Մկրտիչ՝ նշանաւոր եղան իրենց հարստութեամբն ու բարեգործութիւններով: Նոյն քաղաքէն անուանի էին նաև Գարբիէլ Աղաջանեանց և Ջանոմ Ստեփաննեանց⁽²⁾: Վերջերք կը յիշուին նաև Յովսէփ Էֆէնտիւսեանց, որ կտակեց 60000 ռուսկի Թիֆլիսի Դերսէսեան վարժարանին, և Տիկին

(1) Որուն ծախսով սցուած են, ի մէջ այլոց, Յովհ. Տերոյնեցի երեք հասոր Իրաւախոհները:

(2) Ճանապարհորդութիւն Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց. Մասն Բ. (հէ 409):

կատարինէ Լազարեանց, որ նուիրած է 70000 ռուպլի Լազարեան ճեմարանին և Բեդրսպուրկի ու Մոսկուայի հայ եկեղեցիներուն :

Եւ որպէսզի փակագծօրէն յիշած ըլլանք մաս մը վերջին դարի դրագէտ ու մեծատուն Ռուսահայերէն՝ որչափ կրրցած ենք ձեռք ձգել վաւերաբար ու հաստատուն անունով ազնուականութեանցն՝ կարճանագրենք շարունակաբար հոս 1820էն 60 Ռուսահայերուն ծանօթ երեւելեաց տխրոսներն ու դործերն ալ, վերոյիշեալ աղայ Գէորգ Մանդլինեանք՝ Թայիրեանց և Խէրոզլինեանց հետ՝ Տփղիսի մեծ ուսումնարանին հոգարարձուներն էին և վերակացու ալ եղան՝ երեքը միտասին՝ Թէլէթի հոյակապ վանքին նորոգ շինութեանը⁽¹⁾ : Աղէքսանդր Դազարեան Թայիրեանց՝ աստիճանաւոր և ասպիտ Ռուսաց կայսրութեան, որ ի մէջ այլ բարերարութեանց՝ տպագրել տուած է Զալպեանց Սարգիս արքեպիսկոպոսի ճանապարհորդութիւնը : Թայիրեանք՝ բնավայրէն հատուածեալ նշանաւոր ազգատոհմ մըն էին և վերակացու մեծն Զաբարիայի տան . առաջին վերակացուին անունն էր՝ Սարգիս, անոր որդիին անունը՝ Քուրդ, անոր որդիինը՝ Վաչէ, որուն երկու որդիներուն անուններն էին Հասան և Թաշիր՝ նախածնողք Հասանեանց ու Թայիրեանց : Այս երկեակ սերունդք՝ ունէին հիւսիւսային դաւառներու մէջ, հին ատենները, առաջնութեան պատիւն՝ ի շուք իրենց հինաւուրց տոհմին :

••

1840ին կը յիշուի նաև ի Ռուսահայս Գէորգ Արծրունի, որ նուիրած է տպարան մը Տփիսիսի Նէրսէսեան

(1) Ճանապարհորդութիւն Սարգսի Սանահնեցոյ Զալպեանց, Մասն Բ. (կշխ 74—75 եւ 361):

վարժարանին : 1800-1860ին կը յիշուին՝ դարձեալ հոն՝ Արղութեանց տոհմէն կնիազ Վասիլ Նիկողոս Արղութեանց, կնիազ Աղեքսանդր Նիկողոս Արղութեանց, կնիազ Շահրաման Արղութեանց, կնիազ Յովհան Արղութեանց, կնիազ Միքայէլ Արղութեանց, կնիազ Վասիլ Ռոմանուսեան Արղութեանց. Գրասէր Աղաֆոն աղայ Դաւթեան Աքիմեանց, և Շատինեանց ազգատոհմն ի Տփլիսիս, պաշտօնեայ բժշկապետ Յարութիւն Յովհաննէսեան, Յարութիւն Այվազեանց, Յովհաննէս Ղայթմազեան, Միքայէլ Տէր Ստեփանեան, Հեճուք Հեճուքեանց, Գարրիէլ Մելգուսեանց և այլն :

Ամիրսապատիւ գրազէտ մատենագիր մըն էր նաև Ռուսահայոց մէջ Մկրտիչ Էմինեան՝ հեղինակ ուստերէն ներհուն գործերու, որուն շքեղապատկեր վարքը գրած է ոճով՝ աղնիւ Շահազիզեան Լուսնայ հանդէսին մէջ և որուն Հայրախան հեքսնոտոքեան վրայ հմապլից ձեռնարկն աշխարհաբառի թարգմանած է Յովհ. Տէրոյեանց՝ լոյս տեսած Արմաշի վանքին հին տպարանէն : Իր կարգէն կը համարուի նաև Վսեմ. Կարապետ Եզեանց ալ՝ իսրախան զադնի խորհրդախան Ռուսիոյ և մագիստրոս արեւելեան լեզուներու, թարգմտէր ու բանասէր անձնաւորութիւն մը, որ առիթ եղաւ Մ. Սանասարեանց և Յովսէփ Իզմիրեանց գեղեցիկ կտակներուն : Վասիճանեցաւ 1905ին և յիշատակուեցաւ շատ հեռաւոր տեղուանք և կեղեցական մեծ սգահանդէսներով : Կ. Եզեանցի հրատարակած գործերն են .—


1. Հին կեանք (Ռուսերէն) :
2. Արդի հայագիտութեան վիճակը :
3. Կրօնական միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռմայ (գրաբառ) :
4. Ռուս տէրութեան յարաբերութիւնները (Ռուսերէն ստուար հատոր) :

5. Էջմիածինի կաթողիկոսներու յարաբերութիւնները Ռուս պետութեան հետ (Ռուսերէն) :

6. Ղեւոնդ, Ասողիկ՝ ներհուն ծանօթութիւններով :

Աստրախանէն կա՛յ նաև պարոն Աղապապեանց, որ կատուցած էր դպրոց մըն ալ և իր ծախքովը կուսանէին հոն 12 աշակերտ՝ վարժապետութեամբ պոլսեցի Սերովբէ Պատկանեանի : Հուշակուած է Զուղայեցի աղայ Յօնանջան մըն ալ : Այս միջոցին փայլեցաւ նաև ի Հնդիկս պարոն Աբրահամ Աղանուր՝ փեսայ Սամուէլ Մուրատեանց :

Ռուսահայոց մեծատունները հուցած են միշտ աւելի կորովի ու ինքնատիպ նկարագիր մը լսորոյական ու իմացական, ինչպէս իրենց մատենագիրներն ալ : Անոնց տո՛մատիրութիւնն ու եկեղեցատիրութիւնն եղած է աւելի վառ ու ջերմ՝ մանաւանդ կտակարարութեան կողմէն : Անոնք աւելի սկզբունքի ու գաղափարականի մարդիկ եղած են, թէպէտ և աւելի ալ հաստատակամ ու անդրդուելի իրենց ուղիղի՛ն ալ սխալի՛ն ալ վերաբերումով : Հիւսիսի բարքերն ու կլիման ուրիշ կերպ չէին կրնար ներգործել անոնց վրայ :



Ժ.

Գոցելով այս փակագիրն հիւսիսահայեաց ու դարձունելով մեր տեսութիւնները նորէն ի Թուրքահայս՝ կը դիտենք 19րդ դարի առաջին քառորդին՝ որ ժամանակակից հռոմէական Հայերուն մեծատուններէն հինգ վեց ընտանիք ու կանուանին մերթ միրբայ և ընդհանրապէս հօճայ կամ չէլէպի՝ իրենց բարոյական հեղինակութեան և նիւթական ու իմացական հարստութեան ազդեցութեամբ : Ասոնք ալ՝ տակաւ լուսաւորուելով և գաղափարապէս թօթափելով վաղեմի անձուկ ըմբռումները՝ կիրականացունեն լուսաւորչական Հայերու կցորդ գործակցութեան մը միտումները՝ թէ՛ տոհմապէս թէ՛ եկեղեցապէս, մանաւանդ Ադրիանուպոլսեցի Գրիգորեան Պօղոս Պատրիարքի ջանքով, ինչպէս ցայնվայր կցորդ կերթային իրարու շատ ուրեք աշխարհային գործառնութեանց մէջ՝ թէ՛ իրրեւ զովօղ թէ՛ իբր արհեստակից և թէ՛ իրրեւ վարիչ փողերանոցին :

Հռոմէական Հայերու այս մեծատուններէն են, օրինակի համար, Գրիգոր Չէլէպի Տիւղեան⁽¹⁾, Կարնեցի Մատթէոս Չէլէպի մահանսի Աստուածատուրեան, Թընկըր զատէ Յակօր, Տիւղ Յակօր Չէլէպի՝ զրասէր ու

(1) Տիւղեաններն՝ իբր հին սկիզբապէս ու վաղեմի վարիչներ Փողեանոցին՝ եղած են նախ Դազդզ Յարութիւն աւիրայի պաշտպան վարպետները (patron):

հանճարեղ ազնուական մը⁽¹⁾, Վենետիկի Մխիթարեանց մարդը, որ սպազբել տուած է Հ. Արսէն, Կ. Բագրատունիի քանի մը զլխաւոր գործերը «Մեկնասեան հովանեաւն իր մեծ հոլաթիւերուն⁽²⁾»։ Մկրտիչ Չէլչպի, Գրչճը զատէ Անտօն և Չէմպէրէկճի օղլու :

Ասոնք են սր վերոյիշեալ Պօղոս Պատրիարքի գումարած միաւորչական ժողովին ներկայ գանուած են՝ իրենց քանի մը վարդապետներուն հետ, հռոմէական Հայերու կողմէն առ հասարակ. իսկ Լուսաւորչականներու կողմէն իբրև պատուիրակ ներկայ եղած են զլխաւորապէս՝ Ազնաւորեան Կարապետ ամիրայ, Յովհաննէս ամիրայ Արիստակէսեան, մահտեսի Յովհաննէս Չէլչպի, մահտեսի Յակոբ ամիրայ Լաթիֆեան, Գրիգոր ամիրայ Պալեան, Գաապար ամիրայ Չարաղեան, Գրիգոր ամիրայ Սազայեան, Մկրտիչ ամիրայ Արիիարեան, Ազայ Պօղոս Մարգարեան, Ճանիկ ամիրայ, Մահտեսի Պօղոս Կէլիկէլեան, Յակոբ Մանանեան, Մահտեսի Աստուածատուր

(1) Թուի ինք-Յակոբ Տիգեանի քարգանուքիւնն և հետեւեալ անշաղքեան սաղն ալ անօխ. —

Խ Ե Չ Ե Փ Ա Ռ

Եկրն է հաս, սսկ, ազգդ այդ,
 Ոսկրուս, սաշաթիկունսն, կորաքազուկսն
 Շրակնեա՛յն, մկրսսաքերս՛նն, իւնցեւո՛րքն,
 Կրունկիսիսաղս՛ցն, շայնսխանս՛կն և ծանածոսար-
 րո՛ւնսն
 Չեռնաքս՛ցն, ողնակեա՛յն, շանցսնայեա՛ցն,
 Ուրոսանի՛ն, երկզրշիսանի՛ն, անձեռնաւն՛րձն :

Ի Գարսամկնամարտուրեանն Հոմերոսի:

(2) Յառաջարանական ուղերձ առ Յակոբ Տիգ, Հ. Ա. Կ. Բագրատունիի՝ Մշակական Կ. իրգիլեայ:

Ղօնչէկիւբեան, Յարութիւն աղայ նորատունկեան, Մկրտիչ Աշնան, Մահտեսի Յարութիւն Բինկեանցի, Մարտիրոս Սագայեան, Բարունակ ամիրայ, Շնորհքեան Մանուէլ, Մանուէլ աղայ Բէրէատէճի (հայրն Յակոբիկ աղայ Մանուէլեանի՝ որ նախկին անօրէնն էր շեմարանին), Մինաս Զարպճանէցի, Յարութիւն Չէլէպի Կիւլլապեան, Անդրէաս Չէլէպի և ուրիշ բազմաթիւ արհեստապետներ :

Գործիս չափը շներեր զատ զատ տեղեկագրել յիշեալ ամիրաներուն և ամիրապետներուն վրայ, մանաւանդ որ լիակատար տեղեկութիւններ կը պակսին մեզի յախտնապէս, կամ զի անոնց սերունդներուն պատմածներն ալ՝ չենք կրնար մեծ մասով վաւերական համարել պատմական արձանագրութեան մը չափ : Ուստի այս կարգով կը շատանանք շեշտելով միայն հոս՝ թէ ժամանակին աղղո՛յ ձայն և հնչո՛ւն գրպան ունեցողներն ասո՛նք են ընդհանրապէս, որոնց մէջ կան մինչև չորս հարիւր տարուան գերդաստաններ, օրինակի համար Կէլկէլեաններն ու Սագայեանները :

19րդ դարի սկիզբէն մինչև 1870 անուն հանած են նաև Թուրքահայոց մէջ կարգ մը նշանաւոր հայ բժիշկներ, որոնց շատին կենսագծութիւնն եղած է 1895-1905 ի Վիեննական Մխիթարեանց Հանդէս-Ամսօրեային մէջ :

••

Միաւորչական այդ երեք խումբէն քիչ մը ետքը կը հանին՝ իրրև վերջին խումբն ամիրաներուն՝ պոլսեցի Ղազէզ Յարութիւն հոչակաւոր ամիրան⁽¹⁾, Պալեան Կա-

(1) Ամիրաները մեծ մասով գաւառացի կամ գաւառացիներէ սերունդ էին : Ղազէզ Յարութիւն Կ. Պոլսեցիէն եւ Կ. Պոլսական մեծ շուկային մէջ եփած՝ ցոյց տուաւ գերադասպէս, թէ Պոլսեցիք

բապետ ամիրան, Տատեան Յովհաննէս ու Պօղոս պէյերը, Սէրվէրեան Յովհաննէս անդան կամ ամիրան; որ քարի ու փայտի վրայ քանդակելու եւրոպեան գեղարուեստը մտցուց Հայերուն մէջ ու գլխաւոր սատարողն եղաւ Նին ճեմարանին Սկիւտարի՝ մանաւանդ ի՛ր իսկ գրասեղն ի Նեճուկս Միսաք և Ճանիկ ամիրաններուն, որ՝ չգիտենք ի՞նչ պատճառով՝ ուխտած էին, կըսուի, սխտոի վերածել այդ հոգևտուն փարախը դպրութեանց: Նաև երկանեան ու Փիշմիշ ամիրաները՝ Ղազէղի հանրական գործակից, Յովհաննէս ամիրայ Ազնաւորեան, հաճի Մարտիրոս Պաղտատարեան, Մազսուտ Սարիմեան, Պաղտատար Գասպարեան, մահտեսի Յարութիւն Չէլէպի Կէլկէլեան, Չայեան Յովհաննէս աղայ որ ունեցած է աշխոյժ դեր մը տո՛մային գործերու մէջ և վախճանած 1863ին 87 տարեկան, Կարապետ աղայ Մանուէլեան՝ ծագումով Կեսարացի, որ 1830ին Բ. Դրան և Եպարքոս Բէրթէվ փաշային սեղանաւորութիւն է ըրած և Սկիւտարի Ճեմարանին բացումին ալ երկիցս ջանադիր եղած էր, ծնած 1800ին. Յովհաննէս Բինկեանեան. ասոնց մէկ քանին էին Նին փայտակերտ հիւանդանոցը շինողներէն ու վարողներէն⁽¹⁾. Միսաք ամիրայ և Մկրտիչ ամիրայ ձեզա-

ի՛նչպէս կըմբռնէին ամիրայութիւնն և ի՛նչպէս կը վարէին զայն: Աստ համար է՝ որ ճանիկ ամիրան, կըսեն, ժողովի մը մէջ յայտնարանէր է թէ «Շեհիր ուշադիյէն մարդ լեշլար կըսէին՝ ահա՛ մեկ մարդ մը կաւ որ . . . »: Եւ արդարեւ՝ Ղազէղ ամիրան, թպէս ինք ալ իր կարգին ի՛նչ շատ ըմբռնուած իր ժամանակին տգէտ թերութեանն ու սովորութիւններէն, գրեթէ բոլորովին անիրեց իր հարսութիւնն և հեղինակութիւնն հանրային բարեգործութեանց ու շինարարութեանց՝ մայրաքաղաքացիի վարպետ բարձրահայեցութեամբ:

(1) Տե՛ս Պատմութիւն Ազգային Հիւանդանոցին:

յիրցի⁽¹⁾ պաշտպանն Հաղիւղցիներուն և Շահնազարեան
Կարսպեա վարդապետին :

Տե՛ղն է հոս նաև յիշելու Պետրոս ամբայ Եռասուֆ-
եանը (ծն. 1780 Վախճ. 1846). Պօղոս Պէյ Եռասուֆ,
Աւաքել պէյ Նուպար՝ Եգիպտոս Մէհմէտ Ալի փաշայի
առեւտրական գործակատար ի Մարսիլիա և բաւական
ևտքը՝ Նուպարեան Մկրտիչ աղայի որդի Նուպար փա-
շա⁽²⁾, Թաղւոր փաշա, Բարթող փաշա, Զմիւռնացի յա-
ռաջամիտ ջոջերը, որ մեծ մասով եգիպտական վառ դօ-
տիին տակ շինեցին իրենց փառքն ու բազդն և կապեցին
իրենց աղամանդակուռ գօտին⁽³⁾: 1819-1820ին կը յիշ-
ուին ի Կ. Պոլիս Մանասեան Գրիգոր աղայ, որ էր Մու-
զաթա ւարափի, Ուզունեան Յովհաննէս ամիրայ, որ ա-
պա կրօնափոխ եղաւ և Յրուա Անտօն, որ վաճառականն
էր ներքինապետին :

Անա այս հանրագրի՞ծ տխրոտներով և գործերով կը
հասնի մինչև 1835 Թուրքահայերուն հօճայութիւնը,
ամիրայութիւնը, փաշայութիւնն և պէյութիւնը՝ մանա-
ւանդ ամիրայութիւնն իրրև շեշտեալ դրուատանուն մը

(¹) ձեզայիտցիին վրայ իիւ մը վարն աւելի ընդարձակ գրած
ենք :

(²) Նուպար փաշայ գրած ալ է իր հանձարավար կեանքին
պատմութիւնը: (Տե՛ս Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս. Հ.
Յակոբ Բօւսեան. Հասոր Ա. էջ 117): Ծնած էր 1825. Վախճանե-
ցաւ Փարիզ 1899ին :

(³) Զմիւռնիացիներուն մէջ երեւելի է նաև Գարն Մուրա-
ծարութիւնեանը, որ կը բնակէր Երուսաղէմի մէջ եւ բարեկամ
էր Ս. Յակոբեանց վանքին, միշտ օգնելով անոր իր խորհուրդովն
և ազդեցութեամբ, մանաւանդ երբ՝ շնորհիւ Երուսաղէմի Պօղոս
պէյի՝ Նարոյիի ու Սարսենիայի հիւպատոսութիւնն առնելով եւս
ձոխացաւ թէ՛ պատիւով թէ՛ հարսութեամբ: Ինք կտակած է Երու-
սաղէմի հայ վճենքին բաւական կայունած :

ժողովրդական՝ ի փոխարինութիւն կարգ մը անձնական կամ ժառանգական բարեմասնութեանց և արեւատուքեանց, աւագութեանց, բարեպաշտիկ դործերու, նուիրատուութեանց, եկեղեցաշինութեանց և դուռն ուրեք ալ գիտութեանց կամ հեղինակութեանց⁽¹⁾ :

Իրենց վրայ աւելի ներքողեալ ծանօթութիւններ առնել փափագողը՝ կըրնայ դիմել Բերայի, Օրթագիւղի, Սկիւտարի, Հասգիւղի ու Պալըզլըյի գերեզմանատանց հին տապանադիրներուն, որ մեծ մասով քերթող եզրիկեան Յովհաննէսի և Փէշարմալճեան Գրիգոր պատուելիի՝ 19րդ դարասկիզբին ամիրաներուն փիլիսոփային՝ գրիչներէն ելած են. անոնցմէ մաս մը օրինակուած ալ է Ղալաղիայի ազգային մատենադարանին մէջ՝ ժամանակակից ձեռագիրի մը վերջերը :

Իսկ մենք՝ ըստ մեր նախագիծին՝ քանի մը անաչառ պատճառախնդրութիւններով և հակիրճ քննութեամբ մը՝ փակե՛նք այս մասն ալ ամիրայական գրո՛հին :

* * *

Օսմանեան պետութեան և ընդարձակածաւալ երկիրներուն փառաօրութեանց մէջ փառաօրուած, հարըստացած, տաղաւարած և ընդարձակուած այս ամիրաներուն և մեծատուններուն մեծ մասը կը ընակէր Կ. Պոլիսի նախայիշեալ գեղադիտակ արուարձանները⁽²⁾ :

(1) Ամիրաներուն մէջ պակաս լին եղած գրասէր ու գրագէտ մարդիկ ալ, ու Վենեսիկի ևւ այս Վիեննայի Միխարեանց սուար ու գրարաւ գործերն անոնց մեծ մասին մասնապարտաներուն մէջ կը գտնուէին ու կը բանասիրուէին երկիւղածութեամբ :

(2) 2. Ղուկաս Ինճիճեան Կ. Պոլսեցի Միխարեանը կըսէ Գուրուչկչմէյի համար թէ թուրք հայ ևւ յոյն ազնուականներու

լայնատարած գետիններու վրայ⁽¹⁾, բազմադարկ ու բազմասրահ սպարանքներու մէջ՝ խոկուած, դիւթուած և ճածանչաւորուած առասպելական խնջոյքներով, շարփիներով, խաղարկութիւններով⁽²⁾ ու ֆէյճերով՝ քիչերն անոնցմէ կազմելով բացառութիւն մը անսագլուտ: Այդ բարերախտիկ ամիրաներն ունէին՝ ամէնահարկաւորապէս՝ իրենց հետեւորդ ազաները, ոմանք իրենց կանանին, իրենց մանկլաւիկները, իրենց մառանապետներն ու տակառապետները, իրենց ավեկնիներն ու հացկատակները, որոնք խողալից պատճառներ կըլլան մեծատուններուն արտառոց հաճոյասիրութեանց ու կարելի էր անկումներուն. անոնք՝ կարգ մը նախամասնութեանց հետ՝ ունէին իրենց արտակարգ մոլութիւններն իրենց նախապաշարունակներն ու յուսի կողմերը տկար, որ բուն պատճառներն ալ եզան իրենց կործանումին, և այդ կործանումին առաջին առնել հայրապէս՝ անկարացած է ժամանակին բարձրաստիճան կղերին մեծ մասին հաճոյակցութիւնը վրիպասիրութիւնն և փառասիրութիւնը:

Կային այդ մեծատուններուն մէջ՝ տգէտներ, ամբարտաւաններ, մոլեռանդներ, թուլաբարուններ ու մանաւանդ անխոհեմներ. կային՝ գիտակներ, համեստներ, ջերմեռանդներ, խտակրօններ ու խորագէտներ ալ: Եւ այդ երկու ներհակ տեսակները՝ նուազեցան կամ տեւե-

նախասիրած վայրն էր մինչեւ իր ասեւը, 1800—1820: Տե՛ս Ամսրանոց Բիւզանդեան (էջ 128): Մինչեւ 1835՝ Կ. Պոլիսի լուսագոյն և բարձրագոյն յունական վարժարանը Գուրուիշմէյի մէջ էր:

(1) Միայն Պաշեանք ու Տասեանք երեսուն հազար մը արսավար հող ունեին՝ հարեւանցի հաշիւով:

(2) Ասեմիս խաղարկութիւններն էին գլխաւորապէս՝ հէյալ, օֆսապագ և ֆէօշէկ:

ցին որոշեալ ասեն մը՝ իրենց այդ յաակութեանց նուազութեան կամ ամբութեան յոռութեան կամ լաւութեան համեմատ :

ժամանակակից Մխիթարեան քերթող մը՝ քաջ կը պատկերացունէ Վասիորի հայ մեծատուններուն կենցաղն հետեւեալ երանգաւառ ոտանաւորին մէջ .—

Կես ի Թրակեան Վասիորնի խրոնեալք ըսիւռ,
Կանգնեն պարս, կաւ յորս երբսն ի հեշ զեպիւռ:
Կես յակեզօժ արշաւսայր պարծին մակոյլ,
Կես բազմաւեայ ոսկեփարիւ շնուլ քակոյլ:
Այլ ի զընին գօտեարսից յարձակ հովիս,
Եւ կաւ ի սես մակսնախաղ՝ կան խիս առ խիս...:
Այժմու զըրոյց, — զի՛նչ այն խոսոյս — զի՛նչ այն ևարօ:
Հընկիսնաւորեմք սանուրագարիք՝ անիւ եւ կարօ:
Փողոց փոխան մըրցանակաց՝ սրիկց սարեակ,
Անցուցանեն անգործ զնցայն ողջոյն ցերեակ:
Իսկ ի գիշեր՝ ևարս եւ սարիկց միշտ խորասոյգ
Մաշկ զնցայն ի յապուքիսն ըզմիսս ի յոյգ:
Այլ ոք կընաս՝ մօտ առքագնեալ յիւր զեղանի,
Եւ սրեն արուր ի սեր պըջրոյ միշտ զեղանի.
Աջ իւր մակիսնց ցուպ ծրխաքեր շարժեալ ձօճի...:
Տեսցես ըսեպ եւ պըսակեալ զոսկեբարձ էշ,
Ի դանարձակ հանձարեղաց յուսոց ուղիշ.
Կաւ վերառեալ յասեղաց պար զերդ Անդրուէս⁽¹⁾,
Չորոյ երբեմն հար ըզմարմին ծով մէս ի մէս:
Թե կեանք ևնցաւ անցցեն այսպէս՝ կարծեն միշտ սօն,
Գրեալք զանձինս յամենայնի գոհիք օն եւ օն.

(1) Անդրուէտ՝ որ կը պարծեր քե շերայե՛ն աւելի զեղեցիկ եր, եւ կապուեցաւ ժայռի մը՝ ճարակ ըլլալու համար ծովային նհանգներու:

— Որպէս անգիտ փակեալ շերտով յանձուկ ի բոյն
Ա'նդ իւր օրոցք, ա'նդ և դարեւանք միշտ կենդանւոյն⁽¹⁾ :
(Քերթեաց 2. Մանուկ Զախարիան ի 1825)

ԺԱ.

Պատմարար ու աշխարհախօսարար ալ իմաստասիրելով ՚ին այս մեծատուններուն վրայ՝ կը դիտենք որ անոնք կատարած են, մեր Արեւելքի անցեալին մէջ, թէ՛ հանդէպ Տէրութեան թէ՛ հանդէպ հայ հասարակութեան, կարեւոր և հզօր դեր մը առանձինն՝ իրենց սեղական ու սահմանափակ իմացականին և ճարտարութեանց չափով : Անոնց հաւաքական գործունէութիւնը Կ. Պոլիսի մէջ, մանաւանդ իրրեւ սեղանաւոր և ոսկերիչ, նմանը չէ ունեցած ՚ինաւուրցն Բիւզանդիոնի խոշոր խաներուն և պտուտորը շուկաներուն մէջ :

Անհատապէս ալ՝ անոնցմէ ամէնէն հզօրներն հարուստներն և միանգամայն վազանցիկներն եղած են անոնք՝ որ ունեցած են կարի՛ դաւառական ծագում մը քաղաքային, ու եղած են աւելի՛ խորամանկներ քան իմաստուն խորագէտներ : Ընդհակառակն՝ անոնց ու պոլսեցի էսնափին մէջ՝ ամէնէն խելացիներն արդիւնաւորներն ու իրենց միջակ գիրքին չափով տոկուններն եղած են անոնք՝ որ թէ՛ խորագէտ թէ՛ արուեստագէտ թէ՛ գիւղակեաց կամ ՚ին մայրաքաղաքըցիներ էին՝ համեստ ու խելացի օգտուողներ բազդէն ու հարուստ պետութեան

⁽¹⁾ Տաղ Մխիթարեան վարդապետաց, սպագրեալ ի Վեմեսիկ, 1852. (հաս. Բ. էջ 43):

չորհներէն ու պաշտպանութիւններէն : Առաջինները՝ Փոքր-Ասիայի արմուղ խորերէն եկածն'ւն պէս, առանց իմաստասիրելու իրենց նոր և ազնուական շրջալայրը, առանց բանի տեղ դնելու աստիճանական յառաջդիմութեան գերազանց բարիքն՝ համեմատութեամբ յանկարծական յառաջդիմութեան, իրենց Կ. Պոլիսի մէջ տեղաւորուած ու լայնցած ազգականներուն կամ բարձր պաշտպաններու թեւարկութեամբ՝ իսկո՛յն վեր ոստնըլով, վե՛ր ու շա՛տ վեր, հոն՝ զլուսի բնական հետեւորդ պտոյաներովն հանդերձ՝ յաջողած ալ են տիրանալու, առ երանելի ժամանակ մի, մեծ փառքի իշխողութեան (autorité) և հարստութեան՝ ինչպէս նաև անոնց անկարծութեան լծորդ մեծ ակտերու և կիրքերու, որպէս զի նոյն թափով և նոյն համեմատութեամբ իյնան վար՝ կռուած ժամուն՝ վա՛ր գահավիժարար վա՛ր ու կորսուին անհե՛տ կտակելով իրենց յաջորդ սերունդին վառ անունի մը քովիլը մեծատունի դժուար թշուառութիւն մը :

Իսկ վերջիններն՝ այսինքն խելօք գիւղակեացները կամ Փոքր-Ասիայի քանի մը բանիբուն քաղաքակեացները, օրինակ իմն՝ կեսարացիները հին և ազնիւ մայրաքաղաքացիներն ու թերեւս ամէն անոնք ալ՝ որ գէթ Ակն փաղափեկ չէին և իրենց համար աստիճանական յառաջացում մը ընտրելու մասին աւելի՛ համեստ ու իմաստուն էին, զուտ իրենց տոկուն արժանիքովը բաւականապէս տակաւ յառաջատելէ ետքը՝ խորագիտօրէն կեցած են հոն, ուրկէ անդին ա՛լ չէր զօրեր իրենց տեսակ մը ինքօզնական ոյժը . և ըստ այսմ իրենք ալ իրենց կարգին արժանացած են, պոլսեցի բանիբուն միջակորեարին հետ, մեծ ամիրաներէն շա՛տ աւելի դիմանալու՝ իրենց դիրքին հարստութեանն և ազդեցութեան մէջ :

Եւ ասոնք եղած են ընդհանրապէս Պաշի կոչուած

արհեստագեաները, ոսկերիչներու, դազէզներու, պէզճի-
ներու մեծերը, մեծաքանակ վաճառողներն ու զարպիսա-
նէցիներէն մաս մը: Տգէ՛տ այլ բանդէ՛տ ամիրիկներ ու
աղաներ, որ գիտուններն էին կենցաղելու արուեստին,
գիտէին շահիլ ու սիրաշահիլ ևս լրջօրէն՝ թէպէտ շատ
չգիտէին մեղի պէս գրել, կարդալ, ճառել ու վիճել:

Հայ մեծատուն սեղանաւորներու վրայ հետեւեալն
հաւատարիմ տեսութիւն մըն է՝ գրուած թուրքիայի ներ-
քին գործերուն ներհուն գիւտնադէտ անձնաւորութենէ
մը, որ պաշտօնավարած է երկար ատեն Կ. Պոլիս և գա-
ւառները՝ 19րդ դարի սուլթին քառօրդին. — «Հայերն
էին ու են դեռ թուրքիայի ամէնավաճառ և ամէնահա-
րուստ ժողովուրդը, որով և լաւագոյն երաշխաւորու-
թիւններն կըսած են սուլթի Բ. Դրան, ըլլալով ներհուն
թուրք լեզուին, ըլլալով նաև հաւատարիմ բայաներ՝ կը
մատուցանեն պաշտօնատար բաշաներու բոլոր այն պէտ-
քերը, որ յանձնարարելի կրնեն իրենք թուրք վարչապե-
տի մը հանդէպ, իրբև կարող ու ժիր մարդ գործի, իր-
բև ամուր սեղանաւորներ, իրբև հլու վարկատու: Հար-
կերն յաճախ դանձուելով բնական նիւթերու ձեւին տակ՝
Հայերուն տաղանդը, իրբև վաճառական ու սեղանաւոր,
կրկնապէս օգտակար կը դարձունէ անոնք և կրնծայէ
անոնց շատ առիթներ արագ արագ դիզելու մեծ հարբս-
տութիւններ: Ինք Վեհ. Սուլթանն ալ հաշտ աչքով կը
նկատէ անոնց բարեբաստ յաջողութիւնները, այնու մա-
նաւանդ որ անոնց հարստութիւնները չեն գոհուիր շոյ-
լութեամբ, ինչպէս կըլլան բաշաներու հարստութիւննե-
րը, այլ հոգածութեամբ կը պահուին կը մնան իրենց զը-
րամարկղերուն մէջ՝ մինչև որ կտուավարական կամք մը
կամ պէտք մը դուրս բերէ անոնք աճեցունելու համար
վիւրիի հասոյթները:

Այսպիսի գործառնութեանց համար մեծաքանակ դրամագլուխներ հարկ են, որով սարաֆներու (1) թիւը կը թուի հասած ըլլալ 80-100ի մը. ու եթէ իրենք մերժեն երաշխաւոր ըլլալ թուրք կառավարիչի մը համար՝ այդ կառավարիչն արժէք չունենար յաշս կառավարութեան պարզ անհատէ մը աւելի. որով այդ սարաֆնէն են իրապէս գաւառներու վարիչներն ու կը վարեն ըստ հաճոյս և ի շահ անձանց. նոյն իսկ վերջին ատենները (1837) այնքան հզօրացուցած են իրենց կշիռն՝ որ ոչ մէկ սեղանաւոր կը հաւանի սարաֆն ըլլալ փաշայի մը (որ բարձրացած է այդ աստիճանին՝ կրքնանք ըսել՝ բարեհաճութեամբ սարաֆին) եթէ փաշան չճարէ վկայագիր մը անոր նախորդ սեղանաւորէն՝ հաստատելու համար թէ վճարած է անոր իր բոլոր պարտքը:

Ենթադրենք որ փաշային վճարելիք գումարն առ կառավարութիւնն՝ ըլլայ 500,000 դրշ. (5000 ոսկի) վճարեալ քառորդ մասամբ, սեղանաւորը նոյն նեաայն մէկ անգամէն պարզեւատուութեամբ մը կառնէ փաշայէն ընկալագիր մը ամբողջ այդ գումարին համար, և այս ընկալագիրը կը բերէ իրեն առ նուազն երկու առ հարիւր (ամսէ ամիս) տոկոսիք մը: Ապա պէտք է հայթայթել փաշային զէնք, շալեր, չիպուքներ, ձիեր, որոնց համար սեղանաւորը կառնէ 10 ⁰/₁₀ յանձնարարագիրն մըն ալ: Փոխարէն ստակները պէտք է վճարուին երկու չորս ու վեց ամսուան միջոցներուն. բայց ինք անմիջապէս կառնէ փաշայէն ընկալագիր մը ամբողջ գումարին համար՝ միւս ընկալագիրին նման տոկոսիքի ենթարկեալ: Երբ քիչ ատենէն փաշան համար նշանակեալ գաւառը՝ պարտի զրբկել սեղանաւորին նուէր մը հասարակաց հասէն հարիւ-

(1) Գնող — միջնորդ, սեղանաւոր:

րին տասը կամ հինգ արժէքով, իբր օրինաւոր խայրիք իր պաշտօնին, նմանապէս նուէր մը սեղանաւորին գործակատարին ալ՝ իր գաւառին պէս պէս արտադրութիւններէն: Բայց երբ սեղանաւորն իմանայ իր գործակատարէն՝ թէ փաշան դրամ կը դիզէ՝ անմիջապէս կը դրկէ անոր ծանուցագիր մը սա ձեւով «Գիտադարար ձեր բարձրութեան դէմ տրտունջներ հասած են հոս, բայց ես լուեցուցի անոնք ճարտարմտութեամբ: Այս գործ 10,000 դրշ. ի մը ծախք պատճառեց ինձի, զոր անցուցի ձեր հաշիւին, խնդրեմ հաճեցէք անցունել զայն պահանջքիս կողմը»: Կըրնայ ըլլալ որ այս ծախքն իրա՛ւ եղած ալ ըլլայ, բայց և իբր յաճախ շինծու կըլլայ: Թերեւս կարծուի ալ որ եթէ երբէք այսպիսի փաշայ մը տեսնազաւ ըլլայ՝ պիտի ջանայ վրէժն առնել այսօրինակ անիրաւութեան մը, բայց բնաւ այդպէս չէ. Հայերն իրենց հարստութեամբն հայթայթած ալ են իրենց քարավաններ (կողմնակիցներ), ճարպիկ միջոցներ ու բաւական հզօր ազդեցութիւն մը՝ նպաստաւորելու համար սատրազամին անուանումն իսկ, և գործի վրայ գանուող թուրքերը կը համարին սեղանաւորին հարստահարութիւններն իբրեւ հարկաւոր չարիք, որ և ալլիւրներ են իրենց ալ հարստութեան: Սատրազամ ընտրեալն ալ ունի ուրիշ շահ մը ևս խնայելու իր սեղանաւորին, նա կընդունի անկէ իր պարտքերուն ջնջումը ի վարձ պաշտպանութեանը, զոր կընձեռէ սեղանաւորին ընդդէմ ներհակ ազդեցութեանց միւս փաշաներուն: Ամէնէն հարուստ սեղանաւորին ունեցածը կըրնանք ենթադրել մէկ միլիոն լիրայ սթէրլին մը: Բայց և այսպէս՝ իրենք միշտ անակընկալով մը ամէն բան կորսնցունելու վտանգի մէջ են:

Գաւառներու մէջ փաշայի բնկերացող խորհրդական գործակատարն յաճախ կառնուի սարաֆին ազգականնե-

րէն և բոլոր դրամական գործերը կըլլան անոր ձեռքով . դրամին սակն ու յանձնարարողէքը շատ աչքի դարնող գումարներ են : Այս գործակատարն է որ կը հաւաքէ գաւառին հասոյթները , որոնց հանդէպ իր ներկայացուցած տունն երաշխաւոր եղած է . և այդ հասոյթ-արդեանց վրայ շահավաճառներ կընէ՝ շատ վար գինով մը ձեռք բերել հնարելով ամէն բան . ըստ այսմ՝ ամէն փաշայի կցորդ կընթանայ վերատեսուչ մը՝ ինչպէս սրացող ձուկերուն խեցեմորթ մը , որմէ չկրնար պրծիլ բովանդակ ճիգերովն անգամ : Փաշային բոլոր շարժումները կը հսկուին . անոր բոլոր եկամուտներուն տէ՛րի պէս է վերատեսուչը , և կը մղէ զայն բռնական ու հարստահարիչ գործերու՝ չթողլով որ ստանայ նա իր ամբողջ հասոյթը : Փաշան չկրնար ճամբու դնել զայն , վասն զի կապուած է անոր տիրոջ երաշխաւորութեանն իր պաշտօնին բովանդակութիւնը :» (Թուրքիա եւ իր պարագայ-իւր D. Urguhart, քարտուղար անգղիական դեսպանատան ի Կ . Պոլիս . Ֆրանս . Թարգմանութիւն , տպագր . Պրիւքսէլ , 1837—էջք 155-159) :

Ահաւասիկ ուրիշ վկայութիւն մը 19րդ դարի առաջին քառորդին Թուրքահայոց վրայ՝ գրուած դիւանագէտ կաթոլիկ յոյն բժիշկէ մը—«Կ . Պոլիսի քրիստոնեայ բնակչութեան ամէնէն նշանաւորն Հայն է . տոնուազն 20,000(!)ի չափ : Ասոնք թէպէտ բաժանեալ կրօնական կարծեօք՝ կընծայեն , սակայն , կատարեալ միութիւն մը , որ մեծապէս կը նպաստէ կառավարութեան իրենց տուած պաշտպանութեան :

Հայերն առհասարակ լաւարարոյ , աշխատասէր , վաճառական ժողովուրդ մըն են : Իրենց սեղանաւորական տուները կը վայելին մեծ վստահութիւն . անոնք՝ փաշաներու մեծագոյն մասին , մեծ անձնաւորութեանց ,

մասնաւորաց հարստութեանցը պահապաններն են : Անոնք կը հայթայթեն պէտք եղած դրամը փաշաներուն՝ հաստատուելու համար իրենց պաշտօններուն մէջ, և արքունի փողերանոցին ընդհանուր անօրէնք սովորաբար հայ մը կըլլայ (Տիւղեանք ու Ղաղէզ) : Հայերը կը վայելեն թուրք կառավարութեան տարածին չափ ապրելու և շահելու ազատութիւն մը, և անկէ՛ է որ կըրնան ու կը կամենան օգնել միշտ համերաշխութեամբ իրենց տո՛մակիցներուն : (Essai sur les Fanariotes par Marc-Philippe Zallony, Docteur en medecine, Marseille, 1824) :

••

Մեծ Նոր-Սանի, Վալիսէ-Սանի, Վէզիր-Սանի ամիրաններն եղած են մեծ մասով ակընցի կամ ուրիշ քաղքըցի սեղանաւորներ (բացի Բաբերդէ, Երզընկայէ, Կարինէ, Սարըէրդէ՛, Կեսարիայէ ու Երևանէ), քիչերը վաճառական : Եւ ասոնց խրաքանչիւրն՝ իր քաղաքակիցներն այլամերժօրէն յառաջ քաշելու և Կ. Պոլիսի հանրական իրողութեանց մէջ ալ ազդեցութիւն և հրամապետութիւն վաստրկելու աշխատած են յաւէտ՝ խտանալո՛ւ վ պահանջկո՛տ և անագորո՛յն դաճնալով առ դրացին առ իր համազգի օտարն և թոյնալով առատանալով ու ներելով ամէն արտողութիւն իրհեմի՛ն ազգականին կամ պաշտպանեալին և կամ իւր կիրքերը փայփայող անարժանին . . . Իսկ թէ՛ ակընցի թէ՛ ա՛յլ քաղքըցի կամ գիւղացի՛ վառօդապետ, ճարտարապետ, հացապետ ու արհեստագէտ ամիրաններն ալ՝ ունենալով այդ վերիններէն գործապէս զատուցեալ գնացք մը և՛ իրենց ճարտարուեստական մտացիութեամբն՝ ըլլալով աւելի՛ աշխարհամերձ աւելի՛ խօսք հասկըցող ու լայնսիրտ, կը յիշուին բնաբար զատինչպէս հանրային գործերու մէջ ալ կը գործեն զատարար :

որոնց գործառնութիւններն ալ աւելի ընթացակից ըլլալով մայրաքաղաքի միջին արհեստագործներուն և տոկուն բանուորներուն՝ տեւած են աւելի տոկուն ամբութեամբ աւելի միջին հաշուեզօտութեամբ և խոհեմութեամբ մը : Ասոնցմէ մէկ քանիին ամիրայութիւնն ալ՝ իրբեւ մօտէն ծառայողներու արքունականին՝ ունեցած է միւս կողմէն աւելի ազնիւ աւելի բարեւէր ու այլսշահ շուք մը, որով և իրենց ազդեցութիւնն հանրային գործերու մէջ վայելած է աւելի՛ սէր և աւելի՛ ժողովրդականութիւն : Ասոր համար է՝ որ Պալեան ու Տատեան ամիրաները վայելած են հինգ ամիրայի բարոյական ոյժ, և ինք՝ Պապա Գրիգոր ամիրան՝ Ղազէզի ձեռնկալուն, զատուած ու ճանչցուած է վարպետ (sage) ամիրայ յորջորջումով, ինչպէս կը կոչուէր նոյն ինք Մեսախ ամիրան ալ (ղազեզ Յարութիւն Պէզճեան) :

Եւ այս վերջիններուն համբոյր խրախուսանքովն և գործակցութեամբ, մանաւանդ վաղեմի պոլսեցիութեան և հնարագէտ մտացիութեան իրաւունքով, Կ. Պոլիսի գլխաւոր էնաֆններն ու արհեստագէտներն ալ՝ 19րդ դարի սկիզբէն՝ կանոնաորոշուած միջամուխ եղած են հասարակային իրողութեանց, իրենց արհեստագետներուն և զարգանէցի ճոռոմ Հայերուն միջոցով, որ ունեցած են մերթ (1815—1840) ամիրաներու հաւապար ոյժ մը՝ մանաւանդ իրր ամէնէն խօսուններն իրահմուտներն ու երեսագէտները՝ գլուխ ունենալով իրենց Ղազէզը : Մինչև 1840՝ Հայերն էին Զարպիսանէի վարիչները. տես մանաւանդ Լամարգիմի Ուղեւորութիւնն յԱրեւելս (Voyage en Orient Tome second) : Ասոնցմէ ելած են նաև ուսումնատէր և ուսումնական խորհրդական մարդիկ՝ սկսելով թէրզեանց Աբրահամ չէլչէպէն, մատենագիր բժիշկ Իսառէնէն, լեզուագէտ Յովհաննէս Եղեկեա-

նէն՝ մինչեւ Գրիգոր և Մկրտիչ Ազաթօն, Սերվիլէն՝ որ բժիշկ ու բարեկամ էր Մեծ Եպարքոս Ալի փաշային, Յակոբ Կրճիկեան՝ խորհրդական Մեծն Րէշիտ փաշայի ի Փարիզ, միւհէնտիս Գէորգ՝ չափագէտ ու սոմարագէտ՝ որ 19րդ դարին սկիզբները գոյացունել ուզեց համաձայնութիւն մը Յունաց պատրիարքարանի սոմարագէտներուն հետ ու վերջ ալ Մուազատիկի անպատեհութեանց, Յովհաննէս Միւհէնտիսեան՝ առաջ սակերիչ ապա Ա. ապարանապետ, Արիստակէս Ալթուն Տիւրրի՝ նախկին պաշտօնատար Եգիպտոսի, լեզուագէտ, խմբագիր Եգիպտոսի պաշտօնաթերթին և Պատրիարքարանի ժողովներու գործօն անդամ, Պետրոս Աորասանճեան, Գրիգոր Մարկոսեան Ջմիւռնացի,⁽¹⁾ Աստուածատուր Զունդ, Գրիգոր Օտեան, Յակոբ Տիվիթեան, Յովհաննէս Սուրէնեան՝ դատաւոր, Յովհաննէս Հիսարեան՝ մատենագիր ուսուցիչ, Բարունակ և Ստեփան Արսլանեան (ետքը փաշայ) պէշէֆէնտիները, որ նաև կրցած են քանիցս միջնորդել խաղաղապէս ամիրաններուն և արհեստաւորներուն՝ խօսքով, խրատով, գրիչով ու խորհուրդով՝ մինչև որ շոգենաւային, հեռագրական, տպագրական ու վերջ ի վերջոյ երկաթուղիի դիւրութիւններն եկան աւելի դիւրացունել բարձրամիտներուն անհաւանութիւնն և անհամոզելի անգիտութիւնները, ու բառնալ հաւասարել իրենց ու հասարակութեան միջև կոթողած ամբարտակեալ խտրը։ Այդ խորհրդական և ուսումնական մարդիկ՝ առանց մեղէն հաւանելու իրենցմէ ոմանց ծայրայեղ ու զայրացկոտ արմատականութեան՝ կը համարձակինք ըսել թէ՛ կրցան 1840էն մինչև 1860, քաղաքակրթութեան վերոյիշեալ

(1) Աշակերտ Վանանդեցի Տէր Յովհան Բաճանային ի Ջմիւռնա:

միջոցներն յօդուտ ի կիր արկանելով՝ զօրացունել, ամիրաներուն չափազանցեալ զօրութեան և ձեռնախութեանց հանդէպ, ժողովուրդին ու էսնաֆին բանիրուն մասին ներդաշնակող աղդեցութիւններն իրաւացի, անշուշտ հանելով ի հարկէ տաքուկ բաժին մը հետաքրքրական այդ հարթիչ շրջումին պահանջած բնական վէճերուն, կռիւներուն և ընդդիմադործութեանց: Այսպէս կրակէր նախկին շունչ մը փչել Թուրքիայի վրայ Սահմանադրական ոգին:

* *

Կ. Պոլիսի ժողովուրդին այդ բանիրուն մասը, որ ամէնէն յարմարն էր ամիրայութեան արմատացած ու պատասաուած զեղծումներն յօտելու մաքրելու՝ ի վաղուց ունեցած է մեծ անուն՝ իբրև քաղաքացի վարպետ, իբրև խօսող ճարտարագէտ ու բանիմաց, իբրև կրթող և առաջնորդող նորեկ Փոքր-Ասիացիին, իբրև մանաւանդ բանասէր ու կրթասէր տարր մը. իր մէջէն ելած են շատ կողմերով մեծ մարդիկ՝ երբեմն ամիրաներէ՛ն ալ մեծ: Այդ բնաիր էսնաֆին մէջ ամէնէն մեծ կշիռն ունեցած են՝ դէթ մինչև 1870՝ Կ. Պոլիսի ծածկադէտ քահանայորդիներուն և վարժապետներուն հետ՝ հին ոսկերիչներն ու մանիփարուրաճիները, և դարձեալ՝ Պոլսեցի, Չմիւսնացի, Տիւրքիցի, Կեսարացի, Պանտրբմացի վաճառականներն ու պետական գրագէտ պաշտօնեաներէն ոմանք՝ մեծ մասով Սամաթիայէն, Բերայէն, հին Օրթագիւղէն, Հասգիւղէն, Գում-Գարույէն ու Սկիւտարէն՝ գերազանցապէս ճարտար խօսելու կռուելու և կրթելու մէջ:

Ասոնց ներգործութիւններո՛վն էր՝ որ 1836ին⁽¹⁾

(1) Ասիկ երկու տարի առաջ ձեռնարկած ու շինած է՝ Ս. Երուսաղէմի արքունի պաշտօնական փոխանորդն Յովհաննէս Մովսէսեան Չմիւսնացի վարդապետը (այսպէս շինող պատճառով Երուսաղէմի) Պոլիսի Երուսաղէմեան Փոխանորդարանը, սկնարկու-

ամիրաններէն երկիւղածներն և ուսումնասէրները Պատրիարքարան հաւաքուելով՝ ի ժողով բազմեցան «Աղանի» Ստեփանոս Պատրիարքին նախագահութեամբ և որոշեցին հիմնել Սկիւտարի հին ձեմարանը, որուն ի նպաստ երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը կուտար 120000 դր. և որուն ապա ոգիով չտի հակառակեցան սեղանաւոր ակնցիներէն նախ Միսաք ու ձանիկ ապա ձեղայիրցի Մկրտիչ ամիրանները՝ լոկ հակառակելու համար ճարտարագետականներուն, նաև՝ առ առաւելն՝ նախապատուութեան ու նախաձեռնութեան նախանձէ մը բռնուած: 1830ին կը յիշուին՝ իբրև տպագրական մեծ բարերարք՝ Մանուկ աղայ մահտեսի Աստուածատուրեան և իր կողակիցն Երանուհի տիկին՝ Կարնեցի:

1836էն կը զրուցուի նաև նեվրուզ Յարութիւն ամիրայ⁽¹⁾, որ ձեղայիրցիին հետ ծաղկեցուց Խասգիւղի ներսէսեան վարժարանը. այս կարգէն է նոյնպէս Յովհաննէս Բինկեանեան:

1815էն մինչև 1845 փառոյ սեղանաւոր մեծ ու փոքր ամիրաներու տիազոսներուն և դասակարգին վրայ կառններ հոս հակիրճ ծանօթութիւններ և անուններ մը

բեամբ և նպաստ՝ աչ Պեզնեան Յարութիւն, Փիշմիշ Միխայիլ և Փափագեան ձանիկ ամիրաներուն: Այս շեմքն է՝ որ կը կոչուի տուն Երուսաղէմի կամ Երուսաղէմասուն, Պատրիարքարանի աչ կողմը: Կա՛ր հոն հին Երուսաղէմական մը, որ 1826ի Հօճայ փաշայի ահարկու հրդեհին այրած էր Մայր Եկեղեցիին ու Պատրիարքարանին հետ:

(1) Հիմնադիր Վոսփոռի Եմիփոյի նկեղեցիին և հայր ու մեծ հայր Կ. Պոյիսի նեվրուզեանց: Զմիռնացի Թուրքն Անդրեաս փափագեան նշանաւոր վարժապետին նժդեհակիզն ու ընկերը՝ Թավոսեան լեզուագէտ երիտասարդն՝ Իսաչիայէն դարձին այս նեվրուզեանց տունն օրած ու դաստիարակած է անոնք. իր գերեզմանն աչ Խասգիւղ նեվրուզեանց քաղին մէջ է:

ձեռագիր այն Տետրակէն , որն հաճած է ցոյց տալ մեզի հանգուցեալ վերջին ամիրայականի մը որդին և որ գրութեամբ է Մեծնոր խանի սեղանաւորներուն սեպհական գրասենեակին մէջ . այս տետրակն է՝ որուն կակնարկենք ալ Ամիրայի անունով մեր ներքնագրոյմ ծանօթութեանց մէջ :

Այդ դասակարգերուն բաժանորդ երեւելի անունները կը յիշատակենք հոս , որպէս զի տուած ըլլանք արդի սերունդին լեցո՛ւն դադափար մը կարգաւորեալ՝ անոնց վրայ , և իրենց սերունդին՝ յիշատակարան հայելի մը իրենց նախորդներուն , որոնց անունները պիտի կարդան հոս պատմօրէն՝ թերեւս առաջի՛ն անգամ ու պիտի հրճուին պապասիրութեամբ մը , և յետամնացներն ալ պիտի թելադրուին ի նախանձաւորութիւն լաւագոյն նմանութեանց և գործունէութեանց :



ԺԲ.

Սեղանաւորներու և ամիրաններու այս դասակարգը կը բաժնուէր երեք տեսակի, որ իրենց մէջ կըստորաբաժնուէին նոյնպէս երեքի, ինչպէս կը նշանակէ Ստեփանոս Պատրիարքի կանոնադրած հարսանեաց կոնդակն ալ՝⁽¹⁾ տպագրուած 1835ին յՕրթագիւղ 4. Պոլլիսի:

Առաջին բաժանումն էր՝ — Ալեա, Էփսսոս, Էսնու, ու երկրորդ բաժանումը կամ ստորաբաժանումն էր այսպէս՝ Ալիան կը բաժնուէր երեք կարգի, — Ա. Ալեա, Բ. Ալեա, Գ. Ալեա — ինչպէս կըստորաբաժանուէին նաև Էփսսոսն ու Էսնուսն. — Ա. Բ. Գ. Էփսսոս ու Ա. Բ. Գ. Էսնու:

Ի սկզբան (1830—1840)՝ Ա. Ալէաէն էին՝ Խիւտաւլէրաի օղլու նազարէթ ամիրայ, Փիշլիջ Միքայէլ ամիրայ ակընցի՝ իր ճարպիկութեանն համար այդպէս Փիշլիջ (եփած) յորջորջեալ, և այդ ճարպիկութեամբ՝ փռանքեզկեանսարուքենեկ ամիրայութեան բարձրացած, Պալեան Գրիգորէն ու Ղազէզէն ետքն առաջնակարգ ամիրան եղած էր. Կէլկէլեան մահտեսի Չէլէպի, Երկանեան Յարութիւն ամիրայ,⁽²⁾ Բիւրքճի-խանլը Պետրոս, Տալուտեան Յովսէփ, Թընկըրեան Յարութիւն⁽³⁾ (այս չորսը կը յիշուին ետքերը):

Բ. Ալէայէն էին (Բամանտոյի հետ)⁽⁴⁾ Բարունակ

(1) Կոնդակ հարսանեաց սահմանեալ ազգային ժողովով (կէջ 9—10):

(2) Ամիրայե, կէջ 1:

(3) Ամիրայե. կէջ 7:

(4) Վասն զի հրեաներն ալ մերք կը գործակցեին շայնու սեղանաւորական իրողութեանց մէջ:

աղայ, Բինկեանցի Յովհաննէս աղայ, Պետրոս աղայ, Ղազար աղայ, Մարգար աղայ, Մխաբ աղայ և Մահտեսի Մարտիրոս աղայ :⁽¹⁾

Գ. Ալէայէն էին՝ Ազնաւորեան Յովհաննէս աղայ, Ղազար աղայ, Տամատ Յովհանն աղայ, Խորասանճի Յովհաննէս աղայ, Կիւղէլեան Յարութիւն, Թօփհանէլի Յարութիւն աղայ, Պաղտասար աղայ⁽²⁾ եւն . . :

Իսկ Ա. Էլսատէն էին Մազաւուտ աղայ, Նիկոլ աղայ (հայ հոռոմ), Փափագօղլու Խնդիր աղայ, Չերազլեան Գրիգոր աղայ⁽³⁾, այս երկուքը քիչ շատ հմուտ էին տաճկական դպրութեան :

Բ. Էլսատէն էին՝ ձանկի ամիրայ, Մովսէս և Յովհաննէս աղայ, Ղոնչէկլուլեան Մահտեսի Պաղտասար և Մելգոն աղայ, Ճէզայիրլի Սարգիս աղայ (Հայրը Մկրտաբիշ ամիրային)⁽⁴⁾ Մահտեսի Երամ աղայ (հայրն Երամ-

(1) Ամիրայք էջ 2:

(2) » » 2 եւ 9: Այս վերջինը բուի շինողն է Բերայի Երրորդութիւն եկեղեցիին:

(3) Ամիրայք, էջ 2 եւ 10:

(4) 1851ին Կ. Պոլիս հրատարակուած շնորհիմով ամսական հանդէսէ մը կը համառօտենք վերջին ամիրաներէն այս հոչակաւորին վրայ կենսագրական հետեւեալ տեղեկութիւններն՝ առանց երաշխաւորելու պատմական ստուգութեան այդ ծագումին, որ կըրնայ անյայտ պատճառներով կորընած ըլլալ կուսակցական կամ մեղսուութեան պատճառներու, վասն զի նոյն ասեանները ձեռքայորցիին ամենեւնի փայլուն ասեանն էր՝ ու մեծապէս կօզնէր ինք գրողներուն, մանաւանդ իր կողմի գրողներուն. սա ալ կայ որ նոյն միջոցները երկու կուսակցութիւն սասիկ զայրացած էին ի հեծուկս իրարու՝ մին Պալեսանցն ու Տասեանցը միւսը ձեռքայորցիինն էլ իր կցորդ սեղանաւորներունը:

Մկրտիչ ամիրայ ձեռքայորցի կը կուրսի եղեր նաեւ Հովնուանց եւ այդ ազգատոհմին ծագումը կը տարուի շատ հին ժամանակներ: Մշակեաւորելու համար այդ հին ազգատոհմին անունն՝ իւրա-

եանց), Եորտամ աղայ, Մահաեսի Յովհաննէս աղայ
Ստեփաննեան:

Գ. Էվսասէն էին՝ Աշնան Պօղոս աղայ, որ մինչև
1880 ազգային դործերու միջամուխ կըլլար, Միսաքեան
Յակոբեան աղայ, Եորկի աղայ (հայ հոռոմ):

Բանչիւր ասնուսէր շանացեր Կ իր զաւակներէն մին անուանել
Հովիւ. եւ այդ ազգաբանութիւնը կը շարունակուէր երեք դարե
հետք որդի ի հօրե. ասոնց նախահաւերէն Պունեաք կամ Պինեաք
անունով մեծ մը՝ պասճառով մը կուզայ հաստատուիլ Սերասիա,
եւ անժառանգ ըլլալով կը յօժարի որդեգրել ազնուական ցեղի մը
Արծկեացի որք պատանի մը՝ Պուշամ կամ Ապուշամրի անուն:
Քանի մը տարիէն կամուսնացունէ զայն, եւ իհի մը ետքը՝ Ա.
Սուրբան Սելիմին Պարսկաստան արշաւելուն ատեն՝ Պ. Պունեաք
կը խառնուի Ակնայ երկիրը, ուր քաղաքին մօտ տեղ մը կը հաստատ
իւր բնակութիւնը, եւ այդ տեղին աչ անունը կը դնէ՝ իր որդե-
գիրին կոչումովն՝ Ապուշամրի, այս այն զիւղն Կ որ ժամանակի
մը ետն ու հիմայ աչ կը կոչուի Ապուշիս:

Պ. Պուշամրի ծնած բոլոր զաւակները կը մեռնէին անդին
խանձարուրի մէջ՝ բացի վերջիներէն, որուն անունը դրին Հովիւ՝
ի յիշատակ Հովուեանց հին տոհմին:

Այս հովիւն Կ անա երկրորդ նախահաւն Հովուեանց զարմին,
որուն ուրբերորդ բուն էր (բոռան բոռին բոռը) ձեզայիտեան
Մկրտիչ ամիրան: Ըստ այսմ — Պուշամ ծնաւ Հովիւր, Հովիւ ծնաւ
Թորոսը, Թորոս ծնաւ Հովիւր, Հովիւ ծնաւ Սարգիսը, Սարգիս
ծնաւ Թորոսը, Թորոս ծնաւ Սարգիսը, Սարգիս ծնաւ Յովհաննէս
Ամիրան, մականունանեալ ձեզայիտի, Յովհաննէս ամիրայ ծնաւ
վերջին Սարգիս ամիրայ, որուն որդին էր՝ ինչպէս գրած ենք
վերեւ՝ Մկրտիչ ամիրայ ձեզայիտի, մեծահոգի եւ հանձարեղ, այլ
անձնահաւան ու իհի մըն աչ անխոհեմ՝ ինչպէս կըսեն՝ որով
յետին աղխատութեան մէջ կնից իր վերջին տարիները, եւ կտակեց
յետին աղխատութիւն մը իր կողակիցին եւ միւս մերձաւորներուն:
Բազմաքիւ երիտասարդներ իր օգնականութեամբը կրթուեցան Ե-
րոպայի մէջ: Հասցիւղի մէջ հիմնուեցաւ իր ծախսովը մեծ վար-
ժարան մը եւ շարունակուեցաւ քանի մը տարի. ինք հեղինակա-
բար ստանձնեց ու սկորինեց մաքսի մեծ գործառնութիւնները,

Եւ Ա. Էանայ էին՝ Բինկեանցի Խաչատուր աղայ, Էլիմեան Մաթոս աղայ, Միւսաճեան Պաղտատար աղայ, Ղոնչէկիւլեան Յովհան և Մարտիրոս աղայ, Մահա-տեար Ստալրի աղայ (հայ հոռոմ) :

Բ. Էանայ էին՝ Մոմճեան Նիկողոս աղայ, Եաղրճեան Յովհաննէս աղայ, Տամատ Յովհան աղայ, Էամէր Օղլու Պօղոս և Յովհաննէս աղայ, Շիշմանեան Յակոբ աղայ, Սալա աղայ և այլն⁽¹⁾ :

Ու Գ. Էանայէն էին՝ որ կանուանուէին Եղբայր, Տագէսեան Մկրտիչ, Պահճէպան օղլու Գէորգ (որ Եաղբերն

պաշտպան հանդիսացաւ երկրագործական մեղակներու, գլուխ կեցաւ նոր կամուրջի մը շինութեանը նաւահանգիստին մէջ. իր առաստմանութիւնն եւ սալքանաքը չափ չունէին՝ կրակն, որ վերջապէս գլխաւոր պատճառներն եղան իր արագ նուազումին եւ անկումին: Երբ ձախասազրեայ բանաստեղծներէ մը կըլաւ՝ քափա-նեցաւ Մալքա, Լոնտա, ուր վասնեց շատ արծաթ. անցաւ ապա Դերմանիա, ուր դրամն հասաւ եւ ինք 3000 ֆռ. փոխ առաւ Դալքահան Ամբրոսիոս վարդապետէն եւ չկրցաւ վճարել... (Սարգիս Թեոդորեան, Պատմութիւն Մուրաանեան վարժա-րանի, հաս. Գ. էջ 86—87):

Մկրտիչ ամիրայ ձեզայիրեանի հիմնաւորը խորհրդականն ու գործակատարն էր Ալիսան Սագայեան, որ եւ քանի մը օտար Պատրիարքանի ալ գործակատարութիւնն ըրած էր. սա իր ծերու-րեան օրերն անցուց Ալիսարի բարձանց վրայ՝ ընթերցասիրելով եւ ընասիրելով խաղաղութեամբ իր երկրագործական ընկալա-նին մէջ եւ հեզգնեակ նուազելով թէ՛ ամօք, թէ ընչիւք. երբ վրայ հասաւ անակնկալ (5000 ոսկիի) ժառանգութիւն եւ վախճան մը. իր հարսնութենէն պիտի օգտուէին Ալիսարի աղտաւ մանուկներն՝ երկ երկու ներհակ ու անխոհեմ միջամուխներ չխառնակիին կտակի խնդիր մը, ուրիշ օգտուեցան միայն դասասացք, դասա-ւորք, նաեւ մեծկակ Մանուկ մը, որմէ կը յուսանք դեռ բաժին հանել յազգասիրարար Ալիսարի խնդն փոքր մանուկներուն ալ...

(1) Ամիրայլ էջ 4:

ամիրայ ալ ըսուեցաւ) և Աւետիս եղբայր⁽¹⁾, որ հարիւրամնայ վախճանեցաւ ի Սկիւտար 1904ին վերջերր, Մարկոս և Կարապետ եղբայր, Սօճա Զաքարիա, Ղուկաս եղբայր և այլն⁽²⁾ . ու ասոնք բազմաթիւ էին, և կը նրատէին ընդհանրապէս փոքր նոր-խան, Վէզիր խան, Քաշքճի խան . վերջերն ալ իրենցմէ մինչև առաջին Ալէալին բարձրացողներ ու ամիրայ կոչուողներ եղան :



Ասոնց ջոջերէն ամէնակարեւոր խումբ մը՝ համախուհութեամբ իրարու հետ և համահաճութեամբ պետութեան՝ հիմնած էր այն հակա՛յ ընկերութիւնը սեղանաւորական, որ բաժնուելով երկու ճիւղի՝ կը կոչուէր Անասորա և Րուսկի ֆուրսանեասը: Առաջինը կը տնտեսէր ու կը հաւաքէր՝ իր գործակատարներուն և հարիւրորդաւոր հաւաքողներուն ձեռքով՝ Անատոլուի հարկերը՝ և երկրորդը՝ նոյնպէս իր գործակատարներուն և հաւաքողներուն ձեռքով՝ Րուսկիի հարկերը, այնպէս որ ըովանդակ Տէրութեան հարկերն և տուրքերը կը ժողովէին այդ ընկերութեան ձեռքով, որ շատ անգամ ի հաշիւ Տէրութեան կանխավճարներ ընելով այդ հարկերուն փոխարէն՝ կը դիւրացունէր անոր պիւտճէին առ ձեռն հաւատարակչութիւնը, և ինք ալ կը շահէր լիով՝ ցորչափ գիտնար իր հաշիւը, և տնտեսէր լաւ պաշտօնէութեան մը ձեռքով իր ընդարձակ գործերը: Անասորա ֆուրսանեային մասնակիցներն էին՝ Ուղուենան Թարութիւն, Քիւրքճի-

(1) Աղբիւնուպոլիսի մեծատուն ընտանիք մը՝ ժիր ու տնտեսաւոր, որ 1855էն սաղիկ իր ամիրայ գործեց ու սպրեցաւ ջիւր ծերութիւն (100 տարի) ֆաշողը և խելացի:

(2) Ամիրայք, էջ 5—6:

խանը Պետրոս, Մխաբ աղայ, ձէղայիրեան Մկրտիչ, Պողոսասար Չարագեան և Պօղոս Աչնան՝ իսկ Բուսեղի Խաչատրեանցին Ճանիկ, Մագսուտ, Մահուեսի Յարութիւն Կէլիկէլեան, Աբրահամ Ալլահվէրաի, Յովհաննէս Թընկըրեան և Յովսէփ Տալուտեան: Եւ ամէնուն զլուխն էր Ուղունեան Յարութիւն ամիրայ, որուն պարգեւեց Վեհ. Սուլթանն ականակապ Իֆթիխար նիշանի: Այս ընկերութիւն դեռ նմանն ունեցած չէր Թուրքիայի մէջ. բայց իր փառաւոր սկիզբին ու կազմութեանն հակառակ՝ չկրցաւ դիմանալ ընդ երկար, և հարիւրորդաւորներու վճարողներու և ուրիշ զեղծումներու և անկանոնութեանց պատճառով՝ հուպ ընդ հուպ նուազեցաւ ու եղծաւ, տեղի տալով հետզհետէ նոր դրութեանց ու եւրոպական ոճով կազմուած պանքաներու և հաշուրնիստացներու: (1)

Այս է աւասիկ վաւերական ցանկն ու գործառնութեանց հակիրճ պատկերն՝ ամիրայ, աղայ, եղբայր սեղանաւորներուն, որոնց մէջ 1800էն մինչեւ 1850-55 գոյացած էր ու կը տեսէր տեսակ մը գործակցական համերայութիւն արեւելեան՝ հանդէպ պետութեան Եպարքոսին և միւս Բղեսոյաններուն: Իրենք յաճախ կը կնքէին անոնց հետ պայմանադրութիւններ ու կընէին մեծաքանակ առևտուրներ և դրամական փոխանակութիւններ:

Ունէին իրենց ընարեալ ֆեախեան (նախ՝ Երկանեան Յարութիւն ամիրան, ետքը՝ Ճանիկ ամիրան), իրենց արուեստապետական սննեակը, իրենց գործակատարները, դրագիրները, թեւարկեալները, իրենց թաղերը, զպրոց-

(1) Ամիրաներու և իրենց շարորդներուն նուազումին և սնկումին պատճառներէն մին աչ եղած է՝ իրենց սգիտութիւնը մերտաւոր հաշուաւիայութեան և ներդաշնակեալ գործունեութեանց, որ տակաւ երեւան կուգար մրցակցոյ եւրոպական նորաձեւ գործառնութեանց հանդէպ:

ներք, քահանաներն⁽¹⁾ ու վարդապետները, նաև հարցա-
րան բանգէտներն ու պատուելիները: Ունէին իրենց զիւ-
ղազնացութեանց, ուխտաւորութեանց, խրախճանու-
թեանց, հարսնաւորութեանց, պատկազրութեանց և յու-
ղարկաւորութեանց յատուկ եղանակներն որոշեալ⁽²⁾: Ու-

(¹) Տէր Մելգոն ֆահանայ Պաշարի՝ գրագէտ ու զեղեցիագիր
բանասէր, Տէր Մեսրոպ ֆահանայ Տէր Յարութիւնեան Գուսգա-
բույի՝ արգրումցի, վախճանեալ 60ամեայ 1826ին, որ նախնեաց
մասննագրութեանն հմուտ էր և ունի գրարար ընդարձակ ֆե-
րականութիւն մը, Տէր Դեորգ Մայր եկեղեցիի, որ 1820են 1863
չափ ազդեցիկ եղաւ Պատրիարքարանի գործերուն մէջ, Տէր Յով-
հան Վանանդեցի ֆերթոյ ֆահանայ զմիւռնացի, և իր որդին՝
Տ. Երեմիա ֆահանայ Խասգիւղի տօմարագէտ ու հայերեւոյցագէտ,
Տէր Դեորգ Արծրունի, Հասգիւղի, Տէր Յովնաննէս Փափագեան
Սկիւտարի և Տէր Գալուստ Օրբագիւղի:

(²) Հետեւեալն՝ յայտարարութիւնն է Տասեան Պօղոս պեյի
յուդարկաւորութեան հանդեսին պատրաստութեանց, զոր կը ֆա-
ղենք Սուրհենեան Յովնաննէս կգ.ի գրուած մտազիրեւ մը:

Դազաղը ժամ 7ուկեսին դուրս պիտի ելնէ Բերայի Ս. Երրոր-
դութիւն եկեղեցիէն:

Ա. նախ և առաջ երկու զապօրիյէ մտուռնիին մով, էշիփկեն
լպիտի ըլլայ:

Բ. Բ. Դրնէն զալիք ասկերիէ մուգիֆան:

Գ. Քսան զապօրիյէ մտուռնիին մով, էշիփկեն ըլլայով:

Դ. Ուր հաս Բերայի ֆուխիտնէն խափագ, մտուռնիին բան
մը ըլլայով:

Ե. Տասն հաս Բ. Դրնէն եկած խափագ, մտուռնիին բան մը
ըլլայով:

Զ. Տասը հաս Դրան իչ աղասի, մտուռնիին բան մը ըլլայով:

Է. Մեկ խաչալեւ՝ երկու զաւագան, մտուռնիին էշիփկենով:

Ը. Երեսուն տիրացու տղայք մտուռնիին մով և էշիփկենները
մեծեակ և մտներուն վրայի քիւշերը սու:

Թ. Տասը մեծ տիրացու միւռնոյն կերպով:

Ժ. Քահանայք առանց շուրջառի՝ միայն մովով:

նէին դարձեալ իրենց սեպհական յառաջդիմական կամ յետադիմական կարծիքն ու գաղափարները, իրենց մատենագրարանները, մատանները, հագուելու շքուելու խոճեալ տարազները, բուրաստանները, իրենց հովարսայութիւններն ու սեփական փափկամոլութիւնները: Ունէին իրենց ինչֆին յատուկ զրգոխներն՝ օշարակներ պէս պէս պտուղներու, գինի, օղի, մանաւանդ սուրճ և ծուխը, որ կը տիրապետէին Կ. Պոլիսի մէջ և ունէին շատ քիւ-

ժԱ. Վարդապետս գոյց գոյց շուրջառով և ևնուրնին մտ:

ժԲ. Պատրիարքի սասն և Երկու ֆոյկն Երկու հաս Երկայն հասակով ֆահանայֆ՝ առանց շուրջառի և առանց մտմի:

ժԳ. Եպիսկոպոսս շուրջառով և ևնուրնին խալ:

ժԴ. Պատրիարքը շուրջառով և գաւազանով և խալ, և Երկու պզտիկ տղայֆ՝ շուրջառի ծայրերը բռնելով:

ժԵ. Ննչեցեալը չորս ժամկոյ ուսերնուն վրայ առնելով, հագուսնին սեւ յաթեր և գլուխնին ֆկու:

ժԶ. Ննչեցելոյն Երկու ֆոյկն չորս չորս քորչա մտներ. սսնկ ազգին մէջ գահուած միտւայ և խայմախամներն ունիֆորտայովը քիւերնուն մէյմեկ սեւ քիւլ. սսնկցմեկ ի գոս ծածկոցին շերիսներ՝ որ վեց հաս են՝ երեւելի և ծեր ամիտները պիտի բռնեն:

ժԷ. Ննչեցելոյն երեք դրսի կողմերը Դրնկն գալու զհնուրները շարունին. և այն զհնուրները ննչեցելոյն Երկու դրսի կողմերէն մարզ ներս մտնելու քող չսան:

ժԸ. Լուսարար և ժամակոյ և մահալլի ֆհնասի՝ սսնկ որ սպասուրներ են՝ ամենեւին այս կարգին մէջը չպիտի մտնան:

ժԹ. Դրնկն և կող խալագ գարքիյի՝ որեւիցե, սսնկ կարգադրութիւնը Պէօղլույի Դայադա Սարայի մերֆեզը գտնուած խոլ ադասի Ահմէտ ադային յանձնելու է: Տիրացու տղայոց և եկեղեցականաց կարգադրութիւնը Նաւրուզեանց Յարեքիկ ադային յանձնելու է. գրուած կարգով երթալու և կամաց կամաց ֆալելու համար՝ որպէս քե Թեշրիֆաթնի ըսել է՝ յարգի մեկ անմի մը յանձնելու է: 1863 Դեկտ. 12/24:

ևափի հետևողներ⁽¹⁾։ Ունէին վերջապէս իրենց սիրած Պատրիարքները, օրինակի համար՝ «Աղաւնի» Ստեփանոս Պատրիարքը, Չուհաճեան Մատթէոս և փոքր ինչ ալ Գէորգ Գ. Կաթողիկոսները, որ իրենց մէկ քանիին միջոցով կրրցան կաթողիկոսանալ՝ մեծափառ հանդէսներով յուզարկուելով Տփսիս ու Էջմիածին. ունէին նաև իրենց սեպհական ազնուապետական տիրացուները, մանկածուները, հեճուպներն ու ամէն բանի միջնորդները, ունէին և ունէին տակաւին շատ յայտնի ու ծածուկ բաներ՝ իրե՛նցը եւ միա՛յն իրե՛նցը ։

Սեղանաւորներու այս դասակարգին մէջ՝ կը յիշուին նաև քսանեակ մը հայ-հօռոմներ, որպիսիներ շատ կային Փոքր-Ասիայի մէջ՝ մանաւանդ Ակնայ շուրջ գիւղերն ու մօտերը, թուի՝ Եզր կաթողիկոսի ատենէն մնացած ։ Այս հայ-հօռոմներէն կային Բիւթանիայի կողմերն ալ՝ մինչեւ

(1) Սիրուն Զբօսարան անուն հին ձեռագիրի մը մէջ կը գտնենք զուարճալի գրուցատրուքիւն եւ դասախօսութիւն մը՝ նոյն ժամանակուան գործածելի տար սեսակ ըմպելեաց ու ծխելեաց միջեւ այլաբանաբար, որ կը յանգի իրենց մեծ մասին ախտաւրճիտի մը ։

Ախտի կը դասապարտուին՝ ձեռագիրին լեզուով՝ «Գիճին եւ օղին՝ յԵՐՈՍՅԱ եւ ի նորին նահանգս, այն Ե ԶԵՆԿԻՍԱՆ. մեղքօշարակն՝ յԱԽԱ եւ ի նորին նահանգս, այն Ե ԱՆԱՏՈՐՈՒ. ԿՕՐԵԿՕՂԻՆ ի ՊՆՆՏՈՍ, եւ ի գաւառսն նորին, այն Ե ԳՐԵՐՄՔ եւ ԱԿԱԳԱ. ԳԱՐԵԶՈՒՐՆ Ի ՄՈՂՏԱՎԻԱ, եւ ի գաւառս նորին, այն Ե ՈՒՂԱԿ ԿՈՂՏԱՆ. ԲԱՅԶՈՒՐՆ՝ յԱՊԵՐՏԱՆԱՅՈՂՅԱ եւ ի նահանգս նորին, այն Ե ԷՏԻՐԵԿ. ԿՐԿՆԵՆԱՅՆ՝ ի ԵՆՂԵԱՅՈՂՏՈՍ եւ ի նահանգս նորին, այն Ե ԿԿՂԻԿՈՂՈՒ ։ ՍՈՒՐՆ սուրբ (Էպոս) Հասան Շազի առաջին անգամ ծանօթացուց ՄԿՏԻ Ի ԲԱՆՎԿԻՆ յասկորթիւնները, եւ ուստի եղաւ պաշտպան շահապը ԲԱՆՎԿԻՆՆԵՐՈՒՆ ։ ԸՍՏ ծիսաւնումնայի՝ 1554ին սկսան Պոլիսի մէջ քացուիչ հասարակաց ԲԱՆՎԿՆԵՐ՝ ինչպէս կը յիշե նաև ներհունն Յ. Համեհր։) առ իւր

1830ը և կան ալ դեռ՝ մանաւանդ կէսվէյի Օրթագիւղը, որոցմէ տեսած եմք Հալքի կղզիին աստուածաբանական Որթասօքս վարժարանին մէջ երկու ուսեալ սարկաւազներ, աշխարհարաւ աղէկ խօսող, այլ զբարաւ չգիտեն թէպէտեւ կը փափագին ուսանիլ: Պոլիսի հայ-հոռոմնե-րուն մէջ յիշելի ու ամիրապատիւ ոմն էր՝ 19րդ դարին սկիզբներն՝ Անաստաս աղան կամ ամիրան, երեւելի իր հարստութեամբն ու ազդեցութեամբ, որ հայ լեզուի թարգմանել տուաւ յունական Եկեղեցիին արարողութիւններն⁽¹⁾ (իրբ հայ՝ ազգով և յոյն՝ կրօնքով), ինչպէս

պահ զաճիոն և զպերն⁽²⁾ իբրեւ խորհրդակալ բարեկամ, և զծուխք (ծխախոս) ծառայ անձին կացուցանէ և զիւր արոն իշխանութեան հաստակ ի քաղաւորեալ ֆաղաֆե Կոստանդնուպոլիս: Չսոսա զամենեւին յիւրաքանչիւր վիճակս արտալսմեալ ինքն ևս զաճիոն և զպերն երեւան հաստակալ աշակից՝ և զծուխքն կամակասար կացուցեալ զծառայ ի սպասու՝ զարոն իւր հաստակին կացուցանէ ի Վիզանդ⁽³⁾:

Չուարձախօս քիբեաֆի մը գրիչէն ելած այս վկայութիւնը կը հաստակ քե 19րդ դարու կիսէն առաջ գշխաւոր ըմպելին ու ծխելին եւ եղեր ի Գ. Պոլիս՝ սուրճ և ծխախոս՝ աճիոնով ու պերնով համեմեալ: Քահվէն առաջին անգամ Պոլիս հաստակեցաւ 1554ին հաշկպցիի մը միջոցով, որ կանուանէր Շեմս՝ չէյի Շեքեչի անուն արարին խահվէյի գիւն ընելէն 300 սարի ետ: Տե՛ս Համեհր, պատմութիւն Օսմանեան բարգմ. J. J. Hellertի, հատ. 2. կէ 280:

⁽¹⁾ Հետեւեալը՝ դուռն է Անաստաս ամիրային սպել տուած յունակրօն և հայալեզու Մաշտոցին. —

Մ Ա Շ Տ Ո Յ

Հատրնախր հաւամամբ հանեալ ի մեծ Մաշտոցէն

Յունաց որ կոչի

Է Յ Խ Օ Լ Օ Յ Ի Օ Ե

Նորոգ քարգմանեալ և սրբագրեալ՝ աշխաստիրութեամբ Անաստասայ մեծիմաստ վարժապետին Յունաց և պատուելի Գրիգոր

տասնևմիերորդ դարին ամբողջովին և անձամբ կատարած էր այսպիսի թարգմանութիւն մը հայ-հոռոմ կարապետ Իշուր, որպէս կը գրէ Հ. Ղուկաս Ինճիճեան⁽¹⁾ :

Այսպէս՝ հայ-հոռոմութիւնն ալ ազգին մէջ քանի մը հարիւր և աւելի շատ տարիներու երեւոյթ մըն էր՝ նման ամիրայութեան, և այդ երկուքն ալ՝ գրեթէ ոչ ևս են նմանարազդ արար :



դարի Փեշքաւաշնեան. «Չանիւ ևւ արդեամբ բարեպաշտն ևւ սաս-
նուածասեր ստոաֆ Անաստաս աղայի, որ ի սուրբ Գեորգայ վանից
գիւղէն Ակնայ խղափին» :

Հրամանաւ Տեառն Ազաբանցեղոսի Սրբազան արեւպիսկո-
պոսի ևւ ճիւղերական Պատրիարքի Յունաց, սպազրեալ յՍրբագիւղ
1831, ՌՄ2 :

⁽¹⁾ Ի հասորն Բ. Ասիա, Մասն Ա. (Կէ 305) : Միևչեւ Կ. Պո-
լիսի առումը՝ նոյն մայրախղափին մէջ հիճնէն զսնուող Հայերը
կրօնով յոյն եղած էին մեծ մասամբ, որով հայ-հոռոմներու
մասն կը կազմէին : Տե՛ս Երեւակ 1861 հաս. Ժ. (Կէ 18) :

ԺԳ.

Ինչպէս նկատեցինք վերերն ալ՝ այս ամիրաներէն բացառաբար դուրս կիյնային՝ նախ մեծ Ամիրան Ղազէզ Յարութիւն, որուն պատմութիւնն՝ աղէկ գէշ գրուած է մասնաւոր գրքոյկով մը, և հոս գործիս չափը չներեր երկայնաբանել իր վրայ. ապա Տիւզեանք ու Չարպահանէյի միւս ջոջերը, վառողապետ Տատեանները, որոնց վրայ ևս կարծէ՛ գրել առանձինն, ճարտարապետ Պալեանները, որոնց վրայ լուսագոյն կրկար որ գրէր ազգականութիւն չունեցող անձ մը. Սէրվէրեան Յովհաննէս ամիրայ. Միսաք ամիրայ Միսաքեան սեղանաւոր և միւրեկիլի Փրկիչի Հիւանդանոցին, որ կառոյց Պոյաճըր գիւղի եկեղեցին և թաղուեցաւ անոր շրջափակին մէջ 1856ին: Գէորդ պէյ Երամեան՝ որ հանրային գործերու մէջ ալ բաւական ազդեցիկ ժրութիւն մը ցուցրնելէ կտք՝ քաշուեցաւ իր առաքինի տիկնոջն հետ Բարիդ և հոն ճոխաբար ապրեցաւ մինչև խոր ծերութիւնը, մինչ իր որդիներէն բարձրապատիւ Արրահամ փոշայ՝ Վոսիորի տիանց վրայ վարեց կենցաղ մը փառաւոր և հարուստ: Տատեան Յովհաննէս⁽¹⁾ պէյ՝ խոհեմ, ժիր, ազնուական և ձեռներէց անձնաւորութիւն մը, որ բացի նշանաւոր գործունէութիւններէ թէ՛ ի նպաստ Տէրութեան թէ՛ ի նպաստ իր սիրած տոհմին՝ երեք տարի անընդհատ կտակէ կղաւ մեքենական գիւտի մը և բոսորայի գիտունի մը համբե-

(1) 1847ին Տատեան Յովհ. ամիրայ՝ իր Յարութիւն Գարեգին որդիին հետ՝ արժուէի հրամանով ուղեւորեցաւ Եւրոպա՝ զննելու համար արժուէի գործարաններուն կարեւոր գործիք ու մեքենաներ:

բութեամբն և հանձարիմացութեամբ⁽¹⁾ . իր որդին Յարութիւն-Պարեգին փաշայ՝ նշանաւոր զիւանագէտ , կրքաւ միանգամայն արթնութեամբ ծառայել մինչ ի չունչ վախճանին թէ՛ Պետութեան թէ՛ ազգին , և բարին ու զեղեցիկը սիրելու իր առատաձեռնութեան երեսէն՝ վախճանեցաւ չունելոր վիճակի մէջ : Այս շարքէն ու հինէն կան նաև քանի մը հացապետներ , որոնցմէ էր՝ Նորատունկեան Յակոբ Գրիգոր Սիմէոն հայրերուն վարպետն՝ էֆեփճի պաշի Յարութիւն ամիրան⁽²⁾ , որուն խորանն էր (փախսնկա) այժմու Պէրպէրեան վարժարանն ի Սկիւտար՝ իր բոլորի ընդարձակ հողերովը :

Եւ անոնք ամէնն ալ՝ ամիրայարար կցորդ ու համապատիւ էին վերիններէն ամէնէն ջոջերուն , և միասին ի ժողով կը գումարուէին առհմային կարեւոր խնդիրներու համար , խնդիրներո՛ւ՝ պատրիարքարանի ու պատրիարքական փոփոխութեանց , եկեղեցիի ու թաղերու մատակարարական սնօրէնութեանց , դպրոցի , հիւանդանոցի , որբանոցի շինութեանց և այլն և այլն :

(1) 1844ին Վեհ. Սուլթան Մեհմետ արքան այցեց Նիկոմիդիա , Պրուսա եւ Միսիլլի՝ ուղեկցութեամբ Յովհաննէս եւ Թօղոս Տասեանց , Կարայեկ Պաշեանի , Յովհաննէս Սերփերեանի եւ Կարայեկ ու Յակոբ Տիզգեանց , որոնց իւրաքանչիւրին պարգևեց նաև աղափանդեայ սուփեր՝ ի վարձ իրենց հաւատարիմ ծառայութեանց :

(2) Այս այն Յարութիւնն է՝ որ ժամանակին տառներկունբուն մէջ ամենեկն աւելի պնդողն էր Ասուածասուր խիստ Պատրիարքին հրաժարելուն վրայ , այնպէս որ՝ երբ օր մը դարձեայ կը ժստր նոյն Պատրիարքին քի «անպատճառ պիտի տու հրաժարականը»՝ խօսարարոյ Պատրիարքն ա՛յ չդիմանալով «Եկո՛ւր՝ գե՛մ» կրսկ , եւ թուղթը կտռնէ՝ ու իրա՛ւ ալ կը գրէ , բայց հրաժարականն աւելի աղիսարեւր քան մը , հացապետ Յարութիւնին աստուածաբանութիւնը , զոր ինքն հացապետը միամտութեամբ առնելով՝ կը տանի փակեայ առ որ անկ է : Այսպէս՝ յանդուզն Յարութիւն ամիրայ յանգեսս կըլլայ իր ի՛սկ աստուածին հրամանատար :

Ամիրսաներուն և ամիրապատիւ աղաներուն թիւն ալ Օսմանեան պետութեան փառաւոր պաշտպանութեան ներքեւ՝ հետզհետէ աճելով և զբաւելով նախանձնելի ու արգասաւոր վստահութիւն մը՝ հասած է, 1800էն մինչև 1845ի ժամանակները, գրեթէ 150ի, որ կրրցած են ցայնվայր՝ իրենց պարզ և անայլանց (inaliénable) ճարտարմտութեամբ զիզել մե՛ծ հարստութիւն. վկայ՝ իրենցմէ մինչև ցայսօր կանգուն մնացած քանի մը մեծ կառուցուածներն ու փարանկրաները⁽¹⁾, որ կը կենան Պոլիսի ամիրայարնակ արուարձաններուն մէջ, վկայ՝ դարձեալ՝ Փոքր-Ասիայի ու Պոլիսի եկեղեցիներուն դպրոցներուն և վանքերուն իրենց նուիրած պէս պէս լիշատակները (մանաւանդ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին ու Ակնայ եկեղեցիներուն) և տպագրել տուած գիրքերն ու մշակել տուած հոգերն ու այգիները, թո՛ղ այն աճագին գումարներն ու գո՛տրեղէնները, զոր վստանցին անխնայարար թէ՛ իրենք թէ՛ իրենց սերունդներուն անփորձ ու հովսրսայ մասը: Հաստատուած զրոյց մը կայ՝ թէ Ղազէզ արկղիկ մը, շա՛տ ծանրագին պարունակութեամբ, աւանդարար ի պահ՝ դրած է եղեր Ս. Ռաչ Եկեղեցիին (ի Սկիւտար) աւանդատունը. իրեն ազգականացած ակնցի ամիրայ մը՝ օր մը իշխանարար բանալ կուտայ աւանդատունը ձեռամբ լուսարարապետ քահանային և զաղա պարպելով մէջինը՝ նոյն վիճակին մէջ կը փակէ արկղիկը, և կը ձգէ հոն դարձեալ ի պահ... Ղազէզ յտակացուցած

(1) Որոնց մին է նաև Գուճգարուշի Հայոց Պատրիարքարանի կից մեծ զախակաշէն ապարանք ձանկի ամիրային, որ Յումանեանի պատրիարքարանի օրով վերածուեցաւ վայելչարար ընդհանուր դիւանատունի:

էր կտակով այդ հարստութիւնն իր ազգականներուն և հիւանդանոցին :

Յետ իր վախճանին՝ արկղիկը բացուելով՝ յո՛յս անգամ չեն գտներ մէջը :

Ամիրայական սեղանակապտութիւն :

Կրտուի թէ ամիրայական այս անիրաւութեան ամօթալի յայտնութիւնը նախապատճառ մը եղած է՝ որ ազգին յառաջիմացներէն մաս մը հանրական ու եկեղեցական գործերու վարչութիւնն այս կարգի ամիրաներուն ձեռքէն առնելով՝ կանոնադէս, ընտրեալ վստահելի անձանց յանձնեն :

«Ամիրայք» տեսրակին սեղանաւորական⁽¹⁾ ցանկին մէջ՝ կերելին նաև քանի մը ջոջ Հրեաներու անուններն ալ . և հրեաներն՝ իբրև բազդակից հայերուն Օսմանեան Տէրութեան ինչպէս և բոլոր աշխարհներու մէջ՝ շատ ուրեք իմաստութեամբ մը գործակից ալ եղած են անոնց . դրամի գործերու առտնին կեանքի և առեւտուրի կողմէն՝ աշխարհի վարժապէ՛ճ այն Հրեաները : Քամոնոսոյ , Քաազբոյ և այլ նշանաւոր տուներ ունեցած են Հայերու հետ գործակցութիւններ : 1848ին՝ Կ . Պոլիս ի Ղաշաքիս հայազիր տպարան մը կը բանէր Ն . Տէ Քասրո հրեայ տունին ձեռքով , որ ցարդ Կ . Պոլիսի շնորհքով Հրեաներէն է : Այս տպարանէն՝ տեսած ենք Բանալի կալ պատասխաններ մտաւոր և գրաւոր բուարանութեան անուն փոքրիկ գիրք մը՝ տպուած 1848ին յտակ ու մանրագիր հա-

(1) 1865էն 1870 Կ . Պոլիսի եւրոպական մամուլն սկսած էր աղէկ չգրել սեղանաւոր Հայերուն վրայ՝ անշուշտ արեւմտեան եկամուտ նախանձով մը , որպէսզի Հայերն իյնան պէտուքեան ալիքն և գրամական ու վաճառական գործերն անցնին հեծեւար եւրոպացիներուն ձեռքը . . . :

յերէն, 51 էջ. նոյնպէս Պատմական և Բնօրհայրանոց անուն
հայերէն հատոր մը 363 էջ՝ տպուած նոյն տարին: Տը
Քասդրոյ տունէն ելած են՝ դրամատէր գիտուն և բժիշկ
անձնաւորութիւններ. արդ իսկ՝ Քասդրոյ եղբայր մին
տպարան մը կը բանեցունէ Ղալաղիա, Բէրչէմպէ բազար-
այս և Քամոնտոյ տուներուն գերեզմաններն ալ՝ Խա-
զիւղ Հայոց գերեզմանատան կից Հրէից հին գերեզմա-
նատունը կը գանձին՝ վաղելիակերտ շիրիմներով: Հրէից
թիւն հասած է հիմայ ընդ ամէնը 11 միլիօնի:

..

1828 Փետր. 10ին՝ Պարսկական թիւրքմէնոյ գիւ-
ղին մէջ հաստատուեցաւ՝ ընդ մէջ Ռուսաց և Պարսից
այն յալիսեհնակրան հաշտութեան պայմանագիրը, որուն եր-
րորդ յօդուածը կը տրամադրէր «կատարելապէս սեպհա-
կանացունել Ռուսաց Տէրութեան նրեանի խանութիւնն
յայս և յայն կոյս Երասխի, և Նոխիջեանի խանութիւնն
և իշխանութիւնը»: Այս պարագան՝ բարգաւաճութեան
մեծ մղում առաւ այդ նահանգին, որով բաւական ա-
տենէ ի վեր այդ տեղուանքը նմազեալ մեծութիւնն և
ճոխութիւնն Հայերու վերակառու պատճառ եզաւ պայ-
ծառանալուն Ռուսահայ կարգ մը մեծերու, որոնց մէկ
մասն անտանաւ ենք գործիս Ռուսահայոց վերաբերեալ
բաժիններուն մէջ: Այս փոփոխութեան քիչ նպաստ չմա-
տոց ներսէս Աշտարակեցի Արքեպիսկոպոսն (տալա կա-
թողիկոս), որ էր վիճակաւոր Հայոց Վրաստանեայց:
Ներսէս Արքեպիսկոպոս՝ որ իր փոքրիկ մարմնին մէջ կը
կրէր սէր ու կրօն մեծ սիրտ մը և մինչև ի շունչ վախ-
ճանին չձգեց գրիչն իր ձեռքէն⁽¹⁾ և սկզբունքն իր գլու-

(1) Անթիւ անհամար են ի՛ր իսկ մեռնով գրած պաշտօնակալն

խէն՝ ստացու, այս առիթով, Ռուսաց կայսրէն «Աղեքսանդրի Նեւսկոյ Արքայն կարգի հաղորդակցութիւն մը, որուն պարզեւագրին գրաբառ թարգմանութիւնը կը յեռուէք հոս⁽¹⁾ ի յիշատակ մեծանուն Օձեպլին, որ՝ ոչ մեծատուն⁽²⁾ (վասն զի դրամը չէր սիրեր) այլ մե՛ծ մարդ մը հանդիսացաւ մեր Հին օրերուն մէջ՝ Էջմիածինի Ս. Տունին Շահապեան այն: Մեծ պետերն՝ ուղղակի կազգեն իրենց ժամանակակիցներու մեծութեանց վրայ, և յաճախ պատճա՛ռն ալ կըլլան անոնց:

— Բարձրագոյն պարզեւագիր տուեալ Արքազան Ներսէսի վիճակաւոր արհի Եպիսկոպոսի Հայոց և Վրաստանեայց:

Արքազան Ներսէս Արհիեպիսկոպոս Հայոց

Ի բազմաց հետէ և ի բազում դիպուածս ցուցիւք դուք Տէրութեան Ռուսաց զյարգոյ Չեր մտերմութիւն, և մանաւանդ յայժմեան պատերազմին ընդ Պարսից, որոյ բարեյաջող վախճանն, որպէս յուսամ ես, ունի ի մօտոյ յանկ ելանել, զիոյթ ի մէջ առիք աշխատանօք մեծաւորս մեր, մինչև անձնատուր լեալ յանդիմանակաց վտանգին, հրամանատարն առանձին Կովկասեան զինուորական խմբոյ, ճէներալ ադիւդանի Պասկելիչն բազում անգամ ծանոյց ինձ զայսպիսի ձեր գովանի սխրագործութեանց յայտ արարեալ՝ թէ ի տիրել ամենաչն պատերազմական գործանութեանց՝ հանդիսացեալ իցէք անձամբ անձին առաւել նախանձաւոր օգտից Ռուսիոյ՝ հաս-

քուղքերը համակներն ու սեօրակները, կոկիկ ու մանրիկ արագագրութեամբ մը, որոնց մեկ ֆակին սեսած ենք սաս անդ:

(1) 1829ին ի 4. Պոլիս ձեռագրուած սեօրակի մը առնելով:

(2) 1849ին Ներսէս կարողիկոս Աշտարակեցի դրկեց 1000 թոյ ի Զմիւռնա ի նպաստ շինութեան Ս. Սեփականու եկեղեցիին:

տատուն պահելով ի միջի ժողովրդեան Հայոց զբարեհամ-
բոյր առ մեզ հարազատութիւն՝ ոչ միայն բարեխոն խոր-
հրդատուութեամբ և յորդորանօք, այլ և անձամբ իսկ
լինելով օրինակ, և ի նշանակ այսքան օգտակար նպաս-
տից ձերոց, և ի ցոյց յատուկ բարեհաճութեան առ մեր
ժողովուրդն Հայոց՝ իրաւունս վարկայ ևս հաղորդակցել
զձեզ կարգի սրբոյն Ազեքսանդրի նեւսկոյ, զորոյ զնշանան
ընդ այսմ յղելով առ ձեզ մեամ ձեզ բարեյօժար :

Ի բնագրին ստորագրեալ է իսկական ձեւամբ նորին
Կայսերական մեծութեան

ՆԻԿՈՂԱՅՈՍ

Ի Ս. Բեդրսպուրկ 1828 Յունուարի 25

Եւ ասոնց վրայ էր՝ որ նորագոյն եռանդով և հո-
գիով կազմուեցան, յիշեալ Ռուսահայ նահանգներուն մէջ,
ազնուական կամքեր՝ ազրբիւր ազնուական գործունէու-
թեանց և արդիւնական խորհրդոց՝ մեծատուններու և
հինաւուրց ազգատոհմերու մէջ :

••

Թուրքահայ ամիրաներուն շքադիր ածականներն էին՝
սկսելով զուկասեան «Լուսաճաճանէ»էն⁽¹⁾ վնեւախա՛ն,

(1) Օր մը՝ միամիտ Ղուկաս եպիսկոպոս մը գրել տալու հա-
մար աղետակաւ նամակ մը առ ծանիկ ամիրան՝ կերթայ Փէշք-
մալձեան Գրիգոր պատուելիին, և կը խնդրէ որ այդ նամակն
ինք պատուելին շարադրէ իր գեղեցիկ հայկաբանութեամբն, և
ամիրային ալ դնէ բացառիկ շխնուն մը. «Ի՞նչ կուզես որ դնեմ,
կըսէ պատուելին, պերճափա՞ն գրեմ» «Ձէ՛ պատուելի աւելի,
մեծ անուն մը դի՛ր», «Է՛յ գերափառ գրե՞մ», «Ձե՛, պատուելի՛,
աւելի մեծ» «Է՛յ ի՞նչ գրեմ» «Լուսաճաճանէ՛ ամիրա՛յ գրե՛» և
պատուելին ժպտելով մը կը ճաճանչարէ «լուսաճաճանէ՛ք, Լու-
սաշաւիղին հեղինակ անը՛յս և պիտի՛կ պատուելին:

բարեխա՛ն, պերճաշո՛ւք, պերճապսի՛ւ, պերճահասրա՛ւ, զերայա՛րգ, յարգաւեծա՛ր, զերապսի՛ւ, յարգաշո՛ւք, քիս-
տասագո՛ր, մեծագոյ՛ն, պերճախա՛ն, շեղազա՛ն, մեծահա-
ւա՛ն և այլն և այլն :

Վերջին սեղանաւոր ամիրաներէն մաս մը՝ 1839ին յատուկ գլխադրամ մը դնելով (ինք բեռ և քառասուն և ինն հազար հարիւր յիսուն և մէկ դրուշ)՝ Լոնտրայէն բե-
րել տուաւ, Պարոն Լըմուան վաճառականին ձեռքով, Էսերի քիճարեք անուն նաւ մը, և սկսաւ բանեցունել զայն մանաւանդ Սե ծովի նաւահանգիստները : Դժբաղ-
դարաբ այդ նաւը վտանդեցաւ Սամսոնի առջեւ, և որով-
հեաւ ասպնովագրուած էր 12000 լիրայի՝ կարճ դատա-
վարութենէ մը ետք սախին փոխարէնը⁽¹⁾ : Ասոր նման ուրիշ նաւաքական մեծ ձեռնարկներ ալ ըրած են, ինչպէս իրենցմէ մէկ քանին՝ Շիրքէթի-Քայրիյէի սկզբնաւորական գործողութեանց ու հաստատութեանն իսկ բաժնեկից եղած են : Այս վերջիններէն էր նաև մեր բեխիմնի հաճի Մկրտ-
աբի խալֆան՝ ծնած Կեսարիայի յայնժամու միակ հայա-
խօս Մանճուսուն զիւզը, և Կ. Պոլիս գալով՝ շատ երի-
տասարդ հասակին ճարտարակրթուած Գրիգոր և Կարա-
պետ Պալեան խալֆաներուն և Մ. Քարէլի խալապի ճարտարապետին ձեռքին տակ : Ինք շինած է քիչ առե-
նի մէջ մեծ անուն՝ իրրեւ միակ հայ բէգիմճին Կ. Պոլիսի
մէջ, իր շինուածապետութեամբ կառուցուած են Կ. Պո-
լիսի մեծ Պշլաններէն նորերը, Թարապիայի անդդիական
գեապանատունն և քանի մը եկեղեցիներ, ինչպէս Վեհ.
Սուլթան Մահմուտ կայսրին գեղեցիկ քիւրպիւն. մինչև
100 տարի ապրեցաւ ի Սկիւտար քաջողջ ձերութեամբ,
և կը վայելէր Հայ և Թուրք մեծամեծներու յարգանքը .
գրած ալ ենք իր վրայ հակիրճ կենսագրական մը 1899ին՝

(1) Ամիրայե, (էջ 42—48):

Բիւզանդիոնն օրագիրին 925 և 926 թիւերուն մէջ : Այս
հաճի Մկրտիչ Զարգեան ճարտարապետին կցորդ է նաև
Սրվաճի Պաշի Յովհաննէս խալֆան կեսարացի՝ Այվատեան
մականուանեալ, որ կը բնակէր Սկիւտար Իճատիյէի առա-
ջին բարձունքին գլուխն՝ ընդարձակ ապարանքի ու պար-
տէզի մը մէջ, և որ գլխաւոր պաշտպանն և ասպնջականն
էր Խրիմեան Վեհափառ Ս. Կաթողիկոսին Էջմիածինի
Ի Կ. Պոլիս : Ասոնց կարգին յիշատակելի է նաև Գրիգոր
Աղայ Ներսէսեան՝ նոյնպէս ի Սկիւտար բնակեալ, որ
Կարապետ Պալեանի և որդիներուն ճարտարապետութեան
ասպարէզէն ու ապա աշխարհէ ալ հրամարկէ ետք՝ իբր
յաջորդ շարունակեց անոնց գործը մեծ ճարպիկութեամբ,
և դիզեց քառորդ միլիոն ոսկիի մը չափ հարստութիւն.
ինքն ալ Բարերոցի էր և պարզ գործաւորական վիճակէ
մը բարձրացած :



Սուլթան Մահմուտ երկրորդի օրերուն կը փայլէր
նաև, արքունի նաւարանին մէջ, Տեմիրճիպաշի կարևոր
պաշտօնով՝ Տէմիրճիպաշի Գալուստ աղայ՝ Տէմիրճիպաշ-
եանց նահապետական գերդաստանին երկրորդ նախահայ-
րը, որ ունէր 13 զուակ, որոնցմէ Ենովք Տէմիրճիպաշ-
եան էր հայրը Սեպուհ և Թոսով Տէմիրճիպաշեանի, Կա-
րապետ Տէմիրճիպաշեան՝ հայրը բանաստեղծ-խմաստասէր
Եղիա Տէմիրճիպաշեանի, Յովհաննէս Տէմիրճիպաշեան՝
հայրը Գորեգին Տէմիրճիպաշեանի, Տնօրէն հեռա-
դրական ու Սլովատարական վարչութեան մէջ, և Գէորդ
Տէմիրճիպաշեան՝ հայրը Լեւոն Տէմիրճիպաշեանի, Տնօրէն
Հանր. պարտույց հաշուակալութեան մէջ :

Տէմիրճիպաշեան գերդաստանին առաջին նախահաւուն
էր՝ 18րդ դարուն մէջ՝ Գէորդ անուն քաջահոգի Վրաս-

տանցի մը . երբ Վրաստան բոլորովին պարտութեան մատնուեցաւ՝ ըստ ժամանակին սովորութեան գերիները գլխատուելու էին . Գէորգ ալ գերիներուն մէջ գանուելով՝ այն ինչ դահիճը կը պատրաստուէր լմնցունել զինքն ալ . «Շնորհեցե՛ք ինձի, գոչեց, իմ կեանքս՝ որ քերեւս իմ մեղեղես աւելի օգտակար պիտի ըլլայ ձեզի . եւ գործաւոր վարպէս մըն եմ»:

Կատարուեցաւ գերիին խնդրածը , և զրկեցին զինքն արքունի նաւարանն իրրև գործաւոր , ուր երկու տարի աշխատելէն ետք՝ անուանեցաւ դարբնապետ (Տէմիրճիպաշի) , Պոսթանճի-Պաշիի տիտղոսով , որ էր գլուխ Եէնիչէրիի կարգի մը , վասն զի Տէմիրճի պաշին իր հրամանին ներքև ունէր 4000 Եէնիչէրի :

